


059

1908

d-84



No 168 JUN 2009

205



[Handwritten signature]

2 June 1908
1904

12195

1911 at the ...
...
...

79/84

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

772

ՏԱՐԵՑՈՅՑ

1908

ՀԻՄՆԱԳԻՐ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1ԵՐԴ ՏԱՐԻ



ՏՈՄԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ
ՀԱՄՈՎ ԶՈՒԱՐՁԱԼԻՔՆԵՐ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ
ԼՈՒՍԱՏԻՊ ՊԱՏԿԵՐՆԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ
ՎԷՊԵՐ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ
ԽԱՂԵՐ, ԶԲՕՍԱՆՔՆԵՐ
ՀՐԱՊՈՒԹԻՉ ՆՈՒԷՐՆԵՐ
ԵՒՆ. ԵՒՆ. ԵՒՆ.



Կ. ՊՈԼԻՍ

Յպագրիէ
ՋԱՐԵՉ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հրատարակիչ
ՋԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

1907

13836

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

1908

M-25

ՆԱՀԱՆՁ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

ԲՈՒՆ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՆԱՀԱՆՁ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՏՆԱ.—ՏՆԲ.—4401—4402

ԵՒ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆՁ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՌՅԾԷ.—ՌՅԾԸ.—1357—1358




57116-66

739

անվ. 739




Տպագրիչ
ԶԱՐԵՆ ԴԵՐՄԵՐԵԱՆ



Տպագրիչ
ԶԱՐԴԱՐԵԱՆ ՔՐԱՏՈՒՆ

1907





БИБЛИОТЕКА
Варш. Е. П.

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ս. Ս. Ս. № 169



ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յ ՈՒՆ ՈՒԱՐ

ԻՐԱՆՈՒՆԻ ՍՅՆԻ — 31 ՕՐ

0		L
1	ԴՂ. Գ. օր պճգ. Ծննդ. եւ ԿԱՂԱՆԴ: Տարեմուտ 1908	14
2	Նահանջ Թուականին Կրտտ.ի. Յն*. Տօն Անուակց. Տեառն	15
3	ԴՂ. Գ. օր պահոց Ծննդեան	16
4	ԵՂ. Ե. օր պահոց Ծննդեան	17
5	Ուր. Ձ. օր պահոց Ծննդեան	18
6	Շք. ձրագալոյց Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Կրտտ.ի	19
7	† Կիր. Տօն Ծննդեան եւ Մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Կրտտ.ի: Յն. Յատուութիւն եւ Մկրտութ. Տեառն	20
8	† ԲՂ. Բ. օր ննդեան: Յիշատակ մեռելոց:	21
9	ԴՂ. Գ. օր Ծննդեան	22
10	ԴՂ. Գ. օր Ծննդեան	23
11	ԵՂ. Ե. օր Ծննդեան	24
12	Ուր. Ձ. օր Ծննդեան	25
13	Շ. Ի. օր Ծննդեան	26
14	† Կիր. Ը. օր Ծննդեան: Տօն Անուանակոչութեան Տեառն	27
15	ԲՂ. Տօն Ծննդեան Յովնանու Կարօպետին	28
16	ԴՂ. Ս. Պետրոսին, Վրասայ եպ. եւ Արիստղոսայ սարկ .	29
17	ԴՂ. Պահք	30
18	ԵՂ. Ս. Անտոնի Տգնաւորին	31
19	Ուր. Պահք	1
20	Շք. Ս. Թէոդոսի եւ Մանիկանցն եփեսոսի	2
21	† Կիր. Ա. Կիր. զկնի Ծննդեան	3
22	ԲՂ. Ս. Կիրակոսի, Յուդիտայի, Կորդիոսի, Պողիկտոսի	4
23	ԴՂ. Ս. Վահանայ Գողթնացւոյն, Եւզիմեայ կուսին, ելն.	5
24	ԴՂ. Պահք	6
25	ԵՂ. Ս. Տրիփոնի, Պարսամայ եւ Ոնոփրիոսի Տգնաւորացն	7
26	Ուր. Պահք	8
27	Շք. Սրբոցն Աթանասի եւ Կիրղի Հայրապետացն	9
28	† Կիր. Բ. Կիր. զկնի Ծննդեան	10
29	ԲՂ. Ս. Եւզիմէոսի, Մակարիոսի, Վաղեբրիոսի, Կանդ տ.	11
30	ԴՂ. Ս. Անդրէի զօրսվարին, Կալինիկոսի եւ Դիոմետայ	12
31	ԴՂ. Պահք	13
	ԵՂ. Ս. Անդրիանոսի եւ կնոջն Անատոլայ, Թէոդորոսի	

Փ Ե Տ Ր ՈՒ Ա Ր

ՇՈՒՊԵԹ — 29 ՕՐ

0		L
1	Ուր. Պահր	
2	Շք. Ս. Գրիգորի Աստուածարանին	14
3	† Կիր. Գ. Ծննդեան, Բարեկենդան պահոց Առաջաւորաց	15
4	Բշ. Ա. օր պահոց Առաջաւորաց	6
5	Բշ. Բ. օր պահոց Առաջաւորաց	17
6	Դշ. Գ. օր պահոց Առաջաւորաց	18
7	Կշ. Դ. օր պահոց Առաջաւորաց	19
8	Ուր. Ե. օր պահոց Առաջաւորաց, Յովնանու Մարգարէին	20
9	Շք Ս. Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին	21
10	† Կիր. Դ. Կիր զկնի Ծննդեան	22
11	Բշ. Ս. Աստուածաց զօրավարացն	23
12	Գշ. Ս. Սուրբիասեանց եւ Ոսկեանց քհնց.	24
13	Դշ. Պահր	25
14	† Եշ. Տեառներնդառջ	26
15	Ուր. Պահր	27
16	Շք. Ս. Խահակայ Հայրապետին մերոյ	28
17	† Կիր. Ե. զկնի Ծննդեան	29
18	Բշ Ս. Մարկոսի եպ. Պիոն քհ. Կիւրղի եւ Բենիամինի	1
19	Գշ. Ս. Ղեւոնդեանց քահանայից	2
20	Դշ. Պահր	3
21	† Եշ. Ս. Վարդանանց զօրովարացն եւ 1036 վկայիցն	4
22	Ուր. Պահր	5
23	Շք. Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովոյն 150 հայրապետացն	6
24	† Կիր. Ա. Բառասնորդաց, Բու՛ն Բարեկենդան: Եւս. Յն.	7
25	Բշ. Ա. օր Մեծ Պահոց	8
26	Դշ. Բ. օր Մեծ Պահոց	9
27	Դշ. Գ. օր Մեծ Պահոց	10
28	Եշ. Դ. օր Մեծ Պահոց	11
29	Ուր. Ե. օր Մեծ Պահոց	12
		13

Մ Ա Ր Տ

ՄԱՐԹ — 31 ՕՐ

0	
1	Շք. Զ. օր Մեծ Պահոց. Ս. Թէոդորոսի զօրավարին
4	† Կիր. Բ. Բառասնորդաց եւ Է. օր Մեծ Պահոց
3	Բշ. Ը. օր Մեծ Պահոց
4	Գշ. Թ. օր Մեծ Պահոց
5	Դշ. Ժ. օր Մեծ Պահոց
6	Եշ. ԺԱ. օր Մեծ Պահոց
7	Ուր. ԺԲ. օր Մեծ Պահոց
8	Շք. ԺԴ. օր Մեծ Պահոց, Ս. Կիւրղի Երուսաղ. հայրապ.
9	† Կիր. Գ. Բառասնոր. ԺԴ. օր Մեծ Պահոց: Անառակին
10	Բշ. ԺԵ. օր Մեծ Պահոց
11	Գշ. ԺԶ. օր Մեծ Պահոց
12	Դշ. ԺԷ. օր Մեծ Պահոց
13	Եշ. ԺԸ. օր Մեծ Պահոց
14	Ուր. ԺԹ. օր Մեծ Պահոց
15	Շք. Ի. օր Մեծ Պահոց, Ս. Յովհաննու Երուսաղիմայ հայրապ.
16	† Կիր. Դ. Բառասնորդաց եւ ԻԱ. օր Մեծ Պահոց
17	Բշ. ԻԲ. օր Մեծ Պահոց
18	Գշ. ԻԳ. օր Մեծ Պահոց
19	Դշ. ԻԴ. օր Մեծ Պահոց
20	Եշ. ԻԵ. օր Մեծ Պահոց
21	Ուր. ԻԶ. օր Մեծ Պահոց
22	Շք ԻԷ. օր Մեծ Պահոց: Սրբոց Բառասնից Մանկանց:
23	† Կիր. Ե. Կիր. Բառասնորդաց եւ ԻԸ. օր Մեծ Պահոց.
24	Բշ. ԻԹ. օր Մեծ Պահոց
25	Գշ. Լ. օր Մեծ Պահոց
26	Դշ. ԼԱ. օր Մեծ Պահոց
27	Եշ. ԼԲ. օր Մեծ Պահոց
28	Ուր. ԼԳ. օր Մեծ Պահոց
29	† Շք. ԼԴ. օր Մեծ Պահոց: Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուս.
30	† Կիր. Զ. Կիր. Բառասնորդաց, եւ ԼԵ. օր Մեծ Պահոց
31	Բշ. ԼԶ. օր Մեծ Պահոց

ԱՊՐԻԼ

ՆԻՍԱՆ — 30 ՕՐ

0

1	Գշ. ԼԵ. օր Մեծ Պահոց	14
2	Գշ. ԼԸ. օր Մեծ Պահոց	15
3	Եշ. ԼԹ. օր Մեծ Պահոց	16
4	Ուր. Խ. օր Մեծ Պահոց	17
5	Շք. Յիշատակ Ղազարու:	18
6	† Կիր. ԾԱՂԿԱԶԱՐԴ. Պահր. Յն. եւս ԾԱՂԿԱԶԱՐԴ	19
7	† Աւագ Բշ. Աւետումն Ս. Աստուածածնի: Պահր	20
8	Աւագ Գշ. Յիշատակ տասն կուսանաց. Պահր	21
9	Աւագ Գշ. Պահր	22
10	† Աւագ Եշ. Յիշ. ընկրեաց Տեառն մերոյ Յս.ի Բս.ի Պահր	23
11	Աւագ Ուր. Յիշ. Զարչարանաց Խաչի. եւ Թղմի Յս.ի Բս.ի	24
12	Աւագ Շք. Ճրագայրց Զատկի. Նաւակատիք յերեկոյնի	25
13	† Կիր. ԶԱՏԻԿ: Յարուհիւն Տեառն մերոյ Յս.ի Բս.ի	26
14	† Բշ. Բ. օր Զատկի Յիշատակ Մեռելոց	27
15	† Գշ. Գ. օր Զատկի	28
16	Գշ. Դ. Զատկի	29
17	Եշ. Ե. Զատկի	30
18	Ուր. Զ. օր Զատկի	1
19	Շք. Է. օր Զատկի Յիշ. գլխատման Յովնանու Մկրտչին	2
20	† Կիր. Ը. օր Զատկի: Նոր Կիրակի, կամ կրկնագատիկ	3
21	Բշ. Թ. օր Յինանց	4
22	Գշ. Ժ. օր Յինանց	5
23	Գշ. ԺԱ. օր Յինանց: ՏՃ. Խորէլէզ	6
24	Եշ. ԺԲ. օր Յինանց	7
25	Ուր. ԺԳ. օր Յինանց	8
26	Շք. ԺԴ. օր Յինանց	9
27	† Կիր. Գ. ԺԵ օր Յինանց Տօն Աշխարհամատրան	10
28	Բշ. ԺԶ. օր Յինանց	11
29	Գշ. ԺԷ. օր Յինանց	12
30	Գշ. ԺԸ. մր Յինանց	13

ՄԱՅԻՍ

Մ Ա Յ Ը Ս — 31 ՕՐ

0

1	Եշ. ԺԹ. օր Յինանց	14
2	Ուր. Ի. օր Յինանց	15
3	Շք. ԻԱ. օր Յինանց	16
4	† Կիր. Դ. Կիրակի: Կարմիր Կիրակի. ԻԲ. օր Յինանց	17
5	Բշ. ԻԳ. օր Յինանց	18
6	Գշ. ԻԴ. օր. Յինանց	19
7	Գշ. ԻԵ. օր Յինանց	20
8	Եշ. ԻԶ. օր Յինանց	21
9	Ուր. ԻԷ. օր Յինանց	22
10	Շք. ԻԸ. օր Յինանց	23
11	† Կիր. Ե. Կիրակի. ԻԹ. օր Յինանց. Տօն Երեւման Ս. Խ	24
12	Բշ. Լ. օր Յինանց	25
13	Գշ. ԼԱ. օր Յինանց	26
14	Գշ. ԼԲ. օր Յինանց	27
15	Եշ. ԼԳ. օր Յինանց	28
16	Ուր. ԼԴ. օր Յինանց	29
17	Շք. ԼԵ. օր Յինանց	30
18	† Կիր. Զ. Կիրակի: ԼԶ. օր Յինանց	31
19	Բշ. ԼԷ. օր Յինանց	1
20	Գշ. ԼԸ. օր Յինանց	2
21	Գշ. ԼԹ. օր Յինանց	3
22	† Եշ. Խ. օր Յինանց: Համբարձմն. Տեառն մերոյ Յս.ի Բս.ի	4
23	Ուր. ԽԱ. օր Յինանց. Պահր	5
24	Շք. ԽԲ. օր Յինանց	6
25	† Կիր. ԽԳ. օր Յինանց. Երկրորդ Ծաղկազարդ	7
26	Բշ. ԽԴ. օր Յինանց	8
27	Գշ. ԽԵ. օր Յինանց	9
28	Գշ. ԽԶ. օր Յինանց	10
29	Եշ. ԽԷ. օր Յինանց: Երկնային վիճակ	11
30	Ուր. ԽԸ. օր Յինանց	12
31	Շք. ԽԹ. օր Յինանց	13

Յ Ո Ւ Ն Ի Ս

ՀԱԶԻԿԱՆ. — 30 ՕՐ

0		L
1	† Կիր. Ծ. օր Յինանց, Հոգեգալուստ. Պենտեկոստէ	14
2	Բշ. Բ. օր Հոգեգալուստեան, Պահր	15
3	Գշ. Գ. օր Հոգեգալուստեան, Պահր	16
4	Դշ. Դ. օր Հոգեգալուստեան, Պահր	17
5	Եշ. Ե. օր Հոգեգալուստեան, Պահր	18
6	Ուր. Զ. օր Հոգեգալուստեան, Պահր	19
7	Շր. Է. օր Հոգեգալուստեան, Պահր	20
8	† Կիր. Ա. Կիր. Յարութեան Եղիայ մարգարէին	21
9	Բշ. Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց	22
10	Գշ. Սրբոց կուսանացն Գայլանեանց	23
11	Դշ. Պահր	24
12	Եշ. Սրբոցն Յովհան. Կարապետին եւ Աթանազիոսեայ եպիս	25
13	Ուր. Պահր	26
14	Պ. Սրբ. Հորն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, յիշ. եւն ի վր.	27
15	† Կիր. Բ. Կիր. տօն Կանուղիկէ սրբոյ Էջիմանի	28
16	Բշ. Սրբոց մանկանցն Բեթլեհեմի, Ահալիոսի վկային	29
17	Գշ. Սրբոց կուսանացն Նունեայ եւ Մանեայ	30
18	Դշ. Պահր. Լու. Յովիս	1
19	Եշ. Սրբ. իշխնցն. Սահակայ եւ Մեսրոպայ եւ սրբ. վկայիցն	2
20	Ուր. Պահր	3
21	Շր. Սրբոցն Կերեսի հայրապետին մերոյ եւ Խաթայ եպիս.	4
22	† Կիր. Գ. Կիր. Բարեկենդան Պահոց Լուսաւորչի	5
23	Բշ. Սրբ. Եպիփանու Կիպրացոյն, Բարեւոյ հայրապետին	6
24	Գշ. Սրբ. Կոստանդիանոսի ճագաւորին եր մօրն Հեղինեայ	7
25	Դշ. Պահր	8
26	Եշ. Սրբ. Թէոդոտոսի, Թալիլեայ բժշկին եւ եօթն կուսնցն.	9
27	Ուր. Պահր	10
28	† Շր. Գիւտ Նշխարաց Սրբ. Հորն մերոյ Գրիգորի Լուսաւորչն.	11
29	† Կիր. Դ. զկնի Հոգեգալուստեան	12
30	Բշ. Սրբոցն. Անտոնեանոսի, Թէոփիլոսի, Անիկոսի	13

Յ Ո Ւ Լ Ի Ս

ԹԷՄՄՈՒՋ — 31 ՕՐ



0		L
1	Գշ. Սրբ. Դանիէլի մարգարէին եւ երկոց մանկանցն Սեղր.	14
2	Դշ. Պահր	15
3	† Եշ. Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ	16
4	Ուր. Պահր	17
5	Շր. Սրբոցն. Տրդատայ ճագաւորին, Աշիէն տիկնոջ	18
6	† Կիր. Ե. Կիր. զկնի Հոգ. Գիւտ տօնոյ Ս. Ած. ածնի	19
7	Բշ. Սրբոցն. Կալիստրատոսի եւ քառասուն եւ ինը վկայն.	20
8	Գշ. Սրբոցն. Զարբարայ մարգարէին	21
9	Դշ. Պահր	22
10	Եշ. Սրբոցն Եղիսէի Մարգարէին	23
11	Ուր. Պահր	24
12	Շր. Սրբ. երկուստեան առաքելոցն Բրիտոսի եւ Պոզուսի	25
13	† Կիր. բարեկենդան պահոց վարդապետի	26
14	Բշ. Ա. օր պահոց վարդապետի	27
15	Գշ. Բ. օր պահոց վարդապետի	28
16	Դշ. Գ. օր պահոց վարդապետի	29
17	Եշ. Դ. օր պահոց վարդապետի	30
18	Ուր. Ե. օր պահոց վարդապետի	31
19	Շր. յիշատակ տապանակին հոյ եւ Տօն Նորոյ Սր. եկղ.	1
20	† Կիր. վարդապետ. Ալիսկերպու Թիւն Տիառն մերոյ Յուի	2
21	† Բշ. Բ. օր վարդապետի Յիշատակ մեռելոց	3
22	Գշ. Գ. օր վարդապետի	4
23	Դշ. Պահր	5
24	Եշ. Սրբոցն Եսայեայ մարգարէին	6
25	Ուր. Պահր	7
26	Շր. Սրբոցն. Թադէոսի առաքելոյն եւ Սանդիտայ Կուսին	8
27	† Կիր. Բ. զկնի վարդապետի	9
28	Բշ. Սրբոցն. Կրիստոսի եպիս. եւ քառասուն եւ հինգ վկայն.	10
29	Գշ. Սրբոցն. Աթանազիոսեայ եպիս. եւ տասն աշակերտաց	11
30	Դշ. Պահր	12
31	Եշ. Սրբ. նախահարցն Ազաժայ, Սեթայ, Ենոփայ, Նոյի,	13

ՕԳՈՍՏՈՍ

ԱՂՍՍԹ-ՈՍ — 31 Օր

0		L
1	Ուր. Պահր	14
4	Շք. Սրց. որդւոց եւ թողանց Սրցն. Գրիգորի Լուսաւորչին	15
3	† Կիր. Գ. Կիր. զկնի Վարդավառի	16
4	Բշ. Սրց. Մակարայեցւոյն՝ Եղիազարու բնիյն. Շամունեայ	17
5	Գշ. Սրց. Երկոտասան մարգարէիցն՝ Ովսեայ, Ասովսեայ,	18
6	Դշ. Պահր	19
7	Եշ. Սրցն. կուսանացն Սոփիայ եւ երից դստերացն՝ Պիստ.	20
8	Ուր. Պահր	21
9	Շք. Եփեսոսի Սր. Ժողովոյն՝ երկու հարիւր հայրապետացն	22
10	† Կիր. Գ. զկնի Վարդավառի, Բար. պահոց Ս. Ած.ածնի	23
11	Բշ. Ա. օր պահոց Ս. Աստուածածնի	24
12	Գշ. Բ. օր պահոց Ս. Աստուածածնի	25
13	Դշ. Գ. օր պահոց Ս. Աստուածածնի	26
14	Եշ. Դ. օր պահոց Ս. Աստուածածնի	27
15	Ուր. Ե. օր պահոց Ս. Աստուածածնի	28
16	Շք. Տօն Շողակաթի Սրջ Էջմիածնի, ըստ տեսիւան Ս. հօրն	29
17	† Կիր. Վերափոխումն Սուրբ Աստուածածնի	30
18	† Բշ. Բ. օր Վերափոխման, Յիշատակ մեռելոց	31
19	Գշ. Գ. օր Վերափոխման	1
	Տարնդարձ Գահակալութեան Ոգոստոսափառ Հազի Սուլթան	
	ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ Կայսեր Թուրքիոյ	
20	Դշ. Գ. օր Վերափոխման Պահր	2
21	Եշ. Ե. օր Վերափոխման	3
22	Ուր. Զ. օր Վերափոխման	4
23	Շք. Է. օր Վերափոխման	5
24	† Կիր. Ը. օր Վերափոխման	6
25	Բշ. Թ. օր Վերափոխման	7
26	Դշ. Սրց. Յովակիմայ եւ Աննայի ծնողաց Սր. Ած.ածնի	8
27	Գշ. Պահր	9
28	Եշ. Սրբոյն Երեմիա մարգարէին	10
29	Ուր. Պահր	11
30	Շք. Սրց. Առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ Տմաւոնի	12
	Տարնդարձ Եննդեան Ոգոստոսափառ Հազի Սուլթան	
	ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ Կայսեր Թուրքիոյ	
31	† Կիր. Գ. Կիրակի զկնի Վերափոխման. Գիւտ Գօտւոյ	13

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԻԼՈՒԼ — 30 Օր

0		L
1	Բշ. Սրց. վկայիցն Ստեփանոսի ունեցւոյն, Գոհարինեայ,	14
2	Գշ. Սրց. մարգարէիցն Եզեկիէի, Եզրի եւ Նարարիայ	15
3	Դշ. Պահր	16
4	Եշ. Սրցն. Յովհաննու Կարապետին եւ Յորայ արդարոյն	17
5	Ուր. Պահր	18
6	Շք. Նիկիոյ Սր. Ժողովոյն եւ 318 հայրապետացն	19
7	† Կիր. Գ. Կիր. զկնի Վերափոխման պահոց Ս. Խաչի	20
8	† Բշ. Ա. օր պահոց Ս. Խաչի: Են. Ս. Ած.ածնի յԱննայէ	21
9	Գշ. Բ. օր պահոց Ս. Խաչի	22
10	Դշ. Գ. օր պահոց Ս. Խաչի	23
11	Եշ. Դ. օր պահոց Ս. Խաչի	24
12	Ուր. Ե. օր պահոց Ս. Խաչի	25
13	Շք. Տօն Սրբոյ Եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչի	26
14	† Կիր. ԽԱՉՎԵՐՍՅ	27
15	† Բշ. Տօն Խաչի: Յիշատակ Մեռելոց	28
16	Գշ. Տօն Եկեղեցւոյ	29
17	Դշ. Տօն Եկեղեցւոյ: Պահր	30
18	Եշ. Տօն Եկեղեցւոյ	1
19	Ուր. Տօն Եկեղեցւոյ: Պահր	2
20	Շք. Տօն Խաչի	3
21	† Կիր. Բ. զկնի Խաչի: Բարեկն. պահոց Վարազայ Խաչի	4
22	Բշ. Պահր: Սրցն. Մամասայ, Փիլիկոսիմոնի եւ Սիմէոնի	5
23	Գշ. Պահր: Սրց. կուսանացն Փեփրոնեայ եւ Մարիանեայ	6
24	Դշ. Պահր	7
25	Եշ. Սրց. հայրապետ. Բարադամու, Անթիմոնի եւ Երանոսի	8
26	Ուր. Պահր	9
27	Շք. Սրցն. Գէորգայ զօրավարին, Անդիմոսի եւ Երանոսի	10
28	† Կիր. Գ. զկնի Խաչի: Վար. Ս. Խաչ: Ա. Կիր. Եօժն 2.	11
29	Բշ. Սրցն. Դաւթի Դվնեցոյն եւ վկայիցն Համբէոսի	12
30	Գշ. Սրցն. Եւստաքէոսի, եւ կնոջն Թէոփիստայ	13

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԵՐԻՆԻ ԷՎԷԷԼ — 31 ՕՐ

0		
1	ԴՉ. Պահք	
2	ԵՉ. Սրբոց իշխանացն Աահակայ եւ Մեսրոպայ:	14
3	Ուր. Պահք	5
4	Շք. Սրց. Եօթանասուն եւ երկու աշակերտացն Բա.ի	16
5	† Կիր. Դ. Կիր. զկնի խաչի: Բ. Կիր. Եօթն շարաձուց	17
6	ԲՉ. Սրցն. Փոկատու հարպետին եւ երանոսի հետեւողին	18
7	ԴՉ. Սրց կուսանայն Թեղի, Վարվառեայ եւ Պեղիբեայ	19
8	ԴՉ. Պահք	20
9	ԵՉ. Սրց. Պանդալէոնի բժիշկին, Երմոզեայ քահանային	21
10	Ուր. Պահք	22
11	Շք. Սրց. Թարգ. մերոց Մեսրոպայ, Եղիշէի, Մովսէսի	23
12	† Կիր. Ե. Կիր. զկնի խաչի: Դ. Կիր. Եօթն շարաձուց	24
13	ԲՉ. Կիւտ նշխարաց Գրիգորիսի Կաթողիկոսին	25
14	ԴՉ. Սրց. Առաքելոյն Անանիայի, Մատթէի, Բաւնաբայ	26
15	ԴՉ. Պահք	27
16	ԵՉ. Սրց. Գիոնէսիոսի Արիսպագացւոյն,	28
17	Ուր. Պահք	29
18	Շք. Սրց. Աւետարանացն Մատթէոսի, Մարկոսի,	30
19	† Կիր. Զ. Կիր. զկնի խաչի: Դ. Կիր. Եօթն շարաձուց	31
20	ԲՉ. Արցն. Զուհիանոսի քննչին. Յովսեփայ Աս. հօրն	1
21	ԴՉ. Սրց. Թէոդոտոնի, Զէտոնի, Մակարայ, Եւթորսեայ	2
22	ԴՉ. Պահք	3
23	ԵՉ. Սրց. Խարիթեանց, եւ Սրց. վկայիցն Արտեմեայ,	4
24	Ուր. Պահք	5
25	Շք. Սրց. երկուստան վրդպտցն, Ռեթէոսի, Գիոնէսիոսի	6
26	† Կիր. Է. Կիր. զկնի խաչի: Գիւտ Խաչ	7
27	ԲՉ. Սրցն. Անաստասայ, Վարոսի Թէոդոտեայ եւ որդւոց	8
28	ԴՉ. Սրցն. Հիպիբիբեանց, որք ի Սամուսատ կատարեցան	9
29	ԴՉ. Պահք	10
30	ԵՉ. Սրցն. Սեւերիանոսի Սեբաստ. Բարերայ ձերոյն	11
31	Ուր. Պահք	12
		13

Ս Ե Կ Ի Ր Ե Դ Չ

ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԵՐԻՆԻ ՍԱՆԻ — 30 ՕՐ

0		
1	Շք. Սրբոյն Յովհաննու Ոսկերեանին	
4	† Կիր. Ը. Կիր. զկնի խաչի: Զ. Կիր. Եօթն շարաձուց	
3	ԲՉ. Սրցն. Ասեփանոսի Հոռմայ քահանայապետին	
4	ԴՉ. Սրցն. Ակիբսիմիայ եպիսկ. Յովսեփայ քահանային	
5	ԴՉ. Պահք	
6	ԵՉ. Սրց. հայրապետացն Մեսրոփանոսի, Աղեքսանդրոսի	
7	Ուր. Պահք	
8	Շք. Սրց. Լրեշոակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի	
9	† Կիր. Թ. Կիր. զկնի խաչի: Է. Կիր. Եօթն շարաձուց	
10	ԲՉ. Սրց. Մեխիտոսի հայրապետի Միմասայ եգիպտացւոյն	
11	ԴՉ. Սրց. Գեմետրեայ վկային եւ Բասիլիկոսի քահանային	
12	ԴՉ. Պահք	
13	ԵՉ. Սրց. Գուրիասայ, Սամուռասայ, եւ Արիբայ սրկզին.	
14	Ուր. Պահք	
15	Շք. Սրբոց սոռաբիոցն Անդրէի եւ Փիլիպպոսի	
16	† Կիր. Ժ. Կիր. զկնի խաչի: Բարեկենդան պնց. Յիսնկց.	
17	ԲՉ. Ա. օր պահոց Յիսնակաց	
18	ԴՉ. Բ. օր պահոց Յիսնակաց	
19	ԴՉ. Գ. օր պահոց Յիսնակաց	
20	ԵՉ. Դ. օր պահոց Յիսնակաց	
21	† Ուր. Ե. օր պահոց Յիսնակաց, Ընծայումն Ս. Ած.ի	
22	Շք. Ամենայն սրբոց հնոց եւ նորոց յայտնից եւ անյայտնից	
23	† Կիր. ԺԱ. Կիր. զկնի խաչին	
24	ԲՉ. Սրց. կուսանացն Յովիանեայ եւ Վասիլուհայ	
25	ԴՉ. Սրց. Զուհիանոսի քննչին., Տարագրոսի, Պրորոսի,	
26	ԴՉ. Պահք	
27	ԵՉ. Սրց. Կղեմայ հայրապետին, Բագարատայ Տոռմենայ	
28	Ուր. Պահք	
29	† Շք. Սրց. Առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի	
30	† Կիր. Բ. Կիր. զկնի Յիսնակաց	



Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

ԳՆԱՆՈՒՆԻ ԷՎՎԷԼ — 31 00

0		
1	Բշ. Արցն. Գենարիոսի եպիսկ. Մերկերիոսի զինաւորին	14
2	Գշ. Արցն. Կուռնելիոսի հարիւրապետին եւ նմաւոնի ազգ.	15
3	Դշ. Պահր	16
4	Եշ. Արցն. հարցն եզիպտաց. Պօղոսի, Պօղայ, Մակարայ,	17
5	Ուր. Պահր	18
6	Շր. Արցն. Նիկողայոսի սրանչելազործ հայրապետին	19
7	† Կիր. Դ. Կիր. զկնի Յիսնու Բարիկն. պահոց Ս. Յակոբայ	20
8	Բշ. Ա. օր պհց. Ս. Յակոբայ: Արցն. Մինասայ, Երմոզինեայ	21
9	† Գշ. Բ. օր պհց. Ս. Յակոբայ: Յր. Ս. Ած. ածնի յԱննայէ	22
10	Դշ. Պահր	23
11	Եշ. Արց. Եւստրատէոսի, Օգսենտիոսի, Եւզինէոսի,	24
12	Ուր. Պահր	25
13	Շր. Արցն. Յակոբայ Մծրնայ հայրապետին, Մելիտոսի	26
14	† Կիր. Դ. Կիր. զկնի յիսնակաց	27
15	Բշ. Արց. հայրապետացն Իգնատիոսի, Աղղէի, Մարուդայի	28
16	Դշ. Արց. Թէոպոմպոսի եպիսկ. Թէոփնայ վկային, Բաստսի,	29
17	Դշ. Պահր	30
18	Եշ. Արց. Կուստանոսն Էնդոսի եւ Դոմնայի. Գղերիկոսի	31
19	Ուր. Պահր: Լո. տարեմուտ 1909 Թուրն Յունուար	1
20	Շր. Արցոյն նախավկայ եւ ի Բս. հաւատացեալ Արգարու	2
21	† Կիր. Ե. Կիր. զկնի Յիսնակաց	3
22	Բշ. Արցն. Աբրահամու եւ Խորհնայ, Կոզմայի եւ Դամիանոսի	4
23	Գշ. Արցն. Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն	5
24	Դշ. Պահր	6
25	Եշ. Արցն. Ստեփաննոսի նիսկն. եւ առաջին մարտիրոսին	7
26	Ուր. Պահր	8
27	Շր. Արց. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի	9
28	† Կիր. Զ. Կիր. զկնի Յիսնակաց	10
29	Բշ. Արց. որդւոց Որոտման Յակոբայ առաքելոյն	11
30	Գշ. Ա. օր պահոց Ծննդեան	12
31	Դշ. Բ. օր պահոց Ծննդեան	13

Ժամանակի վրայ

Պ Ի Տ Ի Ճ Ա Ռ Է

Ե. Ե. ՊԱՐՈՆԵԱՆ

Ամէն բանի ժամանակը կայ, կ'ըսէ ժողովողը: Ժամանակ խնդարու, ժամանակ լալու, ժամանակ խօսելու, ժամանակ լսելու, ժամանակ քննաւարու, ժամանակ արթննալու, ժամանակ աշխատելու, ժամանակ հանգչելու, ժամանակ կարելու, ժամանակ քակելու կարկտանքը, ժամանակ պառկելու, ժամանակ ելլելու:

Շատ իրաւունք ունի ժողովողն, որուն կարծեաց ո՛չ միայն հակառակ քուէ չեմ տար, այլ նաեւ բոլոր ուժովս կը համակերպիմ, և մեր ընտանեաց մէջ տարածելու նպատակաւ այս ճշմարտութիւնն՝ կը կրկնեմ թէ՛ ամէն բանի ժամանակը կայ, ժամանակ կուռելու, ժամանակ հաշտուելու, ժամանակ սպասուհին ձեծելու, ժամանակ շոյելու, ժամանակ ափուսինն կործանելու, ժամանակ ամուսինն կանգնելու, ժամանակ ձեր թեւերն, ուսերն ու կուրծքերն արգոյ հասարակութեան ցոյց տալու, ժամանակ ձեր թեւերն, ուսերն ու կուրծքերն արգոյ հասարակութենէն ծածկելու, ժամանակ պարելու, ժամանակ ուղիղ քալելու, ժամանակ սուտ խօսելու, ժամանակ ճշմարիտ

խօսելու, ժամանակ հագուելու, ժամանակ չհագուելու, ժամանակ պճնասէր ըլլալու, ժամանակ պարզասէր ըլլալու, ժամանակ կերակուր եփելու, ժամանակ կերակուրը կերցնելու, վերջապէս ժամանակ ամէն բանի, որ կ'ըսէ ժողովողը, որ կ'ըսեմ նաեւ ես:

Ներեցէ՛ք ինձ ուրեմն հարցնել ձեզ, ո՛ր տիկնայք, թէ ունի՞ք դուք ձեր տուներուն մէջ մէյ մէկ ժամանակացոյց որուն մէջ նշանակուած ըլլան ձեր աշխատելու և հանգչելու ժամերը, քնանալու և արթնալու ժամերը, խնդալու և լալու ժամերը:

Երկրորդ անգամ ներեցէ՛ք ինձ պատասխանել ձեզ թէ չունիք ասանկ ժամանակացոյց մը: Թեւերս ձեր մէջ գտնուին կանայք որ ունենան, բայց ես տեսած չեմ, և ասոր համար ալ ներումն կը խնդրեմ:

Դուք շատ անգամ կը խնդաք լալու ժամանակ, կը պարէք քալելու ժամանակ, կը քնանաք արթնալու ժամանակ, կը հանգչիք աշխատելու ժամանակ: Աչքովս տեսած եմ տիկին մ'որ առաւօտուն կանուխ տանը բակին մէջ աթոռ մը գրկած բօլբա կը խաղար, և որ դիս տեսնելուն պէս տանը դուռը ուժով գոցեց ծուռ ծուռ նայելով ինձ: Նոյնպէս հանդիպած եմ տիկնոջ մը մ'որ փողոցի մէջ քայլելու ժամանակ վարսի քայլեր կ'առնէր: Չէ՛ք տեսած խեղճ էրիկն որ սեղանին առջեւ կը սպասէ պատառաքաղ ի ձեռին, որպէս զի կ'ինն իր պզտիկ տղուն չորերը լուայ, լմնցունէ և հաճի վեր ելնել կերակուր ուտելու համար: Չէ՛ք տեսած պզտիկ տղու մը ճիչն ու աղաղակն որ լալով կը ճաթի, կը մարի՝ սպասելով որ մայրը մազերը շտկէ ու բարեհաճի կաթ տալ: Չէ՛ք հանդիպած կնոջ մ'որ գլխարկ դնելու կ'երթայ տան մէջ մինակ թողլով էրիկն որ քիֆուսէ բռնուած է: Չէ՛ք

տեսած բնաւ տիկին մ'որ կէս օրին գիշերազգեստով, այսինքն պառկելու հագուստով, նստած է պատուհանին առջեւ: Բայց ո՛ր մէկն ըսեմ . . . և այս ամէն անկարգութիւններն ո՛չ ապաքէն յառաջ կուգան ժամանակացոյցի մը պակասութենէն:

Երբարեւ կան կանայք որ ունին ժամանակացոյց, բայց այս ժամանակացոյցին վրայ ալ կամ պարել գրուած է կամ երգել կամ խմել կամ ուտել կամ պառկիլ կամ պտըտիլ, և լաւ էր բնաւ ժամանակացոյց չունենալ քան թէ ասանկ ժամանակացոյց մը: Մտիկ ըրէ՛ք:

Թորոս աղան իր սիրելի բարեկամներէն մին տունը կը հրաւիրէ մէկ տեղ ընթրելու համար: Յարէթ աղան, այս էր բարեկամին անունը, չմերժեց հրաւերը: Երկու բարեկամները մէկտեղ տուն կ'երթան, ժամը մէկուկէսին:

Սպասուհին՝ որ դուռը բացած էր, կ'առաջնորդէ հիւրին ընդունելութեան սենեակը, ուր չուշանար մտնել նաեւ Թորոս աղան: Սենեակն ընտիր կարասիներով կահաւորուած է: Անգղիական գորգ մը փռուած է, որուն վրայ դրուած է, դէպ ի դրան կողմը, մուկի խաւիան մը և աման մը, թաւիչով ծածկուած երկու բազմոցներ՝ որոց միոյն վրայ դըրուած է Թորոս աղային գիշերուան սկուֆան, կեթարին, ձեռքի պզտիկ հայելի մը և պղնձի ֆաղաֆ մը, ջուրի սրուակ մը, իսկ միւսին վրայ կը տեսնուէին պէզիկի թուղթեր, և քանի մը աթոռներ: Երեսուէ ընտիր սեղան մը դրուած է բազմոցին վրայ՝ նոյնպէս թաւիչով ծածկուած: Քօնսօյին վրայ կ'երեւան երկու ծաղկի անօթներ, մարմարինէ պզտիկ արձաններ, խահուէի գաւաթներ, տղու քանի մը չորեր և

վարտիքներ, թիւոնիւր մը, երկու սանտր, անուշահոտ օճառ մը քառակուսի, շիշ մը լավանտա, ճուղի պղտիկ կասկարա մը և զոյգ մը տղու կօշիկ: Այս տեսարանը կը յիշեցնէ ինձ տուն մը, զոր նկարագրած եմ պնճնասիրութիւն անուն նամակիս մէջ:

— Ի՞նչ վիճակ է այս, պօռայ թորոս աղան սպասուհւոյն:

— Սենեակը պիտի աւլէի, ուրիշ գործի կանչեցին, չիրցի չտկել:

— Տիկինը ո՞ւր է:

— Շրջագրեցատին բռօվան տալու համար մօտիս թռային գնաց:

— Սօֆին ո՞ւր է:

— Իւթիւ կ'ընէ կոր:

— Աղաւնին ո՞ւր է:

— Կը հագուի կոր:

— Մայրս ո՞ւր է:

— Ազօթագիրքը կը կարդայ կոր:

— Շուտ ըրէ՛, չտկէ սա աեղը:

Կարմրեցաւ թորոս աղան և Յարէթ աղայէն ներումն խնդրեց:

— Ներեցէ՛ք, Յարէթ աղա:

— Ի՛նչ կայ ներելու:

— Ներումն կը խնդրեմ:

— Ներումն խնդրելու բան չկայ, տուն է, ասի նուս ալ տունը ասանկ բաներ կ'ըլլան, թո՛ղ որ բաժնի մ'ալ եղած չէ: Պիտի աւլէ եղեր, վերջը ուրիշ գործ ելեր է, ձգեր է...:

— Ասանկ ալ անկանոնութիւն...:

— Անկանոն բան մը չկայ, թորոս աղա՛, հատարեցէ՛ք:

Սպասուհին կարելի եղածին չափ շուտով չտկեց չտկրեց և աւելորդ բաները դուրս հանեց:

— Շուտ ըրէ՛, գնա՛ օղի բեր քիչ մը, հրամայեց թորոս աղա սպասուհւոյն, երբ սա վերստին մտաւ սենեակը:

Սպասուհին գլուխը ծռելով դուրս ելաւ:

— Զարմանալի սպասուհի մ'է, ցնդած է, ապո՞ւշ է, ի՞նչ է... չիյտէմ, ըսաւ թորոս աղան, սպասուհւոյն վրայ բեռնաւորել ուղեւով յանցանքը:

— Շատ գործ ունէր խեղճը... չէ կրցած չտկել սենեակը: Բայց, կ'աղաչեմ, մի՛ նեղուիք, եղածը մեծ բան մը չէ:

— Բայց ես կ'ուզեմ որ ընդունելութեան սենեակ մը պահուելու է միշտ այնպիսի վիճակի մը մէջ որ պատճառ չտայ տան տիրոջ բարկութեան:

— Չեմ ըսեր թէ, իրաւունք չունիք. բայց վերջապէս տուն է, ասանկ պղտիկ բաները թերութիւն չեն համարուիր:

Սպասուհին օղին բերաւ:

— Աս ի՞նչ շիշ է...աս հանքային ջուրի շիշն է... եանտսի շիշ:


— Այո՛, օղիի շիշին մէջ առջի օրը քիչ մը հինա եաղի առինք չօճուխին համար տէ, չլուացինք տահա, անոր համար...:

— Տէր ողորմեայ՛... տէր ողորմեա՛...:

— Վնաս չունի, թորոս աղա, սա ալ շիշ է, ան ալ շիշ է, ըսաւ Յարէթ աղան:

— Անանկ է, ձեր բաղդէն է որ այսօր ասանկ անվայել բաներ կ'ըլլան կոր:

Այս միջոցին մայրը ներս մտաւ, ստիպուեց բարեւներ փոխանակուեցան:



— Հրամանեցէ՛ք, Յարէթ աղա, առէ՛ք նայինք, ըսաւ Թորոս աղան, գաւաթն Յարէթ աղային հրամանեցնելով:

Յարէթ աղան, գաւաթը առաւ, շրթանցը դըպցուց, վարանեցաւ խմելու, բայց իւր վարանումը ջանաց ծածկել Թորոս աղայէն:

Թորոս աղան, որ սովոր էր ի մի ումալ պարպել օղիի գաւաթը, մէկանց բերանը պարպեց օղին ու հազարով. քիթը բերանը ծռումկելով, թքնելով պօռաց:

— Աս կա՛ղ է, կա՛ղ...

— Այո՛, ինձի ալ անանկ եկաւ, յարեց Յարէթ աղան,

— Հասկցայ՛, հասկցայ, նետուեցաւ մայրը, կարծեմ որ առջի օրը կազի թէնէքէն շիշերու մէջ պարպեցին, պինդիկին մէջ կտոր մը օղի շար, պղտիկ շիշի մը մէջ լեցուցին ու աւելցած կազն ալ պինդիկին մէջ դրին, կարծեմ ան պինդիկէն լեցուցեր, բերէր է, սերսէմ աղջիկ ... է, կազը մնասակար բան մը չէ ետ ... կուրծքի և հազի աղէկ է եղեր, կ'ըսեն կոր բժիշկները:

Թորոս աղան հազարով, թքնելով դուրս վազած էր:

Թորոս աղային մայրը սպասուհին կանչեց, քիչ մը չախեց:

Սպասուհին ինքզինքն արդարացուց ըսելով թէ՛ մտքէ չէր անցնէր որ օղիի շիշին մէջ կազ լեցուցած ըլլային:

— Դուն անանկ բաներու մի՛ խառնուիր, պօռաց Թորոս աղային մայրը լետոյ:

— Պղտիկ շիշին մէջ՝ օղի կայ, գնա՛ բեր:

Սպասուհին գնաց և շուտ մը դարձաւ յայտնելով թէ՛ շիշին մէջ արդարեւ կար քիչ մը օղի, բայց այն օղիով երկու օր առաջ տղուն կունտկը շփեր էին պղպեղով:

— Քօնեաք բերէ՛ք ուրեմն, հրամայեց Թորոս աղային մայրը:

Քօնեաքը բերին:

Թորոս աղան ալ մտաւ:

— Կոկորդս երեցաւ, ըսաւ հազարով:

— Բան մը չէ կ'անցնի, պատասխանեց Յարէթ աղան քօնեաք մը խմելով:

Թորոս աղան և հիւրը քանի մը գաւաթ քօնեաք խմեցին և տան տիկնոջ հրաւերին վրայ սրահն ելան ուր դրուած էր սեղանը:

Բազմեցան սեղանը, բայց Թորոս աղային տիկինն որ նոր եկեր էր, և երկու աղջիկները չէին երեւար:

— Տիկին, պօռաց Թորոս աղան, ձեզի կ'սպասենք կոր վար իջէք:

— Գլխարկս կը հանեմ կոր, կուգամ կոր ... պօռաց տիկինը վերէն:

— Լուսիկ, չգա՛ս,

— Պօթինիս կապը կը կապեմ կոր, կուգամ կոր ...:

— Աղաւնի, ո՛ւր ես:

— Միտս իւթիւ կ'ընեմ կոր ... լմնցայ ... կուգամ ... ինձի մի՛ սպասէք:

Թորոս աղան կը նեղանայ, բայց հիւրին առջեւ չուզեր իւր նեղութիւնը յայտնել, մանաւանդ թէ արդարացնել կը ջանայ կինն ու աղջիկները ըսելով:

— Մեր տիկինը հագուստները մաքուր պահելու մասին մէկ հատիկ է, փողոցի հագուստները չաղտոտելու համար տան մէջ ուրիշ հագուստ կը հագնի:

Հուսիկն ալ ըսես նէ՛ ճաշակով կը հագուի, անանկ սարսախս աղջիկներէն չէ, աղէկ ալ կը վայլեցնէ: Աղաւնիին գալով՝ աշխատասէր աղջիկ մ'է, վայրկեան մը պարապ չմտար, քա՛ աղջիկ, կ'ըսեմ երբեմն, նստէ՛, քիչ մը շունչ ա՛ռ, որո՞ւ կ'ըսես, կ'աշխատի ու կ'աշխատի: Ի՞նչ պիտի ընես, ծնունդնին ասանկ է: Ես ալ կը նայիմ որ աղէկ յատկութիւններ են ասոնք, բերանս չեմ բանար:

— Իրաւունք ունիս:

— Էյ տիկին, շուտ ըրէ՛, պօռաց նորէն Թորոս աղան, քիչ մ'ալ վերջը փոխուէ՛, հագուստներդ չեն աղատար:

— Շրջադգեսաս կը փոխեմ կոր, լմնցայ...:

— Սօֆի՛, Սօֆի՛:

— Վրաս ֆոշալամիս կ'ընեմ կոր... կուգամ կոր...:

— Աղաւնի՛ի՛, հոգնեցար աղջիկս, հոգնեցար, մեղք ես, եկո՛ւր...:

— Լմնցայ հայրի՛կ, լմնցայ, հիմա կուգամ:

— Չիյտեն որ հիւր կայ, անոր համար քիչ մ'ալ անհոգ կը վարուին կոր... հրամեցէ՛ք Յարեթ աղա, հրամեցէ՛ք մենք սկսինք ուտել, անոնք ալ կուգան:

— Շատ աղէկ:

Թորոս աղան, մայրն ու հիւրը սկսան ուտել: Թորոս աղան երբեմն երբեմն բարձր ձայնով կը կանչէր կիներն ու աղջիկները որք միեկնոյն պատասխանները կուտային: Կշտացան, սեղանէն ելան, լուացուեցան, սրբուեցան, ընդունելութեան սենեակը մտան:

Մէկ ժամէն սպասուհին խահուէ բերաւ:

Թորոս աղան պօռաց.

— Տիկին, եկուր խահուէդ խմէ:

— Կերակուր կուտեմ կոր, հիմա կուգամ:

— Լուսիկ, խահուէդ պողեցաւ:

— Տէր ողորմեա, հիմա նստայ սեղան:

— Աղաւնի՛, խահուէդ չպիտի՞ խմես:

— Պատառ մը հաց չուտե՞մ, մեղայ:

Յարեթ աղան Թորոս աղային նեղուիլը զգալով, քիչ մըն ալ կը նստի ու կը մեկնի:

Թորոս աղան որ բարկութեանը ժամանակ չուզեր կնոջը ղիտողութիւն ընել՝ կ'երթայ պառկելու միշտ պօռալով:

— Պառկելու ժամանակ է, ելէ՛ք պառկեցէ՛ք:

— Խահուէնիս չի խմենք՞:

Թորոս աղան կը պառկի: Առաւօտուն իւր սովորական ժամուն կ'արթննայ, քթին տակէն մոմաւալով, տակաւին կը քնանան կոր:

Մինչեւ կէս օր կը քնանան տիկինն ու աղջիկները, երեկոյեան տուն կը դառնայ Թորոս աղան: Կ'առանձնանայ կնոջը հետ և կ'սկսի ղիտողութեանց:

— Ի՞նչ էր երեկ գիշերուան խայտառակութիւնը, Խաղք եղայ հիւրին առջեւը...:

— Խաղք ըլլալու ի՞նչ կայ:

— Հիւրին սենեակը տակն ու վրայ էր:

— Իմացայ, կ'աւլէր կոր, ուրիշ գործ ելաւ, անանկ ձգեց... խաղք ըլլալու բան չկայ ասոր մէջ:

— Բուրկաթիֆի շիշով օշի բերին:

— Ի՞նչ վնաս ունի եղեր, հինա եաղի կար օշիի շիշին մէջ, անոր մէջ դրեր են:

— Աղէկ ա՛, ինթիքանի մէջ լեցնէիք գոնէ և անով հրամցնէիք:

— Կէնէ մի՛ պաշայէր, Աստուածդ սիրես:

— Բերածնին գոնէ օղի՞ ըլլար, կա՛ղ բերին, կա՛ղ...

— Էյ սխարմունք է, ամէն տունի մէջ կ'ըլլայ, պիւթին պարապ խօսքեր են ատոնք:

— Այնուհետեւ կերակուրի կ'սպասենք չէք գար:

— Գործ ունէինք... կերէ՛ք կ'ըսենք կոր ձեզի, ի՞նչու կ'սպասէք, մենք ալ անօթի չմնացինք ա՛, մենք ալ կերանք... ասանկ պարապ բաներու համար բարկանալու սիրտ ալ ունիս, կը զարմանամ քու վրադ...

— Խահուէի սպասեցինք չեկաք:

— Կերակուր կուտէինք կոր:

— Պառկեցէք կ'ըսեմ, չէք պառկիր:

— Խահուէ կը խմէինք կոր:

— Արթնցէք կ'ըսեմ, չէք արթննար:

— Կը պառկէինք կոր:

— Շատ աղէկ, իրաւունք ունիք:

— Դուք իրաւունք ունիք, դուք... յանցաւորը միշտ մենք ենք:

— Խաղք ու խայտառակ եղայ:

— Բան մ'ալ չեղար...

— Գոնէ՛ հիւրը պատուելու համար պարտաւոր էիք սեղանը նստիլ:

— Մէյ մ'ալ ո՞վ պիտի տեսնէ անոր երեսը, հոգս է հատեր:

— Կերակուրի ժամանակ իւթի՞նք կ'ըլլայ, կերակուրի ժամանակ չըջաղգեստ բրօվա կ'ըլլա՞յ, կերակուրի ժամանակ հազուիլ կ'ըլլա՞յ:

— Ամէն օր չէ՛ ես, տարին անդամ մը պատահեր է:

— Մէյ մ'ալ չեմ ուզեր որ ասանկ անվայել բաներ ըլլան:

Թորոս աղան մի և նոյն դիտողութիւնները կ'ընէ նաեւ աղջիկներուն, որ կը խոտանան ուրիշ անգամ չգտնուիլ նմանօրինակ թերութեանց մէջ:

Տարակոյս չլիսյ թէ երբ ամէն գործ ժամանակին կատարուի, ասանկ անտեղութեանց տեղի չտրուիր: Ամէն էրիկ մարդ ունի իր ժամանակացոյցը, իրենց վաճառատան մէջ, որպէս ամէն պզտիկ տղայ վարժանանի մէջ, իւրաքանչիւր կինն ալ ուրեմն ունենալու է իր ժամանակացոյցը, որովհետեւ ինչպէս ըսինք, ամէն բանի ժամանակը կայ, պզտիկ խոտորում մը մեծ խոտորումներու կը տանի զմ'դ: Չմոռնանք յիշելու թէ՛ ինչպէս որ խնդալու ժամանակը կայ, լալու ժամանակը կայ, այնպէս ալ հինտ եազիի շիշը կայ, օղիի շիշը կայ և կազի շիշը կայ, ժամանակացոյցին քովը կանայք պարտաւոր են կախել նաեւ մէյ մէկ շիշացոյց, որովհետեւ ամէն բանին տեղն ալ կայ, թէ և ժողովողն այս մասին լուծութեամբ անցած է:



Կ Ե Ղ Ծ

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն Ն Ե Ր

Գրեց Ք Օ Ս Ի Մ

Մինակ վաճառականները չեն կեղծ փաստաբաններու զօհերը, հասարակութեան ամէն դասակարգերն ալ հարկատու են անոնց, բաւական է որ միամիտ ըլլան, ու ամէն խօսքի հաւատալու ընդունակութիւն ունենան:

Միամիտներու դասակարգէն երկու կիւն, մէկը խիստ գեղանի ու մանկամարդ, իսկ միւսը բաւական տարիքոտ, առտու մը կը ներկայանան մեր կեղծ փաստաբաններէն մէկուն գրասենեակը, և կ'ընդունուին գրագիրներու, թարգմաններու, գործակատարներու վոհմակէ մը, որոնք թէեւ ձրի կը պաշտօնավարէին հոն, սակայն ուղղակի կամ անուղղակի միջոցներով կողոպուտէն մէկ մէկ բաժին ձեռք անցնելով, բաւական գոհացուցիչ վիճակի մէջ կ'ապրէին: Մանաւանդ որ այս առթիւ գործնականապէս կը սովորէին պատուաւոր ձեւերու տակ մարդ կողոպտելու արհեստը, ու կը պատրաստուէին մէյ մէկ ապագայ փաստաբանները^(*) ըլլալու... իրենց վարպետէն գերազանց անշուշտ: Գրասենեակին պետը, շիք ու ֆոէք երիտասարդ մը, որսը (տիկիները) տեսներուն պէս, սալօններու յատուկ կնամեծարական յարգանքներով ողջունելով զանոնք, սպասման սեն-

եակը առաջնորդեց ու ինք անմիջապէս վարպետին սենեակը մտաւ, ազդարարելու համար թէ վարագոյրը բացուած էր: Ա'լ այնուհետեւ իրարու յաջորդեցին զբաղումները, գործառնութիւնները, հրահանգները, երթեւեկութիւններն ու իրարանցումները: Ամէն երկու վայրկեանն անգամ մը զանգակը կը հնչէր ներսէն, ու դերասան—պաշտօնեաները մէյ մէկ խոշոր թուղթ բռնած, հապճեպով ու մեծ իրարանցումներով կը մտնէին ու կ'ելլէին փաստաբանին մասնասենեակն որ իւրաքանչիւրին տարբեր տարբեր հրահանգներ տալ կը կեղծէր, մերթ գրգռուելով, մերթ բարկանալով, մերթ յորդորելով և ամէն անգամ մինչեւ եօթը դուռ հեռուէն լսուելու աստիճան բարձր պռուտով, Իսկ յաճախորդուհիները, ընկերութիւններէ հեռու ապրած միամիտ կիներ, չկրնալով իրենց շլացումը զսպել, ամենեւին կասկած մը իսկ չյղացան որ այսչափ փայլուն կարասիներով, ճոխ զբաղարարնով, հինգ վեց գրագիրով ու անվերջ զբաղումներով օժտուած գրասենեակի մը տէրը կեղծ փաստաբան մը ըլլայ, ուստի խիստ գոհ այս փաստաբանական ընտրութենէն, իրենց կարգին կ'սպասէին, ժամ առաջ նորին փաստաբանութեանը ներկայանալու ու դատը շահած դուրս ելլելու հաստատ յոյսով, վերջապէս հնչեց այն բարեբաստիկ զանգակն ու երկու կիները բախտ ունեցան ունկնդրութեան սենեակէն ներս մտնելու:

* * *

Մեր փաստաբանն, աղնիւ այնչա'փ, որչափ որ կրնայ գնուիլ ան՝ ուրիշներու չափազանց սուղ գիններով ծախուելու համար, իսկոյն ցատկելով աթոռէն՝ գլխու, իրանի, թեւերու հազար ու մէկ կո-

տրտուուքներով, ու քաղաքավարական բազմերանդ նրբութիւններով պատուասիրեց երկու կիներն, ու այնպիսի ձեւով մը, որպէս թէ բնաւ կորսնցնելու ժամանակ չունի, անոնց այցելութեան նպատակը հարցուց: Երկու կիներէն տարիքաւոր, ընկերուհին ակնարկելով՝

— Այս տիկինը, ըսաւ, ամիս մը առաջ անակընկալ մահով մը եղբայրը կորսնցուց և...

Փաստաբանը, որ բնաւ առիթ չէր կորսնցնել քաղաքավարական նրբութիւններն ի դժուար դէպքերու.

— Յաւակցութիւններս, Տիկին, ըսաւ մանկամարդ կնոջ առջեւ խոնարհելով: Տիկինը շարունակեց:

— Եւ որովհետեւ հանգուցեալը բաւական կարելոր հարստութիւն մը թողուցած է, կը փափաքինք գիտնալ թէ, Տիկինն իբրեւ հանգուցեալին քոյրը կրնա՞յ ժառանգել այս հարստութիւնը:

Կեղծ փաստաբանը հարստութիւն բառը լսելուն պէս, որսի հոտ առած շան նման սկսաւ դառնալ թիկնաթոռին վրայ, սակայն չուզելով ներքին յուզումն անմիջապէս յայտնել, կատարեալ լռութիւնով մը.

— Փաստաբանները ամէնէն աւելի վախցնող դատերը ժառանգական խնդիրներն են, ըսաւ, որովհետեւ դատավարութեան այս ճիւղն այնչափ նրբութիւններ ունի, որոնց եթէ մէկին անուշադիր ըլլայ փաստաբանը, դատը կորսուած է վերջնականապէս: Երկու կիները հաստատական նշան մը ըրին լռելեայն, իսկ փաստաբանը քաջալերուած իր խօսքերուն տիկիներուն վրայ ներգործած ազդեցութենէն, շարունակեց.

— Պարզ փաստաբան մը ըլլալը բաւական չէ սակայն՝ ժառանգական դատեր ստանձնելու. երկրին

օրէնքին հետ մէկտեղ պէտք է լաւ գիտնալ նաեւ քաղաքակիրթ ազգերու օրէնքները, Շէրիի տրամադրութիւնները, ճիւղահամարութեան կանոնը, ժառանգականութեան սկզբունքը, արեան շրջանը, բժշկական օրինագիրքը և այլն և այլն, վերջապէս այնչափ հիմնական այնչափ բազմակողմանի և այնչափ բեղուն հմտութեան մը կը կարօտի մեր արհեստին այս ճիւղը, որ հարիւր փաստաբանէ հազիւ երկուքը կը յաջողին ժառանգական խնդիրներու մասնագիտ տիտղոսին արժանանալ, ու ձեր այս խոնարհ ծառան անարժանաբար այդ տիտղոսով ճանչցուած է հրապարակին վրայ:

Փաստաբանին այս ճոռոմաբանութենէն վերջը, երկու տիկիները իրարու երես նայեցան այնպիսի նշանակալից կեթարով մը, որ փաստաբանին ալ ուշագրութենէն չվրիպեցաւ յաճախողուհիներուն իր նկատմամբ տածած վստահութիւնն ու հիացումը, և երբ նօրէն շաղակրատելու կը պատրաստուէր, մանկամարդ կիներ խօսք առնելով,

— Կը շնորհաւորեմ, ըսաւ, ուրախ եմ որ ձեզ նման կարող փաստաբանի մը ձեռք պիտի յանձնեմ դորձերս, սակայն ինձ համար ամէնէն աւելի կարելորութիւն ունեցող կէտն այն է թէ, պիտի կրնա՞մ ժառանգել եղբորս հարստութիւնը, երբ կին մը ու երկու մանչ զաւակ թողուցած է հանգուցեալը:

Կեանքին կէսը կուտար կեղծ փաստաբանը, եթէ հանգուցեալը կին մը և երկու մանչ զաւակ թողուցած չըլլար, ու ակնարկուած հարստութենէն ո՛ր և է միջոցով մեծ բաժին մը իւրացնէր, բայց որովհետեւ դժուարութեան առջեւ ընկրկող չէր, յանկարծ ուրիշ դարձուածք մը յղանալով մտքին մէջ,

— Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, ըսաւ ոգեւորութիւնով մը, անկարելի բան չկայ այս աշխարհիս մէջ, պիտի ժառանգէք այդ հարստութիւնը, եթէ սակայն դատ վարել գիտնաք:

— Բայց չմոռնաք որ եղբայրս կին մը ու երկու մանչ զաւակ ունի:

— Անոնք նշանակութիւն չեն կրնար ունենալ օրէնքին առջեւ, հարստութիւնը դուք պիտի ժառանգէք:

— Յուսախաբութիւնը գէշ բան է, հաւատա՞մ, վտա՞հ էք որ անպատճառ պիտի շահիմ:

— Ի՞նչ շահ ունիմ ձեզ յուսադրելէ, եթէ խելքս չկորէ՞ ջըլլար կ'ըսեմ, կը ձգէք կ'երթաք. վտահո-
թիւն չունի՞ք վրաս, Տիկին:

— Ի՞նչ ըսել է, սակայն մէկ քանի փաստաբան-
ներու խորհուրդ հարցուցինք, քանի որ մանչ զաւակներ ունի, անկարելի է որ դուք բան մը ժառանգէք ձեր եղբորմէն, ըսին:

Փաստաբանը քննարկելով մը. — Չըսի՞ որ հարիւր փաստաբանէ երկուքն հազիւ կրնան ժառանգական խնդիրներու խառնուիլ. անհոգ եղիք Տիկին, երկու դատավարութիւն բաւական է ձեր արդար իրաւունքը ձեռք բերելու:

— Բայց...

— Դեռ կը կասկածի՞ք, միջազգային օրէնքէն հատուած մը մէջ կը բերեմ, կի՛ն, մանչ, զաւակ ամէն-
քը մէկէն իրենց նշանակութիւնը կը կորսնցնեն քո՞նք իրաւունքին հանդէպ:

(¹) «Քի վիժա էսբէրանթօ, մուրրէ քաքանդօ»
կ'ըսեմ ու դատը կը վաստկիմ:

(²) Ո՛վ որ յոյսով կ'ապրի, անյոյս կը մեռնի, ըսել է լատիններէն:

— Ներեցէ՛ք, ասով կրնա՞նք տիրանալ ժառանգութեան:

— Բնական է որ առանց դժուարութեան գործ չի տեսնուիր, սակայն այսպիսի զօրաւոր օրէնքի մը մարդ չի կրնար հերքում տալ. ի՞նչ ըսել է, դիտէ՞ք, այս հատուածին թարգմանութիւնն, «Երբ քոյրը կ'ապրի՝ եղբորը ժառանգութեան ամէնէն խոշոր մասն անոր իրաւունքն է» կ'ըսէ կոր միջազգային օրէնքն, որ ամէն տեղ ընդունուած է, և ոչ մէկը կրնայ հա-
կառակիլ անոր արամագրութիւններուն...

— Բայց ուրիշ փաստաբան...

— Փաստաբանի հարկ չկայ, քիչ մը խորհելով դուք ալ կրնաք համոզուիլ ըսածներուս ճշմարտու-
թեանը, նախ սա պէտք է գիտնալ որ ժառանգա-
կան խնդիրներու իբր հիմ ծառայողն արիւնքի մերձա-
ւորութիւնն է, արդ գալով ձեր խնդրոյն, կինը բո-
լորովին հեռու կ'իյնայ եղբորմէն արիւնքի տեսակէ-
տով, որովհետեւ երկու օտարականներ են որ արիւնքի ո՛ր և է մերձաւորութիւն չունին իրարու հետ. իսկ զաւակները բնականաբար շատ հեռու կ'իյնան. եղ-
բայրդ մէկ, կինն որ մէջ ինկած օտար մ'է երկուք՝
երեք, ու զաւակները չորրորդ հինգերորդ աստիճանի
մնալով՝ ամէնէն վերջը կուգան և անուղղակի ժառանգներն են. իսկ դուք արեան մերձաւորութեան տեսակէտով առաջին աստիճանի ժառանգորդ էք, եղբայրդ մէկ, դուք երկու. հիմա համոզուեցա՞ք, որ եղբորդ ուղղակի ժառանգորդը դուք էք ու զաւակները շատ հեռուն կը մնան. բայց այս միջին կէտերը լուսաբանելու համար հմտութիւն պէտք է:

Մանկամարդ կինը բոլորովին շուարած այս անա-
կնկալ հարստութեան առջեւ, ի՞նչ ընելիքը չէր

գիտեր, իսկ մեր կեղծ փաստաբանն յաղթանակը կատարեալ ընելու համար:

— Եթէ տեղական օրէնքէն վկայութիւն բերել հարկ ըլլայ, կը բանամ գիրքն ու հակառակորդիս աչքը կը մացնեմ սա պարբերութիւնը ⁽¹⁾ «Քիւլ տահ-քի, րասըլ քեահքի», այն ատեն տեսնեմ ո՞վ պիտի համարձակի հակառակը պնդել:

— Այդչա՞փ ազդեցիկ է այդ հատուածը:

— Անշո՛ւշտ, ըսել կ'ուզէ թէ՛ «Երբ քոյրը կ'ապրի, ուրիշներն ի՞նչպէս կը միջամտին եղբորը ժառանգութեան»:

Յաջորդ օրն երկու տիկիները դարձեալ եկան մեր պարոն փաստաբանին գրասենեակն ու խնդիրն երկար բարակ ձեծելէ վերջ, կատարեալ համոզում գոյացուցին որ, մանկամարդ կիներն եղբորն հարստութեան մեծագոյն մասը պիտի ժառանգէ, ժառանգական խնդիրներու մասնագէտ փաստաբանին ձեռքով:

Խեղճ կիներն երկու տարի փաստաբանին գրասենեակն երթալ գալէ վերջ միայն կրցաւ հասկնալ թէ՛ ի՞նչ կարգի անխիղճ խաբեբայէ մը կողոպտուած էր միամտաբար. բայց ի՞նչ օգուտ որ եղբորը ժառանգութենէն բան մը ձեռք չձգելէ զատ, 100—150 ոսկիի գոհարեղէններն ու պահեստի դրամն ալ վրայ տուած էր, մաս մաս վճարումներ ընելով կեղծ փաստաբանին:

(1) Ամբողջ խօսակցութիւնն հացին գլխուն կը դառնայ:



Ա Ր Ե Ի Ը

Երկնքի լուսաւորներուն մէջ ամէնէն աչքառուն է ապահովաբար՝ արեւը, որուն կենսատու ճաճանջներէն կախուած է մեր երկրագունտին կեանքը:

Լոյսի, ջերմութեան, շարժումի, կեանքի ու գեղեցկութեան անսպառ աղբիւրն է ան, որ դարերէ ի վեր մահկանացուներու խանդոտ ու երախտագէտ յարգանքները կ'ընդունի:

Ռամիկը կը հիանայ անոր վրայ, որովհետեւ արեւին ամենաբարձր կարողութեան արգասիքը կը վայելէ ամէն օր: Գիտունը կը գնահատէ զայն, որովհետեւ տիեզերքի մէջ անոր անժխտելի կարողութիւնը ճանշցած է. իսկ արուեստագէտը բոլոր ներդաշնակութիւններու ճշմարիտ շարժառիթը գտած ըլլալով անոր մէջ՝ անսահման յարգանքով մը կ'ողջունէ զայն:

Մոլորակային դրութեան սիրտը համարուած այս հսկայ մոլորակն է որ իր երկնային տրոփիւնները կը յղէ անհունապէս հեռաւոր անկիւնները մեր երկրագունտին — որ իրմէ 149 միլիոն քիլօմէթր հեռաւորութիւն մը ունի — զրկելէն զատ, 4,400 միլիոն քիլօմէթր հեռաւորութեան մէջ գտնուող Պիսիդոնին ալ կը հասցնէ իր ճառագայթները, չմոռնալով նաեւ յաւիտենական ձմեռի մէջ տառապող տժգոյն գլխաւորները:

Ջերմութեան այդ անսահման ուժը կը ծնի արևէն և անլուր արագութեամբ մը անջրպետին մէջ կը գահավիժի, ութը վայրկեանի մէջ՝ լոյսը կը ճեղքէ, կ'անցնի այն վիթխարի անդունդը՝ որ երկիրը կը բաժնէ կեդրոնական լուսաւորէն:

Միաբը դժուարաւ կրնայ ըմբռնել այն ահագին ոստումը՝ զոր լոյսը մէկ երկվայրկեանի մէջ 300,000 քիլոմէթր տրամագիծով անջրպետի մը վրայէն կ'ընէ:

Արեգակնային գունտին տրամագիծը երկրէն 109 անգամ աւելի ընդարձակ, ծաւալը 1,300,000 անգամ աւելի մեծ և իբր զանգուած՝ 324,000 անգամ աւելի ծանր ըլլալով, այդպիսի վիթխարի խոշորութիւններ՝ մարդկային երեւակայութեան մէջ չեն կրնար սեղմուիլ, օրինակի համար, Բարիզի Բանթէոնի գմբէթին տրամագիծը քսան ու կէս մէթր հաշուուած է, ուրեմն եթէ արեւը նոյն մեծութեամբ գունտ մը ուզուէր ներկայացնել, երկիրն ալ բազդատարար 19 սանթիմէթը տրամագիծով գնտիկ մը եղած պիտի ըլլար:

Գալով ծանրութեանը. — Եթէ կարենայինք ունենալ արեւը իր մէջ պարունակելու չափ հսկայ նժար մը, միւս նժարին մէջ 324,000 հատ երկրիս նման աշխարհներ դնել պէտք պիտի ըլլար արեւին հաւասարակշռելու համար, և կամ եթէ երկիրս արեւուն վրայ իյնար՝ կաթիլ մը ջուրի չափ բան մը պիտի երեւար երկիրը անով քով:

Շատերը կը հարցնեն թէ ի՞նչպէս կարելի է ճշտաւ արեւին հեռաւորութիւնը, իրական ծաւալն ու ծանրութիւնը, և կը մտածեն թէ մեր վերեւ յիշած սքանչելի արդիւնքները ձեռք բերելու համար գործածուած դրութիւնը շատ դժուար է հասկնալ, քա-

նի որ մոլորակներու ու մեր մէջ ահագին հեռաւորութիւններ կան: Ուսնք ալ կ'առարկեն թէ երկրիս նման ճղճիմ մըջիւննոցի մը բնակիչը ի՞նչպէս կարող կ'ըլլայ անհպելի բարձրութիւններու հասնիլ, հեռաւոր աշխարհներու ճշմարիտ հեռաւորութիւնը ճշտել, անոնց ծաւալը չափել, ծանրութիւնները հաշուել և վերջապէս անոնց Փիզիգական ու քիմիական կազմութիւնը գիտնալ:

Իբր պատասխան այդ առարկութեանց, ըսենք — թէ այդ դրութիւնները շատ ու շատ պարզ են ու թերեւս երկրային խել մը հասարակ բաներէ նուազ մանուածապատ և զորս կարենալ ըմբռնելու համար բացառիկ հանձարի պէտք չկայ բնաւ:

Մտքի թեթեւ ճիգով մը մարդ կրնայ բնութեան ամենամեծ օրէնքներուն վերահասու ըլլալու հաճոյքը վայելել:

Եթէ կ'ուզէք՝ երկրաչափութիւնը ձեռք առնենք քանի մը երկվայրկեան՝ Երկրաչափութիւնը կը սորվեցնէ մեզի թէ հեռաւորութիւնները՝ ինչպէս նաեւ ծաւալները չափելու համար անկիւններ կը գործածեն, և ո՛չ թէ որոշ չափ մը: Արդարեւ, առարկայի մը աւերեւոյթ մեծութիւնը, իր հեռաւորութեան չափէն կախում ունի: Երբ ո և է առարկայի մը հեռաւորութիւնը կ'անդիտանանք, — մոլորակներունը, զոր օրինակ, — իր աւերեւոյթ մեծութիւնը բացատրելու միակ միջոց մը կայ, — չափել իր գրաւած անկիւնը: Քիչ յետոյ երբ հեռաւորութիւնն ալ կը չափուի, հեռաւորութիւնն ու աւերեւոյթ մեծութիւնը միացնելով՝ ճշմարիտ ծաւալը կը գիտնանք:

Ո՛ր և է հեռաւորութեան կամ ո՛ր և է մեծութեան չափը՝ անհրաժեշտ կերպով կապուած է անկիւնի

չափին հետ: Ծանօթ անկիւնի մը համար՝ մեծութիւնը կը համապատասխանէ հեռաւորութեան, ինչպէս նաեւ ծանօթ հեռաւորութեան մը համար մեծութիւնը ճշտիւ կը համապատասխանէ չափուած անկիւնին:

Անկիւնը՝ հեռաւորութեան հետ չփոխուիր, և աստիճան մը՝ որ չափուած ըլլայ երկինքի վրայ կամ թուղթի վրայ միշտ նոյն բանն է:

Եթէ կ'ուզէք որոշ կերպով գիտնալ առարկաներու իրական և առերեւոյթ ծաւալներու միջեւ եղած առընչութիւնը՝ պէտք է նախ նկատի առնել, թէ առարկայ մը որչա՞փ հեռաւոր է այնչափ աւելի փոքր կ'երեւայ, ու երբ այդ առարկան 57 անգամ հեռացած է իր տրամագծէն, ինչ ալ ըլլայ իր իրական ծաւալը, միշտ մէկ աստիճան անկիւն կ'ունենայ, օրինակի համար մէկ մէջր տրամագծով շրջանակ մը ճիշդ ու ճիշդ մէկ աստիճան կը հաշուուի եթէ 67 մէթր հեռուէն դիտենք զայն:

Վեց տարբեր դրութիւններ գործածուած են Արեւին հեռաւորութիւնը չափելու համար: Վէնիսի՝ արեւին առջեւէն ըրած անցքերը իրարմէ բոլորովին հեռու կէտերէ դիտուած են, այնպէս որ կրնան ահագին եռանկիւն մը կազմել:

Լոյսի արագութիւնը ճշտուած է լուսնի թափարբանեակներուն՝ իրենց խաւարումներուն մէջ դրած յապաղումէն, որ արեւին երկրիս հետ հաղորդակցութեան տեղողութենէն հինգ անգամ աւելի երկար է, իսկ լոյսի շեղումին ճառագայթները կը հակին առաւել կամ նուազ մեր մոլորակին՝ իր ոլորոյթին մէջ ունեցած արագութեանը համեմատ: Լուսնի շարժումներն ալ արեգակնային ճգողութենէն հասկցուած են:

Գալով մոլորակային շարժումներուն, անոնք Արեւին հեռաւորութենէն ու Հրատի և ուրիշ շատ մը փոքր մոլորակներու՝ արեւի հանդէպ ունեցած դիրքերէն կախում ունին:

Հոս աւելորդ կը սեպենք այդ դրութիւններուն վրայ բացատրութիւն տալ, միայն սա ըսենք որ անոնք՝ բացարձակապէս համաձայն են իրարու, հաստատելու համար թէ արեւին կեդրոնէն տեսնուած երկրիս հասարակածային կէտրամագիծը՝ մինչեւ անոր միջին հեռաւորութիւնը 8" 80է, ինչ օր կը կոչուի «Արեգակնային տեղազանութիւն»:

Ուստի, արեւին անկիւնով չափուած առերեւոյթ մեծութիւնն է՝ 32' 3", 6¼. Այս երկու թիւերը միացնելով է որ կը գտնենք արեւին երկրէս ունեցած միջին հեռաւորութիւնը, որ է 23,430 անգամ երկրիս հասարակածային շառաւիղը, որուն տարածութիւնն է 6,378 300 մէթր: Հետեւաբար՝ արեւին հեռաւորութիւնը կ'ըլլայ 149,444,000 քիլոմէթր, որմէ կը հետեւի թէ արեգակնային տրամագիծը 109 անգամ աւելի մեծ է քան մեր երկրագունտինը: Այդ տրամագիծը կը ներկայացնէ 1,394,260,000 քիլոմէթր:

Իսկ գալով ծաւալին՝ երկրիս ծաւալէն 1,300,000 անգամ աւելի է, այսինքն 1,419 175 եռիլիոն քիլոմէթր խորանարդ:

Արեւին զանդուածը՝ 324,000 հատ իրարու կըցուած երկիրներու համահաւասար է, Ստուլթեանը գալով՝ երկրիս միջակ խտութեանը հազիւ քառորդն է, Հետեւաբար ջուրին խտութենէն նուազ բարձր է:

Արեւին մոսկերեսին ծանրութիւնը երկրիս մակերեսի ծանրութեանը 27½ անգամն է: Այս վիթխարի գունտն ուրիշ բան չէ՝ բայց եթէ հնոց մը:

Արեգակնային մակերեւոյթը՝ բոցավառ ջերմօղիի մը սկահակին հետ կրնայ բաղդատուիլ, միայն պէտք է գիտնալ որ այդ մակերեւոյթը ձուլիչ վառարանէ մը շատ ասելի կիզիչ և ելեքտրական լոյսէն շատ ասելի շրացուցիչ է: ու այդ բոցերը՝ 100, 200 և շատ անգամ 300 հազար քիլօմէթր բարձրութեան կրնան հասնիլ:

Արեւին լուսազեղ սկաւառակին առջեւ՝ ելեքտրական լոյսը մութ կը մնայ:

Բայց այդ մակերեսը ամէն տեղ նոյն փայլը չունի: Պահ մը երեւակայենք թէ ամբողջ Ատլանտեան ովկիանոսը բոցերու մէջ կ'այրի, և այնպէս ենթադրենք որ այդ ովկիանոսը երկրէս 1,300,000 անգամ ասելի ծաւալուն գունտ մըն է: Այդ հեղուկ, շարժուն ու յաւիտենապէս եռուզեռումի մէջ ալեծուփ մակերեսը՝ ամբողջութիամբ հեղուկ հուր մըն է: Իր ալիքները կամ յաւազոյն է ըսել՝ ալիքներու գագաթները փայլուն ձերմկութիւն մ'ունին, նուազ լուսաւոր յատակով մը:

Հեռագիտակով տեսնուած ատեն՝ արեւին մակերեւոյթը բծաւորուած է իսկ մը փոքրիկ հատիկներով, որոնք պարբերաբար նուազ փայլուն յատակի մը վրայ իրարու քով շարուած կ'երեւան, ճիշդ ցանցի մը պէս:

Այդ հատիկները, որոնք ձերմակ կրակէ ալիքներ են, երկու երեք հարիւր ու երեքմիս ալ հազար, երկու հազար քիլօմէթր երկայնութիւն ունին:

Վերեւ, յիշուած ցանցին մէջ շատ անգամ քանի մը հազար քիլօմէթր ընդարձակութեամբ բիծեր ու ձեղքուածներ կը կազմուին:

Սոյն բիծերէն ամենէն մեծը՝ արեւի տրամագծին

տասնութերորդ մասին չափ, այսինքն՝ 76,000 քիլօմէթր հաշուած է, որով ըսել է՝ երկրիս մակերեւոյթէն վեց անգամ մեծ, երկրիս մակերեւոյթն է 12,742 քիլօմէթր:

Արեւին բիծերը ամենապարզ դիտակներով իսկ կարելի է տեսնել, պայմանաւ որ դիտակը սեւ կամ դուր իր կապոյտ սպակիով մը ծածկուած ըլլայ: Կարելի է նաեւ արեւին պատկերն ունենալ թուղթի մը վերայ, որ դիտակէն քիչ մը հեռաւորութեամբ պէտք է դետեղուած ըլլայ:

Արեւին վրայ երբ գեղեցիկ բիծեր կը դանուին, քանի մ'որ դիտելէ վերջ՝ մարդ կրնայ հասկնալ թէ այդ բիծերը միշտ կը տեղափոխուին: Արեւին 26 օրուան մէջ ինքն իր վրայ ըրած թաւալումի պահուն՝ այդ բիծերն ալ իրենց տեղերը կը փոխեն: Տեսանելի մակերեւոյթին թաւալումը սակայն՝ ամբողջ արեգակնագունտին համար միեւնոյնը չէ, հասարակածի վրայ արագ է, մինչդեռ լայնութեան աստիճանին վրայ արագութիւնը կը նուազի, ինչ որ՝ արեգակնային մակերեւոյթին հաստատուն չըլլալը կ'ապացուցանէ:

Թաւալումի տեւողութիւնը 25 օր 4 ժամ է հասարակածին վրայ, 25 օր 12 ժամ՝ լայնութեան 15րդ աստիճանին վրայ, 26 օր՝ 25րդ աստիճանին վրայ, 27 օր՝ 38րդ աստիճանին վրայ, 28 օր՝ 48րդ աստիճանին վրայ:

Սոյն թաւալումին մէջ՝ բիծերն արեւին արեւելեան եզերքէն սկսելով մինչեւ կեդրոնական հարաւակողմը կը հասնին եօթն օրէն, և նոյնչափ ժամանակամիջոցի մէջ ալ կը շարունակեն իրենց անյայտացումէն 14 օր վերջը՝ բիծերը դարձեալ երեւան

կուգան, եթէ երբեք ճամբորդութեան պահուն ջընջուած չեն, ինչ որ յաճախ կը պատահի:

Ընդհանրապէս արեգակնային բիծերը քանի մը շարաթի մեկողութիւն ունին, սակայն կան բիծեր՝ որոնք չորս, հինգ արեգակնային թաւալումներուն հանդիսատես կրցած են ըլլալ:

Քիչ մը առաջ արեգակնային բոցերու վրայ խօսած ատեննիս՝ անոր մակերեւոյթը բոցակէզ ովկէանոսի մը կը նմանցնէինք: Արդարեւ՝ մեր յիշած ովկէանոսին վերեւ, որ յուսագունն անունով մկըրտուած է, (նոյն ինքն Արեւն է որ պարզ աչքով ալ կը տեսնուի) ձգուած է վարդադոյն, նուրբ, կազային ծածկոց մը, որուն թանձրութիւնն է 10—15,000 քիլօմէթր: Այդ կիզիչ, վարդադոյն կազային ծածկոցը, որ գունագունն անունով կը ճանչցուի, կազմուած է աներեւակայելի աստիճանի հասած կազէ: Հո՛ն ջրածինը կը վառի անդադար, երկաթի, մանէզիումի, սօտիումի, և ուրիշ խել մը մետաղներու շագիին մէջ: Հոն այրող ոյժը այնքան մեծ ու այնքան ահօելի է որ տարրերը փոխանակ իրարու հետ միանալու՝ միշտ բաժնուած կը մնան: Հոն ջրածինն ու թթուածինը կարող եղած չեն բնաւ բաղադրուելու՝ ջուր կազմելու համար, և իրենց շոգիացած վիճակին մէջ իսկ շամանթաղները զիրար կը վանեն ուրիշ բոլոթ տարրերու պէս, որովհետեւ հնոցի սաստկագոյն ջերմութիւնը կոչուած է զիրենք բաժնելու և այդ կերպով հիւլէներն իրարմէ մեկուսացնելու:

Այդ վարդադոյն կրակէ ծածկոցէն է որ կը ծնին արեգակնային բոցերը, հսկայ հրաբուխներն ու պայթումները, որոնց քով մերինները ճշճիմ ու պաղ լեռնակներ կը համարուին:

Տեսնուած են արեգակնային այնպիսի հրաբուխներ, որոնք քանի մը վայրկեանի մէջ մինչեւ 100,000 քիլօմէթր բարձրութեան հասած ու յետոյ՝ կրակէ տարափով մը ինկած են հրաշող ովկէանոսին վրայ, որուն կրակը երբեք չմարիր:

Արեգակնային գործունէութեան այս որոշ նշանները փոփոխական ու ժամանակաւոր են սակայն:

Կան տարիներ, ուր արեւը վիթխարի բիծերով կը ծածկուի, ուժգին փոթորիկներով՝ կ'ալեւորի, պաշարուած հսկայ բոցերէ: Կան տարիներ ալ, ուր ընդհակառակը հանդարտ կ'երեւայ, իբր թէ ուզէր հանգչիլ:

Բայց խնդրին էն շահեկան կէտը սա է թէ՛ բոլոր այդ փոփոխութիւնները մասնաւոր կարգ ու սարք մը ունին իրենց մէջ:

Վերջապէս, Արեւը երկրիս համար՝ անհուն պարապին մէջ բռնող ձեռք մը, ջեռուցիչ վառարան մը և լուսատու ջահ մ'ըլլալէ զատ՝ է նաեւ այն հսկայ սիրար, որուն տրոփիւններէն կը ծնի մեզի կեանք տուող ուժը:

Արեւին ու երկրիս միջեւ՝ 149 միլիոն քիլօմէթր տարածութեամբ մութ ու ցուրտ անդունդ մը կայ: Այդ անդունդին մէջ պարփակուած անկուլիլի եթերն է որ կը հասցնէ մեզի արեւին սրտի թրթուումները, մէկ երկվայրկեանի մէջ 300,000 քիլօմէթր արագութեամբ: Երկրիս իւրացուցածը՝ այդ ջերմութեան կէս-երկիլիոններորդ մասն է միայն:

Գալով արեւին ջերմութեան աստիճանին՝ շատ դժուար եղած է ճշդել, որովհետեւ այդ մասին եղած բոլոր քննութիւնները համաձայն եղած չեն իրարու, բայց հաւանականաբար 3500—4000 աստիճան եղած պէտք է ըլլայ:

Վերջացնելով յօգուածնիս, մեզ կը մնայ մաղթել, որ օրէ օր յառաջադիմող աստղագիտութիւնը կարողանայ, մօտաւոր ապագայի մէջ, լուսարանել խել մը մութ մնացած կէտերը, ինչպէս՝ արեւին ջերմութեան աստիճանը, որ տակաւին ստուգապէս գիտցուած չէ. և իր զանազան փոփոխութիւնները, որոնք սերտ առնչութիւն ունին մագնիսականութեան ու երկրային օդերեւութաբանութեան հետ:



ԼՈՒՍԻՆԸ

Արեւէն վերջը՝ ուշագրութիւննիս գրաւող լուսագունտը մեր դրացի լուսինն է, որ մեր մոլորակին կցուած կղզիի մը կը նմանի և որ երկրաբանական ճամբորդութիւններու գիշերային կայանն է նկատուած:

Լուին գիշերներու մենակեաց ջահն է ան, որուն հանդարտ ու պաղ ցոլքը երազի մը պէս կ'իջնէ քնացած բնութեան վրայ: Երբ տեսնենք զանի, այնպէս կ'երեւայ թէ՛ երկնքի բարձունքէն մեզի կը նայի. որովհետեւ իր սկաւառակի գլխաւոր բիծերը դէմքի մը տարտամ արտայայտութիւնն ունին: Առանց որ և է գործիքի, պարզ աչքով, եթէ փորձենք գծագրել, մերթ մութ և մերթ փայլուն մասեր կը նշմարենք հոն, մասեր՝ զորս իւրաքանչիւր ոք իր ուզած ձեւովը կը մեկնէ:

Ըստ ումանց, լուսինն վրայ եղած բիծերը՝ երկու-

աչք և քթի ուրուագիւրը կը ներկայացնեն, հետեւաբար մարդկային անորոշ դէմք մը: Շատերն ալ՝ կենդանի մը, մանգաղ մը, իրար համբուրող երկու գլուխներ, փայտի դեզ շալկած անձ մը, նապաստակ մը և վերջապէս շուն մը տեսնել կ'ուզեն հոն: Բայց ընդհանրապէս մարդկային դէմք մը տեսնելու աւելի մեծ հակում մը կայ: Այս տարտամ տեսիլները մէկէն կ'անհետանան այն վայրկեանին, երբ ամենափոքր գործիքով՝ այսինքն փոքր դիտակով մը նայելու ըլլանք. բիծերն որոշ ձեւ մը կ'ստանան և անորոշ ամէն տեսիլ յօդս կը ցնդին: Ասկից քանի մը տարի առաջ քաշուած լուսնային լուսանկարին մէջ ո՛չ մարդկային դէմք կը նշմարուի և ո՛չ ալ նապաստակ կը տեսնուի, բայց միմիայն աշխարհագրական գործ մը՝ արտաքին ձեւերով և իր ստորին մասին մէջ ալ լուսաւոր կէտ մը, ուրկէ կը ցոլանան քանի մը փայլուն խումբեր, որոնց մեծ մասը բաւական հեռուն կ'երկարի:

1609ին Կալիլէոսի շինած գործիքներովը՝ առաջին անգամ երբ դիտեցին լուսինը ուզեցին հասկնալ թէ՛ ի՛նչ էին այն մութ բիծերը, որոնք վերջէն ծով կոչուեցան:

Լուսինը ինքնին լոյս չունի և զինքը լուսաւորող արեւին շնորհիւն է որ կը փայլի:

Լուսինը՝ երկրիս շուրջը դառնալովը միշտ տեղ կը փոխէ արեւին հանդէպ, հետեւաբար իր կիսագունտը աւելի կամ նուազ փայլուն կը տեսնենք, որմէ յառաջ կուգան այն երեւոյթները որոնք արդէն ծանօթ են մեզի: Եթէ լուսինը իր լրումին մէջն է, ճիշտ ու ճիշտ արեւին դէմ առ դէմ կը գտնուի, որով իր լուսաւորուած կէսը անբոլջութեամբ կրնանք

տեսնել, այսինքն քառորդ գունտը, Ամենօրեայ երեւոյթներն ալ նոյն կերպով կը բացատրուին, Լուսնին այն մասերը որ արեւէն լուսաւորուած չեն, ինքնին բնաւ ցոլք չունին, Լուսինն ինքնիրեն մնալով՝ երկրիս նման անլոյս մարմին մըն է:

Լուսինը՝ իր՝ երկրիս շուրջը ըրած պտոյտը 27 օրուան, 7 ժամուան, 43 վայրկեանի և 11 երկվայրկեանի մէջ կը կատարէ, բայց որովհետեւ ճիշտ այն ատեն երկիրն ալ արեւին շրջանը կ'ընէ ու արեւին հանդէպ ունեցած դիրքը փոխած է, ուստի լուսինն արեւին ու երկրիս մէջտեղը գտնուելուն համար երկու օրուան շրջան մը եւս բոլորելու ստիպուած է, որով լուսնային ամիսը լուսնին աստեղական շրջանէն աւելի երկար կ'ըլլայ. լուսնային ամիսն է 29 օր, 12 ժամ, 44 վայրկեան և 3 երկվայրկեան: Երեւոյթներու յաջորդութեան տեւողութիւնն է այս: Երկրիս շրջանն ըրած պահուն, լուսինը մեզի միշտ մի եւ նոյն երեսը կը ցցունէ:

Այդ թաւալումը 384,000 քիլոմէթր հեռուէն կը կատարուի: Լուսնին իր ոլորտոյթին վրայ ունեցած արագութիւնն է երկվայրկեանի մը մէջ մէկ քիլոմէթր, սակայն մեր մոլորակին՝ անջրպետին մէջ ունեցած արագութիւնը լուսնէն երեսուն անգամ աւելի է:

Լուսնին հեռաւորութիւնը երկու հազար տարիէ ի վեր ծանօթ է արդէն: 1765ին երկու Փրանսացի աստղագէտներ՝ Լալանտ և Լաքայլ՝ հաստատեցին այդ արագութիւնը, մին Պեռլինէն և միւսը Բարեյուսոյ Գլուխէն, եռանկիւնով մը՝ որուն գագաթն էր Լուսինը: Այդ եռանկիւնով հաստատուեցաւ որ Լուսնին հեռաւորութիւնը՝ երկրիս տրամագծին երեսուն

անգամն է, այսինքն երեսուն հատ երկիրներով շինուած կամուրջ մը պիտի կրնայ մեզ մինչեւ հոն տանիլ, մինչդեռ արեւը 385 անգամ աւելի հեռու է:

Լուսնինն միջին տրամագիծն է 31' 8", քիչ պակաս արեւին տրամագիծէն: Միջին ըսելնուս պատճառն այն է, որ մեր արբանեակին՝ մեր բոլորտիքն ըրած շրջանը բոլորչի չէ՝ այլ թերատ: Լուսինը մերթ քիչ մը հեռու է իր միջին տրամագիծէն, մերթ քիչ մը մօտ, հետեւաբար երբեմն մեծ կ'երեւայ, երբեմն ալ փոքր, նոյն բանն արեւին համար ալ կը պատահի ու անոր համար է որ արեւին՝ լուսնի միջոցաւ խաւարումները երբեմն ամբողջական ու երկար են, երբեմն ալ օղակաձեւ: Եթէ լուսնին սկաւառակը արեւին սկաւառակէն մեծ է, արեւին խաւարումն ամբողջական կ'ըլլայ, ընդհակառակը՝ մասնակի կ'ըլլայ, երբ լուսնին սկաւառակը փոքր է:

Լուսնին այս տրամագիծը՝ երկրային տրամագծին երկու հարիւր եօթանասուն երեք հազարերորդը կը ներկայացնէ, այսինքն՝ 3,482 քիլոմէթր:

Լուսնին ծաւալը երկրիս ծաւալէն 50 անգամ փոքր է: Իսկ գալով զանգուածին՝ մեր երկրագունտին 78րդ մասն է, այսինքն եթէ հսկայ նժարի մը մէկ կողմը դնենք երկիրը՝ միւս կողմը պէտք էինք դնել 78 հատ լուսնիներ՝ հաւասարակշռութիւնը պահելու համար: Լուսնին խտութիւնը երկրիս խտութեանը հետ բաղդատմամբ՝ 0,615 է, այսինքն ջուրին խտութենէն երեք անգամ աւելի: Լուսնին մակերեւութային ծանրութիւնը շատ տկար է, այսինքն 0,168:

Այսպէս, լուսնին երկրիս մէկ արուարձանը կը սեպուի, որուն փոքրիկ հեռաւորութիւնը՝ տիեզեր-

քին մէջ քայլափոխ մըն է, Հեռագիրը մէկ ու կէս երկվայրկեանէն կրնայ հոն հասնիլ, իսկ ուսմբը ինը օրուան մէջ, ճեղքնթաց կառախուսքով 8 ամիս և 28 օր պէտք է ճամբորդենք՝ լուսինը երկրէս բաժնող անջրպետը կարենալ ճեղքելու համար: Ահաւասիկ հեռաւորութիւն մը, որ արեւին հեռաւորութեանը երեք հարիւր ութսուն հինգերորդ և երկրիս ամէնէն մօտաւոր լուսաւորներուն հեռաւորութեան հարիւր միլիոներորդ մասն է միայն: Շատեր կան, որ երկրիս վրայ կրցած են կտրել՝ լուսնին ու մեր միջեւ գտնուած ճամբան:

Այս մեծ մօտաւորութեան պատճառաւ՝ երկնային աշխարհներու մէջ մեղի ամէնէն ծանօթը լուսինն է, որուն աշխարհագրական, կամ լաւ եւս է ըսել, լուսնագրական քարտէսը գծագրուած է արդէն երկու դարէ ի վեր: Նախ՝ իբր անորոշ ուրուագիր, յետոյ՝ աւելի մանրամասն: Իսկ այսօր կատարեալ ճշտութեամբ գծագրուած լուսնային քարտէսներ ունինք, որ մեր երկրային քարտէսներուն հետ կրնան մրցիլ:

Լուսնին մէջ եթէ կայ շատ աւելի շահեկան բան մը, այն ալ հեռագրիտակով տեսնուած լեռներն են, մանաւանդ առաջին քառորդին, որ ժամանակ արևը զանոնք շեղակի լուսաւորելով՝ անոնց ցցուած մասը կը ցցուցնէ և անոնց ետին կը նետէ սեւ, ուրուային ստուերներ: Առաջին քառորդէն առաջ լուսնի մահիկին ժանեակներն՝ իրիկուան երկնքին վրայ կախուած հեղուկ արծաթի կը նմանին: Օղակներ մեծ ու պզտիկ, հաստ ու բարակ, խոշոր ու ճղճիմ, աջ ու ձախ նետուած են կարծես լուսնին վրայ բոլորչի ձեւով մը: Բայց այդ օղակները սրբան մօտենան գունտին, այնքան թերատ կ'երևան:

Այս օղակային ձեւերն այնչափ զարմանալի են որ, երբ առաջին անգամ աստեղագէտները տեսան զանոնք 17րդ դարուն, իրենց տեսածին չկրցին հաւատալ և բնութեան ալ վերագրել չուղելով՝ կարծեցին թէ արհեստական շինութիւններ են, պարզապէս կլիմայի և լուսնային բնակիչներու աշխատութեան արդիւնք: Նոյն իսկ Քէփլէր այդ համոզումն ունէր, իրենց ուշադրութիւնը չէր գրաւած սակայն վիթխարի տարածութիւնն այն շինութեանց, որոնք ջրջանակ ըլլալէ աւելի բազմանկիւններ են:

Լուսնին մէջ գտնուած բոլոր լեռները խոռոչաւոր են, Ենթադրենք որ ճամբորդ մը ուզէ լուսնային դաշտերու մէջէն անցնիլ, իր ճամբորդութեան ամբողջ տեւողութեանը մէջ՝ իրարու վրայ բարձրացած պատնէչներու պիտի հանդիպի և մագլցելով անոնց բարձր գագաթներուն վրայ պիտի ելլէ, ուրկից պիտի կրնայ վայելել հիանալի տեսարաններ: Բայց երբ ուզէ լեռնագագաթին վրայէն անցնիլ, տարբեր ճամբով մը վար իջնելու համար, անկարելի է, որովհետեւ լեռը գագաթ չունի: Լեռը՝ փոխանակ լեռնադաշտի, խոռոչաւոր է և իր խաւանարանը մօտակայ դաշտին կը հաւասարի: Ուրեմն՝ կամ պէտք է իջնել կամ հակառակ կողմի վիթխարի հովիտն ի վեր ելլել և նորէն իջնել և կամ անպարիսպ բարձրաբերձ լեռներով ջրջապատուած խորտ ու բորտ պատնէչէն պէտք է վար իջնել:

Լուսնային լեռները քանի մը մէթր մօտէն չափուած են, (բան մը որ երկրայիններու համար կարելի չէ եղած): Ատոնց ամենէն բարձրը 7000 մէթրէն աւելի կ'ենթադրուի, որմէ կրնանք հետեւցնել թէ արբանեակը մոլորակէն աւելի լեռնոտ է և թէ հոն

լեռնահրային հսկաները շատ աւելի թիւ մը կը կազմեն քան թէ երկրիս վրայ: Մեր ամէնէն մեծ սարերը, Կօրիզանքար, Հիմալայա լեռնաշղթային ամենաբարձր գագաթը որ ունի 8,840 մէթր բարձրութիւնը մեր երկրային տրամագիծին 1140րդ մասին կը համապատասխանէ, ինչպէս նաեւ լուսնային խոշոր սարերը, որոնք 7700 մէթր հաշուած են, լուսնային տրամագիծին 740րդ մասին կը հաւասարին:

Լուսնին մէջ բնաւ մթնոլորտ չկայ, իսկ եթէ կայ՝ այն ալ ծործորներու մէջ միայն: Ամպ, մառախուղ, անձրեւ, ձիւն երբեք գոյութիւն չունին հոն: Երկինքը միշտ, գիշեր կամ ցերեկ, լուսազարդ է:

Լուսնային օրը մերինէն 15 անգամ աւելի երկար է, որովհետեւ արեւը մէկ ամսուան մէջ կը լուսաւորէ ամբողջ լուսինը. երեք հարիւր յիսուս ժամ հաշուած է արեւին ծագումէն մինչեւ մայրը մտնելը: Արեւին ծագումէն առաջ եթէ լուսնին մէջ հասնինք, արեւին ծագումն աւետող արշալոյս չենք տեսնար որովհետեւ առանց մթնոլորտի չկրնար ըլլալ առիկա: Մութ հորիզոնին վրայ յանկարծ երեւան կուգան արեգակնային ճառագայթները, որոնք նախ լեռներու գագաթները կը լուսաւորեն, մինչդեռ անդին դաշտերու ծործորները մութի մէջ կը մնան, լոյսը կամաց կամաց կ'աւելնայ հոն, որովհետեւ մինչեւ երկրիս վրայ կեդրոնական լայնութիւններու մէջ, արեւը երկու վայրկեան մէկ քառորդի մէջ կը ծագի, լուսնին վրայ գրեթէ մէկ ժամէն կը ցածի, հետեւաբար քանի մը վայրկեան լոյսը տկար կ'ըլլայ և ծայրայեղ դանդաղութեամբ կ'աճի: Տեսակ մը կարճատեւ արշալոյս մըն է ան, որովհետեւ երբ կէս ժամէն արեւին կէս սկաւառակը բարձրացած է, արդէն շատ թանձր

կերեւայ, որպէս թէ ամբողջովին բարձրացած ըլլար հորիզոնին վրայ: Հոն՝ իր ամբողջ դարաւանդներով ու վառվռուն մթնոլորտով կը ներկայանայ մեծ մոլորակը:

Լուսնին մէջ մթնոլորտի ղգալի պակասը՝ մեր լեռներուն վրայ եղած կլիմային համահասարար արդիւք մը կուտայ: Այդ լեռներու մէջ օդի անօսութիւնն ա'յնքան չեշտուած է, որ արեւն անկարող կ'ըլլայ իր ջերմութիւնը թափանցելու:



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՆՇԵՆՏԻՍԵԱՆ

Յովհաննէս Մինշէնտիսեանի, ճարտար տպագրիչին կենսագրութիւն թէեւ ժամանակին Արեւելք լրագրի մէջ հրատարակուած է, բայց մենք ուզելով մեր նախկին վարպետին յիշատակն անկորուստ պահել և յարգանք մը ընծայել, մեր Տարեցոյցին մէջ եւս կը հրատարակենք որովհետեւ իր ժամանակին և նոյն իսկ այսօր ալ իր հաւատարմ չէ ունեցած իր արուեստին ճարտարութեանը մէջ:

Հայազգի այս մեծ արուեստագետին գործն ա'յնքան կարեւոր եղած է թէ՛ հայ և թէ՛ թուրք ազգաց համար որ կ'արժէ իր կեանքին և գիւտերուն վրայ քիչ մ'աւելի խօսիլ: Մեր տեղեկութիւնք քաղուած են ուղղապէս իրմէ, իւր իսկ բառերէն:

«1887 տարուան միջոցները կառավարութեան կողմ-

«մանէ հրաման մը ելաւ որ ամէն անոնք որ տէրութեան պաշտօնի մէջ կը գտնուին, իրենց կենսագրութիւնը գրեն և իրենց կառավարչին միջոցաւ «Երևոյսի պաշտօնատունը ղրկեն. այն ատեն «միւտիրն ալ մեր կենսագրութիւնը ուղեց առաւ, «բայց ետքը զանի քիչ մ'ալ ճոխացնելով և հետ-«զհետէ եղած դէպքերն ալ վրան աւելցնելով գրե-«ցինք մեզ համար»:

Այսպիսի ինքնակենսագրութենէ մը, թուրքերէն խմբագրեալ, քաղուած է մէկ մասն այն տեղեկու-«թեանց, զորս ունինք հանգուցելոյն կենաց և գոր-«ծերուն վրայ:

Միւհէնտիս Գէորգ, որ քարտաղարի և երկրա-«չափի պաշտօն կը վարէր, Գրիգոր Կալֆայի քով (մեծ-հայր Սարգիս պէյ Պալեանի) եղաւ հայրն Յով-«հաննէս Միւհէնտիսեան, 1810 փետրով. 21ին ծնեալ Սամաթիա:

Յովհաննէս Միւհէնտիսեան 8-16 տարեկան կը յաճախէ թաղային վարժարանը, սովորելով ինչ որ այն ատեն կ'աւանդուէր թաղային նախակրթարան-«ներու մէջ: Որչա'փ ալ յոռեառ լինինք Խասգիւղի և ուրիշ նախակրթարանաց մասին, ապահով եղիք որ այն ատեն ո՛չ իսկ Սամաթիոյ մէջ հիմակուան չափ բան կ'ուսուցուէր: Միւհէնտիսեան իր ուսածները կը սահմանէ սա բառերով «Հասարակ ընթերցանութիւն, գիր, քերականութիւն, քիչ մը հաշիւ և քիչ մ'ալ թուրքերէն ընթերցանութիւն և գիր»:

Յ. Պարոնեան, որ իր սեփական զուարճարան ոճով Յովհաննէս Միւհէնտիսեանի ևս կենսագրու-«թիւն ըրած է «ԱԶԻԱՅԻՆ ԶՈՋԵՐՈՒՆ» մէջ, անոր ի մանկութեան ցուցած արուեստական յաջողակու-«թիւնը սապէս կը պատմէ:

«Հազիւ չորս տարեկան կար երբ իմացուց ծնո-«ղացն որ ինք այն մարդերէն է զորս նախախնամու-«թիւնը ստեղծած ատեն ստեղծող ոգիով մը կ'օժտէ և վերջը թող կուտայ որ ուրիշներէն միշտ խաբ-«ուին: Այդ տարիքին մէջ էր Միւհէնտիսեան և օր մը մեղրամոմէ կանթեղ մը շինեց, և տեսաւ Միւ-«հէնտիսեան որ բարի է: Իւր յաջողակութենէն քա-«ջալերուած՝ կանթեղն աւրեց և պղտիկ կատու մը շինեց: Օր մը ետքը կատուէն ընկուզենի մը շինեց և հետեւեալ օրն ալ ընկուզենին դդու մի այլափոխեց: Ամենուն մէջ կատարելապէս յաջողելէն ետքն ըսաւ. Մարգ մ'ալ շինեմք — մեղրամոմէ — և առնելուն պէս մարդու բարեփոխեց զայն, և իւր արարչագործու-«թիւնը կատարեալ եղաւ:

«Հայրը տեսնելով որ իւր ազուն ձեռներն հան-«ձար ունին՝ միշտ կը քաջալերէր զինքը, երբեմն նուէր տալով և միշտ խրատ. Երեկոյները տուն դառնալուն պէս ծունկ կը չոքէր հօրն առջեւ, որ իրբեւ զրօսանք բաներ մը կը սորվեցնէր իրեն, զօրօրինակ՝ դաւաթ մը չափել և որչափ ջուր առ-«նելը գտնել, օքրան ըսուած գործիքով իրքիճա առ-«նելով ժամը քանին ըլլալն գիտնալ և արեւուն ծա-«գումը գտնել: Օքրան այսօր բնաւ չգործածուիր, վասն զի ամէն մարդ իւր փորէն կարող է գուշակել ժամը քանի ըլլալը»:

Մեծ փափաք ցուցած էր երաժշտութեան, և ա-«րեւելեանէ ետքն Եւրոպական ձայնագրութիւն եւս ուսնելէ յետոյ, քաջ դաշնակահար եղաւ: Ազգիս մէջ առաջին անգամ դաշնակ դարնողներէն մին էր: Եւրոպական ձայնագրութենէ լուսաւորուելով՝ Հայ երաժշտութեան մէջ եղած թերութիւններն ուղղեց:

Ձայնագրութեան կանոնները պարունակող տետրակ մը շինեց, և յետոյ, երբ տարաբանապետ եղաւ նոյն ձայնանիշերուն հայր և մայր գիրերը պատրաստեց, բայց պարագաները չներեցին որ ի լոյս ընծայէր:

Տասն և վեց տարեկանէ ետքը՝ հայրը զինքը սասեփեաւ ոսկերիչի մը քով դրաւ, ուր 5-6 տարի ետքն իւր վարպետն անցնելով՝ անոր հետ ընկեր եղաւ, և այլ 5-6 տարիներէ ետքն ի Չուխաճի խան զատ սենեակ բացաւ և համբաւաւոր ոսկերիչ մը եղաւ: Այս պահուս Սաջատուր պատուելի Միսաքեան կը յորդորէ զինք տպարան բանալու: Միւհէնտիսեան տպագրական բաներու բնաւ գաղափար չունէր, բայց իւր բարեկամին բացատրութիւններէն քիչ մը բան իմանալով փոփաք մը կ'զգայ, և իւր պարապոյ ժամերուն մէջ կ'զբազի պողպատի վրայ ութը բունքօ հայ տառեր փորագրել:

1839ին ճարտարապետ Սերվերեան Յովհաննէս Ա. իրայի առաջնորդութեամբ Ակիւտարի ձեմարանը կը բացուի: Արուեստասէր Ա. իրան, լսելով Միւհէնտիսեանի ջանագրութիւնը, կը քաջալերէ, և կը խոստանայ ձեմարանին մէջ իրեն տեղ և ամէն գիւրութիւն տալ տպարան բանալու, դատագիրք և օրացոյց տպելու և լն.: Միւհէնտիսեան գիշեր ցորեկ կ'աշխատի այս բանիս: Փայտէ մամուլ մը ձեռք կ'անցնէ, մնացորդ Տիվիթճեան տպարանի, որ Միւհէնտիսեանէն առաջ այս գործին ձեռք զարկած, Ղալաթիոյ քանի մը հրեաներու հայերէն տառեր փորագրել տուած էր, որք կ'երեւի շատ անձոռնի բաներ էին, որովհետեւ Միւհէնտիսեան բոլորովին մէկ կողմ դրաւ զանոնք: Իր գնած փայտեայ մամուլով 1840ին առաջին անգամ օրացոյց մը կը հրատարա-

կէ: Ա'լ ոսկերչութիւնը թողած, հոգւով ու մարմնով տպագրութեան արուեստին կը յարի, և շնորհիւ այն արուեստական ճաշակին ու վարժութեան զոր ոսկերչութիւնն իրեն տուած էր, հետզհետէ հայերէն տառեր կը յօրինէ: Պողպատի վրայ Հայ տառերը կանոնաւոր կերպով գծելու համար գործիք մը կը հնարէ, և ինչ որ եւրոպիոյ մէջ հազուագիւտ է՝ ուրիշ մեքենայ մը կը հնարէ՝ յորում պողպատն ու պղինձը տեղաւորելով, յառաջ բերած ճնշումով հայր գիրերէն դիւրաւ կը հանէ մայր գիրերն: Ասով գիրերու փորագրութիւնը և ձուլուիլը մեծապէս կը դիւրացնէ: Նաև հայերէնի մէջ զանուած կարգ մը ծոցագիրներն ու փակագիրները, որոնք տառերուն քով քովի շարուելուն արգելք են, վերցնելու համար տեսակ մը սիրուն զարդագիր կը յօրինէ և 1847ին մասնաւոր տետրակով մը կը հրատարակէ:

Մինչև նոյն թուականը Կ. Պոլսոյ մէջ ամբողջ տպագրական երկաթեայ մամուլ չէր տեսնուած: Միւհէնտիսեան երեք հատ Ամերիկայէն բերել կուտայ, հանդերձ կարեւոր գործիներով, բայց ձեմարանը, բացումէն հազիւ երկու տարի շարունակուելով գոցուեցաւ որով Միւհէնտիսեանի ձեռնարկութիւնն ալ կիսատ մնաց:

Վերոյիշեալ զարդագրէն զատ, Միւհէնտիսեանի յօրինած և կատարելագործած հայերէն տառերն են վեց և ութ բունքօ մանր, 11 բունքօ միջին և 14 բունքօ խոշոր տառերն, որոնց գեղեցկութեան և ձեւաւորութեան հաւասարող մինչև ցայսօր որ և է տառ չէ շինուած, և ասոնցմով է որ Արապեան տպարանին յաջորդ Միւհէնտիսեան տպարանէն ելած է ժամանակին տպուած ամէն տեսակ կրօնական և գրա-

կան զանազան հրատարակութիւնք և լրագրաց մէջ գլխաւորապէս Մասիս եւ Մեծմուսլի Հաւասիս :

1843ին Եւրոպական Նախարար Մուսա Սաֆվէթի փաշայի հրամանաւ Արքունի տպարանին համար քա՛ալիզ գրեր կը շինէ, գեղագիր Եէսարիզատէ Իզզէթ էֆ. ի օրինակաց համեմատ, որ այնուհետև թագավորհանէի տնօրէն կը կարգուի :

1844ին կ'որոշուի փոխել շրջաբերութեան մէջ գանուող թղթադրամը : Փողերանոցի դրամահատութեան ճիւղին օգնական Հաշիմ էֆ. այս գործը ի սկզբան Ռափայէլ Գազանճեան անուն հայու մը կը ցուցնէ. բայց անոր չափազանց պահանջումներէն դժգոհ մնալով՝ Եւրոպական Նախարարին խորհուրդով կը դիմէ Միւհէնտիսեանին, որ ո՛չ միայն թղթագրքումին զարդերը կը յօրինէ այլ և քաալիզ գրով արձանագրութիւններն : Հայ արուեստագէտն որ այս քաալիզ գրով արդէն Բեսալիի իթիգասիյէ անուն թուրքերէն տեսարակը տպած էր, նոյն տեսակ և քիչ մը աւելի խոշոր տառերով 1847ին Հիլեիի Խագանի անուն անտրակն ալ հրատարակեց : Այս աշխատութիւնք մեծապէս գնահատուեցան կառավարական ակմբոց և Օսմանեան գրասիրաց կողմէ, և իրեն թուակ յատկացուեցաւ :

Երբ այսպէս պետական գործերով կը պարապէր, Միւհէնտիսեան հարկադրուած էր հայերէն տառերու վրայ իր աշխատութիւնները դադարեցնել : Բայց իր տպարանին վերաբացումին դէմ Պատրիարքական շրջանակի մէջ պահ մը դժուարութիւն ելնելով, արգելքի բաղխեցաւ : Տ. Աստուածատուր Պատրիարք, որոյ օրինակին այս մասին բարերախտապէս հետեւող չեն եղած իր յաջորդներն, անհասկնալի մնացած

չարժառիթով մը Միւհէնտիսեան տպարանին բացման հակառակեցաւ, մերժելով իրեն սիրելի Ամիրաներուն ամէն բարեխօսութիւնները, բայց իւր սակաւօրեայ պաշտօնավարութիւնը վերջ գտնելով, այս արգելք ինքնին վերջացաւ :

Միւհէնտիսեանի կեանքը կապակցութիւն ունի թուրքիոյ ո՛չ միայն դրական և տպագրական այլ և եւրոպական զարգացման պատմութեան հետ, զի թէ՛ թղթադրամոց և թէ՛ արժեթղթոց տպագրութիւնն իր ինամօք կատարուեցաւ կէս դարէ աւելի :

Իր գծագրութիւններն են նախկին տոկոսաւոր և անտոկոս թղթադրամք, էսհամ, Թահվիլաթ Միւմթաղէ, Բոնսողիտէ ևլն. : Այս փորագրութեանց և տպագրութեանց համար կը հարկադրուի մեծ ծախսերու ներքև մտնել, քանի մը մամուլներ ևս բերել, նաև վիմագրական գործիքներ : Խրիմու պատերազմին ժամանակ դիշեր ցորեկ 60—70 գործաւոր կը բանեցնէ : Իւր արուեստը կատարելագործելու համար, իր եղբայրներն Եւրոպա զրկած էր, և անոնց ձեռքով Կ. Պոլիս կը մտցնէ կալվանօբլասի, սիտեօբիփ, զինկօկրամփի և այլ նոր ճիւղերն տպագրական բաղմատարը արուեստին : և մինչև այն ատեն սոյն արուեստներն գիտցող վարպետ չկար : Բայց այս գործառնութիւնք չհարստացուցին դինքը Վճարումներու խնդիրներ եղան, յետոյ իրմէն իր արուեստը սորված հայ մը գիները կոտրելով՝ ինք ստանձնեց շատ մը գործեր, և ի վերջոյ Միւհէնտիսեան շատ մը պարտքերու ներքև մնալով ձեռք բաշեց այս յոքնավաստակ զբաղումներէն : Ի նորոյ իրեն համար ապրուստ մը գտնելու հարկադրեալ, իր նախկին զբաղումներուն դարձաւ, նոր գրեր կերտելու, և այս անգամ օսմաներէն Աեսիխ

տառերն յօրինեց ըստ օրինակի յաւերժայիչատակ Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտի առաջին իմամ Բէյիս-իւլ-Իւլէմա և Եէյիս-իւլ-Սաթթաթիյն՝ երեւելի գեղազիր Մուսթաֆա Իզզէթ էֆէնտիի։ Այս առթիւ դրամական կարեւոր պարգև մը ստացաւ ի վարց քանի մը տարուան ծանր աշխատութեան, բայց գիրերը քիչ մը խոշոր (24 բունթօ) լինելով, շատ չգործածուեցան ամենօրեայ հրատարակութեանց մէջ, և հեղինակին այնքան շահաւոր չեղան։

Յետոյ մաքսատունը մտաւ, և դրոշմաթուղթի (վարագայի սահիհէ) փորագրութեանց պարագեցաւ։ 1876ին նոր թղթագրամին տպագրութիւնը իրեն յանձնուեցաւ։ Ինք սկզբնաւորութիւն ընելէն ետև, նոր տպագրութեանց համար Փրանսայէն վարպետ մը բերուեցաւ կրկնապատիկ թողալու, բայց երբ Փրանսայի արուեստագետին և հայ արուեստագէտին հարիւրնոց թղթագրամի համար շինած կաղտպարք բաղդատուեցան, արուեստական ճաշակի և նրբութեան կողմէ տարբերութիւն չգտնուեցաւ, և Միւհէնտիսեան նախորդ պաշտօնին մէջ վերահաստատուեցաւ։

74 տարեկանին մէջ թուրքերէն 16 բունթօ, այժմու ամէն տպարաններու գործածած 66սիխ տառերն հնարեց, 79 տարեկան էր երբ 6 բունթօնոց յոյժ մանր 66սիխ գիրերն յօրինեց։ Հարեհեով և առանց հարեհէի իր շինած գիրերուն բոլոր օրինակներն ալլօսի մը մէջ դրուած ելմտական նախարար Մահմուտ Ճէլալէտտին փաշայի ձեռամբ վեհ. Սուլթանին մատուցուելու պատիւն ունեցաւ, և չորրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշանով և գեղարուեստից շքադրամով մեծարուեցաւ։

Ամէնէն հետաքրքրականն այն է որ 80 տարեկան էր երբ ձեռնարկեց թուրքերէն ձեռագրի ձեւով բրգա գիրի հայերն յօրինելու, զոր իր մահէն մի քանի օր առաջ աւարտեց, Կայսերական լիսէի գեղագիր հռչակաւոր Իզզէթ էֆի կատարեալ հաւանութեան արժանանալով։

Վերջապէս, Յովհաննէս Միւհէնտիսեան ինքնօգնութեամբ յառաջ եկած քաջ ու ճարտար արուեստագէտ մ'էր. տեսակ մը հայ Կիւթէնպէրի իսկ, որ եթէ իր անձնական շահերու անհոգութեամբ նիւթական հարստութիւն չէր կրցած գիգել, բայց հայ և օսմանեան լրագրութեան և տպագրական արուեստն իրեն ցմիշտ երախտապարտ թողած է։

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՊՏՈՒՂՆԵՐՈՎ ԱՆՏԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ



Բաւական ժամանակէ ի վեր Եւրոպիոյ այլ և այլ երկիրներուն մանաւանդ Գերմանիոյ և Զուիցերիի մէջ բացուած են խաղող ուտելու ախտարուժական հաստատութիւններն։ Եւ յիշուի խաղողը՝ ազիքներու և ստամոքսի խանգարումներուն, արեան պակասութեան, պայտախտի և ուրիշ հիւանդութեանց դեղ կը համարուի։ Այժմ բոլորովին նոր սովորութիւն մը դարձաւ գրեթէ ամէն տեսակ պտուղի գործածութեամբ այլ և այլ տեսակ հիւանդութիւններու առաջքն առնել։

Պատուհները ցնդողական եթերներ, մարսեցուցիչ և կակղեցուցիչ թթուուկներ և թթուուտներ պարունակելէ զատ կ'ունենան սեփական համ ու հոտ՝ որոնք մարդկային խանգարուած գործարաններու վրայ նպաստաւոր ազդեցութիւններ կ'ունենան, կղկղանքը կը լուծեն, ներքին վնասակար հիւթերը շուտով կ'արտաքսեն և հիւսուածներու նորոգութիւն կը պատճառեն: Եւ որովհետեւ յիշեալ եթերային նիւթերը մեծ մասամբ պտուղներուն կեղեւին մէջ կը գտնուին, հետեւաբար պէտք չէ ստիել զանոնք՝ եթէ չենք ուզեր որ անոնց զովացուցիչ և կազդուրիչ յատկութիւնները կորսուին: Բայ աստի պտուղ մը, որպէս զի բարերար ազդեցութիւն մը ունենայ պէտք է հասուն ըլլայ, և ո՛չ տհաս կամ անցած կամ մանաւանդ փտած:

Վերոյիշեալ տեղեկութիւններու համեմատ՝ ելակը ամէն պտուղներէ ընտրելագոյն ուտելիքն է որուն սքանչելի համին կ'ընկերանան անուշ հոտ, որքեր սատկեցներու և յօդացաւ մեղմելու յատկութիւններ: Սակայն անտառաց մէջ աճող վայրի ելակները՝ մշակութեամբ ընդունուած եւ շատ տեսակ ելակներէն շատ աւելի ընտրելի են, վասն զի վայրիները մեր անդամոց յօդուածներուն մէջ դիզուող թանձր նիւթերը կը լուծեն՝ հետեւաբար յօդուածներուն ձկունութիւն կը պատճառեն, կը լուծեն նաև միզական թթուուտը որ փամփշտի և ուրիշ հիւանդութեանց պատճառ է:

Մաղձային խառնուածքի տէր անձերու համար կարմիր հաղարջը (Ֆրեկկի իւզիւմիւ) ամենաօգտակար է, վասն զի մաղձը կը նուազեցնէ, երակներուն արեան յորդութիւնը կը չափաւորէ և զովացուցիչ

է, իսկ սև տեսակը կազդուրիչ և գրգռիչ դեղ մ'է: Արքայամորն ալ (Ձմալուլա) հաղարջի յատկութիւններն ունենալէ զատ երկարատև որովայնի պնդութեան համար լուծիչ դեղ կ'ըլլայ և զովացուցիչ. ասոր վայրի տեսակը, որուն մօր կ'ըսեն, նոյն պաշտօնը կը կատարէ:

Մեծաքանակ կեռաս ուտելով արեան նորոգութիւն և զօրութիւն կը տրուի, և երիկամունքը իրենց պաշտօնը լաւ կը կատարեն:

Ծիրանը կազդուրիչ է և միանգամայն մարմնոյն աւելորդ և վնասակար նիւթերը կը մաքրէ:

Ասլորը իբր մաքրողական՝ արդէն ամէնուն ծանօթ է:

Քաղցր և անուշահոտ դեղձը ստամոքսի համար սպեղանի մ'է, իսկ շաքարախտ ունեցողներու համար միակ և գերազանց ուտելիք պտուղը պէտք է ըլլայ:

Ընկոյզն ալ պէտք չէ արհամարհել, մարսեցուցիչ է և զանազան տեսակ որդերը մարսողական գործարաններէն կը ջնջէ, մորթի ժահրերը կ'արտաքսէ՝ որոնք ընդհանրապէս երեսի վրայ կարմիր պալարներու ձեւով կը տեսնուին:

Նոյն իսկ սեխը որուն վրայ ժողովուրդը ընդհանրապէս վատ համարմունք ունի, այնպիսի առաւելութիւններ կը ներկայացնէ որ մասնաւորապէս զանազան պարագայից մէջ օգտակար կ'ըլլայ իբրև կակղեցուցիչ, լուծողական և առողջարար. ջրգողութիւնը կ'առողջացնէ և գործարաններու ու երակներու վերդովմունքը կը խաղաղեցնէ:

Տանձր առաջնակարգ մարսեցուցիչ մ'է և կարագ քսած հացէ աւելի ախորժեղի և սնուցիչ:

Խնձորը արագ և մնայուն ազդեցութիւն ունի՝

անմարտողութեան, միզային փամփշտի և երիկամունքներուն հիւանդութիւններու դէմ:

Ձղեարը ստամոքսի ընդլայման և ցաւերուն օգտակար կ'ըլլայ:

Նարինջը՝ կաշգուրիչ և ամօքիչ դեղ մ'է:

Լիմոնը՝ հակափուտ է և թանջը կամ փորհարութիւնը սեղմող և չափաւորող է:

Թուզը՝ մաքրողական է, արիւնը կը նորոգէ և զօրութիւն կուտայ, միաքը կը սրէ և կուրծքը կը կակղեցնէ:

Արմաւը միսի պէս սնուցիչ ուտելիք մ'է:

Դամասկեան փիստակը (Շամ Ֆրսսրղը) ստնտուներու կաթը կը շատցնէ:

Վերջապէս եթէ կ'ուզէք առողջ կազմուածք մ'ունենալ, պէտք է առատ պտուղ ուտել:



ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ

ԵՐԿՐԻՍ ՄԵԾԱԳՈՅՆ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆԸ ԲՐԻՏԱնական կայսրութիւնը ըլլալով կը պարունակէ մէկ ցամաք երկիր, 200 թերակղզի, 500 հրուանդան, 1000 լիճ, 2000 գետ, և 10,500 կղզի: Հին կայսրութեանց հետ բազմատեղով՝ հարստութեամբ կը գերազանցէ Ասորեստանցւոց կայսրութիւնը, բնակիչով՝

Հռովմայեցւոց կայսրութիւնը, իսկ տարածութեամբ՝ Մարաց թագաւորութիւնը: Իր տարածութիւնը 11,339,316 քառ. մղոն ըլլալով երկրիս ամբողջ ցամաքին 21% է, իսկ բնակիչներուն թիւը 402,515,500 է որ աշխարհիս բոլոր բնակչաց 27% կը հաշուուի: Իր մայրաքաղաքը՝ Լոնտոն՝ դարձեալ աշխարհիս մեծագոյն քաղաքն է, բաժնուած չորս գլխաւոր մասերու: Բնակչաց թիւը 4,250,000ի կը հասնի, որ հաւասար է Բարիզի, Պէրլինի, Ս. Բէթրսպուրկի և Հռովմի բնակիչներուն թիւին, իր բոլոր փողոցներէն, պողոտաներէն, նրբափողոցներէն և ծառուղիներէն միայն մէկ անգամ անցնելու համար պէտք պիտի ըլլար օրը 40 մղոն ճամբայ ընելով ինը տարի շարունակ քալել: Եւ եթէ կարելի ըլլար իր փողոցները մէկ կարգի վրայ շարել՝ անոնց երկայնութիւնը ամբողջ երկիրը շրջապատելէն ետքը դարձեալ բուսական ճամբայ պիտի մնար՝ Լոնտոնէն մինչև Սանֆրանչիսքօ երկարելու:

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՆԵՐՈՒ ԱՄԷՆԷՆ ՆՇԱՆԱՒՈՐ ԳՈՐԾԸ կը կարծուի ըլլալ Քարնաքի տաճարը, որ գրաւած է 9 ակրօնի (1 ակրօնը հաւասար է 4 արտավարի) չափ ընդարձակ տեղ մը՝ այսինքն Հռոմայ Ս. Պետրոս եկեղեցւոյն կրկնապատիկը: Հոս կը գտնուին ահագին կոթողներ, գեղեցիկ դաւիթներ և սպինքսներու սքանչելի պողոտաներ:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՄԱՏԵՆԱԴՅՐԱՆԸ Բարիզի ազգային մատենադարանն է, կը պարունակէ 40 մղոնի չափ դարակ, որոնց մէջ զետեղուած են, 1,400,000էն աւելի տպագրեալ գիրք, 175,000 ձեռագիր մատենաներ, 300,000 աշխարհագրական քարտէս, 150,000 հին դրամ և շքադրամներ:

ՄԱՐԴՈՒ ԶԵՌՔՈՎ ՇԻՆՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱ-
ԳՈՅՆ ՇԷՆՔԸ ասկէ 4000 տարի առաջ հիմնուած
Կէտրսի բուրգն է Գահիրէի մէջ: 20.000 մարդ շա-
րունակ աշխատելով հազիւ կարող եղած են քսան
տարւոյ մէջ աւարտել սոյն հսկայ գործը և ատոր
համար գործածուած ահագին քարերը 700 մղոն
հեռու Արաբիայէն բերուած են: Շինութեան ծախքը
3.625,000 օսմ. ոսկի:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՁԱՆԸ ՆԻՒ ԵՕՐՔԻ նա-
ւահանգստին վրայ գտնուած Պարթոլտի արձանն
է որ 1885ին Ֆրանսա Ամերիկայի նուիրած է և
որու ծախքը 40,000 տոլարի (1 տոլարը 25 դր. է)
կը հասնի: Հիմէն մինչև գիցուհիին գլուխին վրայ
բռնած ջահի բարձրութիւնն է 151 ոտք: Գիցուհին
ամբողջովին պղինձէ շինուած և կայնած է 88 ոտք
բարձր պատուանդանի մը վրայ: Իսկ բռնած ջահին
մէջ՝ օւր ոլորագոյտ սանդուղով մը կարելի է ելլել
12 մարդ հանգիստ կերպով կրնան նստիլ: Հողոսի
արձանն ալ նշանաւոր էր իր մեծութեամբ, որ
Քրիստոսէ 285 տարի առաջ աւարտած է Լէնդոնցի
Քարէսի ձեռքով: Աւանդաբար կը յիշատակուի թէ՛
սոյն արձանին բարձրութիւնը 70 գրկաչափ էր, և
իւր երկու սրունքներուն մէջէն մեծամեծ նաւեր
կ'անցնէին: Նոյնպէս կը յիշատակուի թէ՛ սոյն արձա-
նին կործանուէն յետոյ իր բեկորներն 1000 ուղտի
բեռ եղած են:

ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՀԱՐՁԱՆԸ Ուա-
շինկթընի մէջ կանգնուած է ի յիշատակ Գէորգ
Ուաշինկթընի, 2 ոտք հաստութեամբ 18,000 մար-
մարիոնի մեծ կտորներէ շինուած: Իր ներքնակողմը
գտնուած սանդուղով կարելի է շերիմին ամէն կողմը
չըլիլ:

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՓԱՌԱՒՈՐ ՇԻՐԻՄԸ Հնդկաս-
տանի Ակրա քաղաքին մէջ գտնուած Թաճ Մահալի
շերիմն է: Շահ ձիհան կանգնած է ի յիշատակ իւր
սիրեցեալ կողակիցին Մամթազ Ձէմանի կամ Արզա-
մունտ Պանուխի: Ամբողջ շէնքը քառակուսի է, որու ան-
կիւնները կտրուած են, սոյն շէնքին կեդրոնն եղած
ութանկիւն սրահին վրայ գմբէթ մը կայ, սրահին
չուրջը նուիրական վանդակ մը կայ՝ բարակ մարմա-
րիոնէ փորուած՝ տարօրինակ վարպետութեամբ:
Հոն է Մամթազ Ձէմանիի դագաղն, որոյ մարմարին
վրայ թանկագին զմրուխտներով և ազամանգներով
զրուագներ շինուած են: Սոյն շերիմին քով կայ նաև
ուրիշ շքեղ դագաղ մը, որու մէջ կը հանգչի Շահ
ձիհան, որ 1663ին վախճանած է: Ամբողջ շերիմները
մաքուր ձերմակ մարմարիոնէ և յասպիս, փերուզակ,
մեղեխիկ և շափիղայ թանկագին քարերով զարդեր
յօրինուած է: 22,000 մարդ 20 տարի շարունակ
գործելով հազիւ կարող եղած են աւարտել: Աշխա-
տութիւնը ձրի և շատ նուէրներ ունենալով հանդերձ
ծախք գացած է 2 միլիոն սթէպլին: Թաճ Մահալի
շէնքն ունի 186 քառակուսի ոտք տարածութիւն
և 200 ոտք բարձրութիւն:

ԱՇԽԱՐՀԻՄ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՌԿԱՆ ԿԱՄՈՒՐՁԸ Պրուք-
լինի կամուրջն է, իսթ Ռիվըրի (արեւելեան գետ)
վրայ ձգուած է, որ Նիւ—Եօրքը Պրուքլինի հետ կը
միացնէ: Ասոր առաջին ճարտարապետն է ձօն Ռօպ-
լինկ, որ 1869ին սեռնելով՝ իր սրղին Ա. Ռօպլինկ
հօրը յաջորդեց և անոր շինած յատակագծին համե-
մատ գործն ի գլուխ հանեց:

Սոյն հսկայ կամուրջին շինութեան ձեռնարկուեցաւ
1870 Յունվար 3ին և աւարտեցաւ 1883 մայիս 24ին:

Ամբողջ երկայնութիւնն է 1826,60 մէթր, ծայրի երկու աշտարակներն 84,25 մէթր բարձր են ծովու մակերեւութէն և կամուրջին ու գետին մէջտեղ 41.17 մէթր միջոց մը կայ: Կամուրջին գետինը ամբողջապէս պողպատէ է՝ 26.20 մէթր լայնութիւն ունի և հինգ ճամբայ ունի, մէջտեղինը հետիտաներու համար է: Երկուքը՝ պարանաձգական դրութիւնով շարժող վառիմներու և երկու ճամբայ ուրիշ տեսակ կառքերու համար: Ամբողջ կամուրջին ծանրութիւնը 6470 թօնո կը կռէ և ծախք եղած է 3,260,000 օսմ. ոսկի:

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱԳԵՂԵՅԻԿ ԿՍՄՈՒՐՁԸ Ամերիկայի Սրիգոնա քաղաքին մէջ գտնուած եղնգաքարէ շինուած կամուրջն է: 3—4 ոտք տրամագծով և 40 ոտք լայն բացուածքով մը քարացեալ ծառ մըն է, երկայնութեան մեծ մասը տեսանելի և իր երկու ծայրերը աւազաքարի մէջ թաղուած:

ԱՇԽԱՐՀԻՍ ՄԻՍԿՏՈՒՐ ԿՍՄՈՒՐՁԸ կը գտնուի Քօլումպիոյ Ֆիլադալֆուզա փոքրիկ քաղքին մօտերը: Հարաւ. Ամերիկայի ամէնէն հեռաքրքրական հրաշալիքներէն մին է: Այս կամուրջը բնականէն ձեւացած է և ունի 7 մէթր երկայնութիւն և 6 մէթր լայնութիւն, միակտուր քար մըն է որ 77 մէթր խորութիւն ունեցող անդունդի մը վրայ հաստատուած է:

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵՐՍ ԱՄՓԻԹՍՏՐՈՆԸ Վեսպա սիանոս կայսրը սկսաւ շինել Հռոմի մէջ գոր աւարտեց Տիտոս կայսրը Քրիստոսի 80 թուականին: Նախապէս վայրի կենդանիներու մըրցման յատկացեալ կրկէս մըն էր: Այժմ կիտակործան է, որու ամբողջ տարածութիւնն էր 20,000 քառ. մէթր: Կրկէսը որ ձուած էր, 80 մէթր երկայնութիւն և 46 մէթր լայնութիւն ունէր: Ամբողջ շէնքը

կրնար մինչև 90,000 հանդիսական պարունակել: Սոյն կրկէսին բեմը 3000 պղնձի արձաններով զարդարուած էր, և շէնքին ներքև փորուած նկուզներուն մէջ 500 առիւծ, 50 փիղ, վագրեր, ցուլեր, ինձեր կը մանչէին:

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԱՐ ԿՈԹՈՂԸ կը գտնուի Հռոմի մէջ, որ կանգնել տուաւ Սեքստոս Ե. Պապը 1588 օրոտա. 10ին Ֆօնթանա ճարտարապետին ձեռք, Ս. Յովհաննէս Լոթրանա եկեղեցիին առջև, որու անունը կը կրէ: Այս կոթողը Թէրէէն հանուեցաւ Կոստանդիանոս կայսեր հրամանաւ և Հռոմ բեքուեցաւ 300 թիափարով ցուկանաւի մը մէջ գրուած: Ասիկա 32 մէթրէն աւելի բարձրութիւն ունի և Քրիստոսէ 1750 տարի առաջ շինուած է:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵՐՍԱԳՈՅՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՆ Հռոմայ Ս. Պետրոս եկեղեցին է, որ Յուլիոս Բ. Պապը՝ նախկին Ս. Պետրոս եկեղեցոյն վերջին ծայր հին ու փլէկու վիճակը տեսնելով՝ զայն ի հիմանց կառուցանելու փափաքով Պրամանա ճարտարապետին յանձնեց: Առաջին քարը դրուեցաւ 1500 ապրիլ 19ին: Սոյն եկեղեցոյն շինութիւնն ի բաց աւեալ սրբավայրերն և Ժ.Ղ. դարուն մէջ շինուած մօզայիքներն, մէկ ու կէս դարէն աւելի տեսեց: Անոր շինութեան օրով 22 Պապեր աթոռ ելան. Պրամանտէն մինչև Պէրնէն հեղահեռէ 13 ճարտարապետներ աշխատեցան անոր: Ծախքն՝ 1593ին 251,400,000 ֆրանք կը հաշուէր, ինչ որ այսօր կրկինը կ'արժէ, այսինքն շուրջ 500 միլիոն ֆր. կամ 21,740,000 օսմ. ոսկի:

Մեծութիւնը հսկայական է, արտաքին երկայնութիւնն է 219 մէթր, ներքին երկայնութիւնն է՝ մէկ կիտապուշտէն միւսը 154 մէթր է: Գմբէթին զազաթի

լուսանցքը 101 մէթր բարձր է գետնէն:— Ամբողջ շէնքին մակերեւոյթն է գրեթէ 23,000 քառ. մէթր, առանց հաշուելու սրբավայրն և երկրորդական մասերն:

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵԾ ՊԱՐԻՍՊԸ կը գտնուի Չինաստանի հիւսիսային ամբողջ սահմանին վրայ, որով կը բաժնուի Թաթարիստանէն: Սոյն պարսպին երկայնութիւնն է 1500 մղոն. եթէ ամբողջ պարսպին երկայնութեամբը քալել հարկ ըլլայ 1000 ժամու ճամբայ է: Բարձրութիւնը տեղ տեղ 20—25 անգ- զիական ստնաչափ է իսկ հաստութիւնը 15: Ամէն 100 կանգուն հեռաւորութեան մէջ աշտարակներ շինուած են, ամէն մէկը 48 ստնաչափ բարձրութեամբ:

Կ'ըսուի թէ 2000 տարւոյ չափ առաջ շինուած է: ԱՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ ԾՈՒՌ ԱՇՏԱՐԱԿՆԵՐԸ Իտալիոյ Բիզա քաղաքին մէջ կը գտնուին: Ասոնց- մէ ամէնէն հինը, որ Ազինէլի կ'ըսուի, Իտալիոյ բարձր շէնքերէն մէկն է: Յայտնի չէ թէ ո՞ր ժամա- նակ շինուած է. աւանդութեամբ կ'ըսուի թէ 1000 տարիէն աւելի հին է: Ասոր բարձրութիւնը գետնի երեսէն 256 ստնաչափ ու 7 բթաչափ է. ծառքիւնը 4 ստնաչափ ու 11 բթաչափ է:— Երկրորդը Կա- րիզնատի կ'ըսուի, 1110ին շինուած է Կարիզնատի կոչուած ցեղին ծախքով: Ասոր բարձրութիւնն է 130 ստնաչափ, ծառքիւնն է 8 ստնաչափ դէպի արեւելք ու 3 ստնաչափ ալ դէպ ի հարաւ:

ԱՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ ԶՐԱՆՑՔՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆԸ Սուէզի ջրանցքն է, որ 1859ին պեղելու ձեռնարկե- ցին և 1869 օգոստ. 15ին բացուեցաւ Պ. Լէսէրսի առաջնորդութեամբ: Ծախք գացած է 25 միլիոն օսմ. ոսկի: Զրանցքին մէկ կողմէն միւսը անցնելու ժամանակին տեւողութիւնն է 19 ժամ և 52 վայրկ.:

Բայց Չինաստանի կայսերական ջրանցքը 1000 մղոն երկայնութիւն ունենալով աշխարհի ամէնէն մեծ ջրանցքը կը համարուի:

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՇՏԱՐԱԿԸ Բարիզի մէջ 1889ին բացուած արուեստահանդէսին համար կառուց նշանաւոր երկրաչափ—ճարտարագէտ Պ. Էյֆէլ: Սոյն աշտարակը 300 մէթր բարձրութիւն ունի և չորս յարկէ կը բաղկանայ, որոնք բուրգի ձև մը կուտան շէնքին և որոնց երեսը կլոր է: Իւրաքանչիւր յարկ կը ներկայացնէ քառակուսի մաս մը, որ վաղէն դէպ ի վեր երթալով կը նեղնայ և կարծես կը կազմէ վան- դակապատ արկղ մը, որոյ յատակը 15 մէթր երկայն է, իսկ վերի գագաթը 5 մէթր:

ԱՇԽԱՐՀԻ ԳԵՂԵՅԿԱԳՈՅՆ ՊԱՐՏԷՉՆԵՐԸ կը գըտ- նուին Անդլիոյ մէջ: Արքունական պարտէզներն են ասոնք և կը գրաւեն 170 ակրօնի չափ տարածու- թիւն: Հոս ամենագեղեցիկ լտարաշխարհիկ բոյսերու հաւաքածոյ՝ մը, ձմեռնային պարտէզ մը, միւսէն մը, գիտանոց մը և բուսաբանական վարժարան մը գըտ- նուելով, ամէն տարի 1,500,000 այցելուներ տեսնելու կ'երթան:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԾԱՂԻԿԸ Սոււմադրա կղզւոյն Բաֆլէսիա Ռինօլտի կոչուած ծագիկն է. իր Էկոկոն- ներն խոշոր կաղամբի, իսկ ինքն կառքի մը առջեւի անիւին չափ է. այս անագին ծագիկին հինգ ձեռնակ թերթերը անհամար մանրիչակագոյն առէջքներու բու- լորաիքը կ'ածին, ծանրութիւնը 15 օլիպրա ըլլալով 2 կալօնի չափ ջուր կը պարունակէ:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԶԱՆԳԱԿԸ ձաբոնի ետտոյ մալրաքաղաքի մեծ մեհեանին մէջ կը գտնուի: Մու- կուայի 68 ոտք շրջապատ և 21 ոտք բարձրութիւն ունեցող զանգակին քառապատիկն է:

Խ Ն Դ Ո Ի Ք

Չափազանց գէր մարդ մը ճամբորդութիւն պիտի ընէր, ծառան զրկեց որ թրամուէյին մէջ երկու հոգիի համար տոմսակ առնէ. այս կերպիւ կը մտածէր, ուղածին պէս հանգիստ կրնայ նստիլ:

Ծառան երկու տոմսակները առած եկաւ. տոմսակներէն մին կառքին մէջ նստելու համար էր, իսկ միւսը կառքին վրայ:

§ Պառաւ աղջիկ մը որ գրացիներուն տանը մէջ անցած դորձածին, իր տանը մէջ եղածներէն աւելի լաւ տեղեակ էր, շատ ծանր հիւանդ պառկած էր: Դրան զանգակի ձայն մը լսեց, և հիւանդապահ կնոջ ըսաւ,

— Դիմացի Գ...ին դրան զանգակին ձայնն է, գնա՛ նայէ օ՞վ է:

Հիւանդապահ կինը կ'երթայ կը նայի և դառնալով կ'ըսէ:

— Անուշեղէն ծախողին ծառան կարկանդակ բերեր է:

— Կարկանդակ, դեռ երէկ կերան կարկանդակ: Եւ այս խօսքերն ըսելով կը մեռի:

§ Ընտանեկան տեսարան:

Տիկինը. — Շատ կը փափաքիմ մէկ քանի օր մայրիկիս երթալու, բայց կը վախնամ որ մինակդ կը ճանձրանաս հոս:

Պարոնը. — Ո՛չ, բնաւ չեմ ճանձրանար, ընդհակառակը ...:

Տիկինը. — Ուրեմն չեմ երթար:

§ Մարդուն մէկը, ընտանեկան երեկոյթի մը մէջ, իր էջուն խելացութիւնը կը գովէր:

— Արդեօք ճնաղքէ՞ն սորվեր է, կը հարցնեն իրեն:

— Այո՛, այո՛, ես սորվեցուցի:

§ Յառաջգիմութեան սահման:

Մերուկ մը. — Երբ ներկայ ժամանակիս երիտասարդները ձերանան, չեմ յուսար որ բաւական լոյս պիտի գտնեն կարգալու համար:

Բարեկամ մը. — Ինչո՞ւ համար:

Մերուկը. — Երբ մանուկ էի՝ հողէ կանգեղի մը մէջ լեցուած ձիթախաղով կը լուսաւորէինք, երբ քիչ մը մեծցայ՝ մամձիներուն շինած ճարպէ մամ կը գործածէինք, երբ քանի մը տարի ալ անցաւ՝ ձիթախաղով լամբար և սբարմաչէթ մամ կը գործածէինք, մէկ քանի տարիներ վերջ քարիւղի փոխեցինք լամբարնիս, քիչ մը վերջն ալ օգային կազ գործածել սկսանք, հիմա ելեքտրական լոյս ունինք և դեռ լաւ կը տեսնեմ: Ելեքտրական լոյսով կրնամ կարգաւ ճիշդ այնպէս՝ ինչպէս երբեմն կը կարգայի իւղին կանթեղին լոյսովը: Բայց ելեքտրական լոյսով կարգաւ սկսող մանուկները ի՞նչ պիտի ընեն երբ ձերանան, գիտնալ՝ հասկնալ կ'ուզեմ:

§ Ի՞նչ դժբաղդ մարդ մըն եմ, կ'ըսէր կեղծ ստորագրութիւն շինող անձ մը, երկու ամիս աշխատեցայ որ միլիոնատէրի մը ստորագրութիւնը կեղծել

սորվիմ և երբ վերջապէս յաջողեցայ ճիշտ նմանը շինել, անպիտանը սնանկացաւ :

§ Ծերունի տիկին վանտօմ իր ամուսնոյն յուզարկաւորութիւնը տեսնելով՝ ըսաւ .

Աւա՛ղ, խեղճ մարդը որքա՛ն գոհ և ուրախ պիտի ըլլար, եթէ տեսնէր թէ ո՛րքան ազւար են այս ամէներ :

§ Սիրուն տիկին մը կը հարցնէր Ֆօնթնէլի թէ՛ ի՞նչ տարբերութիւն կայ իր և ժամացոյցի մը միջեւ :

— Ժամացոյցը, պատասխանեց Ֆօնթնէլ, ժամերը մեզի կը յիշեցնէ և դուք զանանք մոռցնել կուտաք :

§ Փրկիտօփայ մը իր աղջիկը կնութեան կուտայ իր ոխերիմ թշնամիին . կը հարցնեն թէ ինչո՞ւ այդպէս ըրաւ :

— Որովհետեւ աշխարհիս մէջ գտնուող ամէնէն չար կինը տուի իրին և կարծեմ ասկից աւելի լաւ կերպիւ վրէժս չէի կրնար լուծել :

§ Դասասուն . — Պարօ՛ններ, գիտե՞ք թէ ինչո՞ւ խոտերը ամառ ժամանակ կը բուսնին :

Չարածճի՛ բայց սրամիտ աշակերտ մը

— Որովհետեւ էջերն ալ ամառը կը ծնին :

§ Պարօն մը իր սպասաւորին

— Թշուառակա՛ն, քեզ պիտի վունտեմ, այդ ի՞նչ պէս կը քնանայիր որ գողերուն տունս մտնելը չիմացար :

— Իմացայ, պարօն, իմացայ, սակայն ձեզ կարծեցի . երէկ իրիկուն տիկինը ա՛յնքան հիւանդ կ'երևէր որ . . . :

§ Մանկամարդ գեղջկուհի մը կը վագէր իր մատակ իշուն ետեւէն որ իր ձագը գտնելու կ'երթար : Երկտասարդ պարօն մը՝ գեղջկուհիին սիրուն դէմքէն հրապուրուած՝ կը կեցնէ զայն և կը հարցնէ .

— Ո՞ր տեղացի էք, սիրուններ :

— Խարթալէն, պարօններ :

— Վա՛յ, իրա՛ւ, Խարթալէ՞ն էք, ըսել է կը ճանչ-

նաք Ս . . . ի աղջիկը :

— Այո՛, պարօն, խիտ լաւ կը ճանչնամ, գրեթէ դրացի ենք :

— Ուրեմն իմ կողմէս համբոյր մը տանէիք անոր : Եւ մինչ կը պատրաստուէր անոր մօտեմալ ու զանի համբուրել, գեղջկուհին իսկոյն կը պատասխանէ անպիտանութեամբ :

— Պարօ՛ն, եթէ այդչափ անպարելու պէտք ունիք, կրնաք այդ համբոյրը իշուն տալ, անիկա ինձ մէ առաջ գիւղ պիտի հասնի :

§ Չարպիկ թէյսովաճառ մը հետեւեալ ծանուցումն ըրած է լրագրաց մէջ : «Այն անձը որ կրնայ կատարելապէս ապացուցանել թէ իմ վաճառած թէյս առողջութեան վնասակար է, անոնցմէ տասը տուփ ձրի պիտի ընդունի :

§ Ակնոցովաճառ մը իր նոր գրագրին .

— Ինձի նայէ, այդ նամակները այդպէս խոշոր գիրերով գրել չըլլար, պէտք է այնչափ փոքր գիրով գրես որ կարգացողները ակնոցի անհրաժեշտ պէտք գգան :

§ Կարախնալ Տիւպուա գործակատար մը ունէր

որուն գողութիւններն ու խարէութիւնները իրեն ծանօթ էին :

Կաղանդին, ըստ սովորութեան գործակատարն ալ կուգայ ու զինքը կը շնորհաւորէ, կարտինալը շնորհաւորութիւնները ընդունելէն վերջ, փոխանակ միւսներուն պէս անոր ալ նուէր մը տալու, կ'ըսէ :

— Պարո՛ն, ձեզի կուտամ ինչ որ ինձմէ գողցաք այս տարի :

§ Օրբորդ Վարդուհի. — Հօրեղբայր, հեռագիր մը պիտի գրեմ, բայց չեմ գիտեր ինչպէ՛ս կ'ընեն : Կ'ուզեմ մօրաքրոջն աղջկան իմացնել թէ չպիտի կրնամ էտիրնէ երթալ զինքը տեսնել : շատ ծախք կ'երթայ :

Հօրեղբայր. — Շատ դիւրին է : Ճիշդ գրէ ինչպէս որ իրեն պիտի ըսէիր թէ որ հոս ըլլար :

Օրբորդ Վ. — Այնպէ՛ս է. (կ'առանձնանայ և կէս ժամ յետոյ հեռագիրը կը ցուցնէ) :

Հօրեղբայր. — Օ՛, այս ինչ է, ինձի նայէ, սիրելիս, այդ հեռագիրը զրկելէդ շատ աւելի աժան կ'ըլլայ եթէ գուն անձամբ էտիրնէ երթաս և իրեն տաս զանի :

§ Իովաննայի մը. — Ա՛հ, իմ տղաս սպազային մեծ յոյսեր կուտայ, հիմակուրնէ կը տեսնեմ թէ կատարեալ գործի մարդ պիտի ըլլայ : Անցեալ օր ըսի իրեն որ երբ մեռնիմ, ամբողջ հարստութիւնս իրեն պիտի ձգեմ. պատասխանեց թէ՛ հարիւրին հինգ կը զեղչէ կանխիկ վճարման համար :

§ Շիք և դարավերջիկ երիտասարդ մը ընկերութեան մը մէջ վայելչապէս հագուած գեղեցիկ կնոջ մը ոտքին վրայ կը կոխէ :

— Խնդրեմ, պարոն, քիչ մը ուշադրութեամբ քալէիք որ այսպէս ամէնուն ոտքին վրայ չկոխէք :

— Օ՛հ, ներեցէք տիկին, բայց ձեր ոտքերը տեսնելու համար մարդ խոշորացոյց գործածելու է :

§ Պ. Գ... իր ծառային կը պատուիրէ

— Անթուա՛ն, ճամբորդութիւն մը պիտի ընեմ, և մինչեւ երեքշաբթի չեմ գար. եթէ մինչեւ այն օրը իմ բարեկամս Թ... գայ զիս հարցնէ, կ'ըսես իրեն թէ երեքշաբթի օր կուգամ :

— Իսկ եթէ չգայ, ի՞նչ պէտք է ըսել իրեն :

§ — Կը յօրանջէ՞ք, կ'ըսէր կին մը իր ամուսինին :

— Թերեւս, պատասխանեց ամուսինը, այր և կին միեւնոյն անձը կը կազմեն, ուստի երբ առանձին ըլլամ, կը նեղանամ :

§ Սսկրատ փողոցին մէջ ոտքի հարուած մը ընդունած ըլլալով կոշտ երիտասարդէ մը, ակնատես եղողները խնդրեցին իրմէ որ անկիրթը դատի հրաւիրէ :

— Եթէ էջ մը տյոգ բանը ըրած ըլլար, միթէ զայն դատի պիտի կանչէի :



Ձ Ե Ռ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արբանթենեի, ձեռագիրտութեան հեղինակը, ձեռքի եօթը տեսակներ որոշած և ընդունած է, նախնական ձեռք, գործնական ձեռք, արուեստագիտական ձեռք, ֆիզիոսոփայական ձեռք, հոգեկան ձեռք: Իր յաջորդը Տէպարօլ, զանոնք երեքի բաժնած է, սրածայր ձեռք, ֆառակուսի ձեռք, և բահածու ձեռք:

Ձեռագիրտութեան հեղինակին ընդունած եօթը թիքերը ներկայացնենք քանի մը սողերով, քանի որ մեր նպատակը չէ՛ բուն արուեստական մանրամասնութիւններու մէջ մտնել:

Նախնական ձեռք. (Main élémentaire).— Նախնական ձեռքի գլխաւոր նկարագիրներն են, կարծ, գէր, թանձր, ուռեցածի պէս և ինք իր վրայ ժողվուած. մատները կարծ են և թանձր ու ձեռքին պէս դժուարութիւնով կը ծռին: Այս տեսակ ձեռք ունին անոնք որ ստորին, ծանր աշխատութիւններ կը կրեն (քարակոփներ, մշակներ, սրմնագիրներ, ևն.): Երկրագնդիս ամէնէն վերին կողմերը բնակող ժողովուրդներն ալ, ինչպէս Լափոնները, էսքիմացիները, նախնական ձեռք ունին:

Նախնական ձեռք ունեցող անձերուն միտքը ծանր և ծոյլ է. երեւակայութիւնը՝ խիստ յամր: Հոգեկան յուզումներու քիչ ընդունակութիւն ունին, ամէն տեսակ բաներու մէջ անփոյթ են, և անգոր բարոյական վիշտերու մէջ:

Գործնական ձեռք. (Main utile). — Գործնական

ձեռքին նկարագիրներն են, մեծ, սեղմ, և փորուած ափ մը, մատները քառակուսի են. այս ձեռքը ընդհանրապէս մեծ և լեցուն է, բայց ո՛չ թէ գէր և ուռած. կը ցուցնէ կարգապահութեան, հեռատեսութեան և կանոնաւորութեան ոգի: Այն մարդերը որ գործնական ձեռք ունին, գործունեայ, աշխատասէր, իրապաշտ և դրական են իրենց գործերուն մէջ, կը սիրեն համաչափութիւնը և դասաւորումը: Գործնական ձեռք ամէնէն աւելի շատ Չինաստանի մէջ կայ:

Բահածու ձեռք (Main en spatulé).— Բահածու ձեռքերու կը վերաբերին այն ամէն ձեռքերը որոնց մատներուն ծայրը աւելի լայն է: այնպէս մը որ գեղագործներու գեղարանին կը նմանի: Այս տեսակ ձեռքեր ունին անոնք որ գործունէութեան, շարժումի պէտք ունին, որոնք տեղերնին կենալ չեն ուզեր, և ամէն բանի մէջ ձեռք կը խօթին: Հիւսիսային երկիրներու բնակիչները ընդհանրապէս աւելի բահածու մատներ կ'ունենան:

Բահածու մատները կը ցուցնեն նկարագրի անկախութիւն, հպարտութիւն, գործունէութիւն, անտեսազխտութիւն, ժուժկալութիւն, հիւրասիրութիւն ևն.:

Արուեստագիտական ձեռք. (Main artistique).— Արուեստագիտական ձեռքերը լեցուն ոգորկ, գերուկ են և փոսիկներ ունին, մտքը ճերմակ է և սղորկ, ափը մտուտ է և քիչ մը պնդակազմ, մատները սղորկ և անհամբոյց:

Կը ցուցնեն յափշտակութիւն, չափազանցութիւն, պարծենկոտութիւն, հետաքրքրութիւն, ճոխութիւն, հաճոյքի սէր: Այն մարդերը՝ որ արուեստագիտական ձեռք ունին, գաղափարէ աւելի զգացում ունին,

աւելի պատճառանք քան տրամաբանութիւն, աւելի սէր կը տեսնեն երեւակայութեան աչքով՝ քան խորհրդածութեան աչքով: Արուեստագիտական ձեռքեր աւելի շատ կը գտնուին արեւելքի մէջ՝ ուր ճոխութիւնը և հաճոյքը մարդոց գլխաւոր պէտքերը կը համարուին:

Փիլիսոփայական ձեռք (Main philosophique). — Փիլիսոփայական ձեռքերուն ամբ կ'ըլլայ. կ'ունենայ հանգուցներ՝ որ մասներուն վրայ աւելի կամ նուազ շեշտուած են. մասներուն կոճերը կէսօրածայր են, և կը կազմեն տեսակ մը ձուածե բահ: Անոնց բխամատը կը ցուցնէ որչափ կամք՝ նայնչափ ալ տրամաբանութիւն:

Անոնք որ փիլիսոփայական ձեռքեր ունին, կը սիրեն բացարձակ ճշմարտութիւնը, արդարասիրութիւնը և մտածելու անկախութիւնը, վերջապէս ունին այն ամէն կարողութիւնները՝ որ կրնան բղխիլ մեծ և լայն միտքէ մը: Անոնք կրօնասէր են քան ջերմեամեղ, հաստացեալ քան աւելորդապաշտ, անոնց հաստքը ազատ է, և անկախ՝ անոնց կարծիքը կամ գաւառանքը: Փիլիսոփայական ձեռքերը գրեթէ բոլոր ժողովուրդներուն մէջ ալ կան:

Հոգեկան ձեռք (Main psychique). — Անոնք ամէնէն աւելի գեղեցիկներն են, և շատ քիչ կը գտնուին: Մարդուն անձին հետ բաղդատելով փոքր և նուրբ են, ունին միջին տեսակէ ամբ մը, և մասները շատ քիչ հանգուցաւոր են, կոճերը երկայն և բարակ կ'ըլլան, բխամասները փոքր և սիրուն: Կը ցուցնեն զօրութիւն, վայելչութիւն, ազնուութիւն, նրբամբուսութիւն: Անոնք որ ունին հոգեկան ձեռք, կը սիրեն երթալ երազներու աշխարհին մէջ, կը սիրեն

բանաստեղծութիւնը, հոգին անոնց առաջնորդն է: Ասիոյ մէջ հոգեկան ձեռքեր շատ կան:

Խառն ձեռք (Main mixte). — Խառն ձեռքերը խառնուրդն են մեր ցուցուցած թիքերուն, աւելի շատ կը գտնուին կեդրոնական երկիրներու մէջ:



ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ԾՐԱՐ ՄԸ

Օր մը Բէշթա քաղաքէն նշանաւոր բժիշկի մը, Տօքթ. Բ...ի, կ'այցելէ օտարական մը: Դիւրին էր նշմարել իր աժգոյն դէմքին վրայ ֆիզիքական և բարոյական առաւայանքներու նշաններ, իր աջ ձեռքը թեւակալէ մը կախած էր, և թէեւ կը շնորհ զգացած ցաւը ծածկել, բայց մերթ ընդ մերթ կ'ըստիպուէր խուլ հառաջ մը արձակել:

— Միթէ դժուր էք. Տօքթէօն Բ... հարցուց օտարականը ցած ու նուազած ձայնով:

— Այո՛ պարոն, այդ է իմ անունս:

— Իմ բնակարանս գիւղն ըլլալով ձեր համբաւը լսած եմ: Բայց չեմ կարող ըսել որ շատ կ'ուրախանամ ձեզ հետ ծանօթանալուս, վասն զի իմ այս այցելութիւնս շատ ախորժելի չէ:

Տեսնելով որ օտարականը հազիւ կարող է սոքի վրայ կենալու, բժիշկը հրաւիրեց որ նստի:

— Արդարեւ շատ հոգնած եմ, շարժեմ մը ի վեր

աչքերս չեմ գոցած, ցաւ մը ունիմ աջ ձեռքես վրայ, չգիտեմ թէ ինչ ցաւ է—արդեօք պալա՞ր մըն է թէ ոչ սարատան: Առաջ շատ թեթեւ էր ցաւը, բայց հիմակ շարունակական է, ստակալի կերպով կ'այրի և օրէ օր կը սաստկանայ: Այլեւս չեմ կարող դիմանալ. ուստի կառքը մտայ շուտով և ձեզի եկայ, որպէս զի խնդրեմ որ կտրէք հանէք ցաւած տեղն, վասն զի եթէ այս տանջանքս ժամ մը եւս տեւէ պիտի խենթեմ:

— Ո՞ւր է ցաւած տեղը:

— Ահա՛, պարոն, ըսաւ օտարականը ցոյց տալով ձեռքին վրայ կէտ մը ուր զիրար կը կտրեն երկու լայն երակներ, մինչդեռ իր բոլոր մարմինը կը դողար՝ երբ բժիշկը իր մատին ծայրովը թեթեւ մը նոյն տեղին դպաւ:

— Ահա՛ այդ տեղը կ'զգամ հրակէզ ցաւ մը. ահուելի:

— Միթէ կ'զգամք ճնշումը երբ մատս վրան կը դնեմ:

Օտարականը պատասխան չտուաւ, բայց իր աչքերն արտասուօք լեցան, այնքան կծու էր ցաւը:

— Չարմանալի՛ է, բան մը չեմ նշմարեր այդ տեղը:

— Եւ ոչ ես, և սակայն զգացած ցաւս այնքան ահուելի է որ տտեն տտեն կը փափաքիմ գլուխս պատին դարնել և զայն ջախջախել:

Բժիշկը վերտոլն քննեց նոյն տեղն խոշորացոյցով մը և ապա գլուխը շարժեց:

— Մորթը անվթար է, արիւնը կանոնաւորապէս կը կատարէ իր շրջանը, ո՛չ բորբոքում կայ և ո՛չ խլիրդ անոր տակ, այնքան առողջ է որքան մարմինիդ միւս կողմերը:

— Սակայն կարծեմ թէ այս տեղ աւելի կարմիր է:

— Ո՞ւր:

Օտարականը ժառիտ մը հանեց իր թղթակալէն և ձեռքին վրայ պզտիկ շրջանակ մը գծելով ըսաւ:

— Ահա՛ այս տեղ է:

Բժիշկը զարմացմամբ դիտեց որ օտարականը Լըջօրէն կը խօսէր, իր թիկնոցը հանելով, չապիկին թեզանիքը սոթտեց և նշտրակ մը առաւ ձախ ձեռքով: Մէկ րոպէի մէջ նշտրակը խոր ձեղք մը բացած էր կաշիին վրայ:

— Կեցի՛ր, գոչեց բժիշկը, վախնալով որ օտարականը անձարակութեամբ կարեւոր գործողանի մը վնաս կը պատճառէ: Քանի որ վիրահատական գործողութեան պէտքը կ'զգաք, թո՛ղէք որ ես կատարեմ:

Ուստի առաւ նշտրակն և ձախ ձեռքին մէջ բռնելով հիւանդին բազուկը, խնդրեց որ երեսը մէկուսի գարձնէ արեան տեսքը անտանելի սեպելով:

— Բոլորովին անօգուտ է, ընդհակառակը ես պիտի պիտի ցուցնեմ ձեզի կարուելիք կողմը:

Եւ իրօք օտարականն այս գործողութիւնը մինչեւ ցվերջ դիտեց սառնագին անտարբերութիւնով՝ կտրուելու սահմանն իսկ նշանակելով: Ազատ ձեռքը և ո՛չ իսկ սարսուռ մը զգաց և երբ բոլորածեւ կաշիի կտոր մը հանեց բժիշկը, հիւանդը խոր հառաջ մը արձակեց, իբրեւ մարդ մը որ անհուն սիտիանք մը կ'զգայ:

— Հիմակ չայրիւր ձեռքդ, կարծեմ:

— Ո՛չ. ամէն կսկիծ ու ցաւ վերջացաւ, պատասխասխանեց օտարականը ժպտելով. կարծես թէ հանուած կտորին հետ անհետ եղաւ բոլորովին ցաւս: Վազող արիւնին պատճառած թեթեւ անհանգստութիւնը՝ միւս ցուլին հետ բաղդատելով՝ գովարար զի փիւռ մըն է՝ գծոխային անդունդէ մը փչած հրա-

չունչ հովէ մը ետք: Ճշմարիտ սփոփանք մը կ'զգամ տեսնելով արիւնիս հոսիլը, թողէք որ հոսի, անչափս կը հրճուի հոգիս:

Եւ օտարականն ստուգիւ կը դիտէր խնդագին վէրքէն վազած արիւնն, մինչդեռ բժիշկը կը պնդէր թէ պէտք էր զայն կտայել: Այս գործողութեան ատեն օտարականին դէմքը բոլորովին փոխուեցաւ վշտակիր դէմք մը չունէր ան. այլ զուարթագին ակնարկ մը որ բժիշկին ուղղուած էր: Օտարականը այլ ևս չէր կարկամեր իր երեսը և այլ եւս յուսահատական շարժումներ չունէր: Ապրելու համար նոր հրապոյր մը կ'զգար, ճակատը կը պարզուէր, այտերուն գոյնը կը վերագառնար, մէկ խօսքով մարդը կատարեալ կերպարանափոխութիւն մը կրեր էր:

Ամիս մը կ'անցնի և տարօրինակ հիւանդը վերըստին կը դառնար միեւնոյն կոկիճագին ցաւերով. իսկ բժիշկը միեւնոյն գործողութիւնը կը կատարէ, որուն կը հետեւի նոյն սփոփանքը: Շաբաթներ կ'անցնին, ի վերջոյ բժիշկը հիւանդին կողմէ նամակ մը կ'ստանայ: Այդ նամակը խիտ առ խիտ գրուած էր, եւ ստորագրութենէն կ'երեւէր որ նոյն իսկ հիւանդին ձեռագիրն էր. ուստի կը հետեւէր որ հիւանդութիւնը դադրած էր, ապա թէ ոչ շատ դժուարին պիտի լինէր գրիչ մը բռնել: Նամակին պարունակութիւնը հետեւեալն էր:

« Սիրելի Տօքթօս,

« Չեմ կարող ո՛չ ձեզի և ո՛չ ալ բժշկական գիտութիւնը տարակուսանաց մէջ թողուլ իմ տարօրէն հիւանդութեանս գաղտնիքին մասին, որ քիչ ատենէն զիս գերեզման պիտի տանի: Հիմա պիտի պատմեմ ձեզի այս սոսկալի հիւանդութեանս ծագումն ու պատճառը:

« Անցեալ շաբաթ երբորդ անգամն էր որ կը տանջէր զիս և այլ ևս չպիտի ժաքառիմ անոր դէմ: Այս պահուս կարող եմ գրել՝ միայն ցաւած տեղին վրայ դնելով հրավառ արեթ մը տածի ձեւով: Երբ արեթը կը վառի, ես միւս ցաւը չեմ զգար, որու բաղդատմամբ կրած նեղութիւնս շատ թեթեւ է:

« Վեց ամիս առաջ տակաւին երջանիկ մարդ մըն էի: Անհոգ կ'ապրէի իմ եկամուտովս. ամէնուն հետ սիրով էի և կը վայելէի ամէն ինչ որ ախորժելի է երեսուն և հինգ տարեկան մարդու մը համար: — Ամուսնացած էի տարի մը առաջ, սիրային ամուսնութեամբ, նորատի օրիորդի մը հետ, սիրուն՝ զարգացած միտքով և կարելի եղածին չափ բարի սրտով: Նէ երբեմն դաստիարակուհի մըն էր եղած կոմսուհիի մը քով որ մեր դրացուհին էր: Ունեւոր չէր այդ օրիորդն և նէ ինձ կապուեցաւ չէ թէ միայն երախտագիտութենէ՝ այլ աւելի ևս մանկային սիրով: Վեց ամիսներ անցան, երբ իւրաքանչիւր օր երջանկագոյն կ'երեւէր ինձի քան նախորդն: Չգիտեմ ո՛ր սասանան օր մը ականջիս փափսաց: — Ենթադրենք թէ այս ամէնը կեղծիք է: — Յիմար են մարդիկ որ տանջանք կը փնտռեն իրենց ամէնէն բարեբաստիկ օրերուն մէջ: Կինս աշխատանքի սեղան մը ունէր որու գրոցն խնամքով կը կղպեր: Ստէպ դիտեր էի այս բանս: Երբէք չէր թողուր բանալին և ո՛չ գգրոցը բաց: Այս խնդիրը միտքս պղտորեց: Ի՞նչ գաղանիք, ի՞նչ թաքուն բան մը կրնայ գտնուիլ այդ գրոցին մէջ: Խելագարեր էի: Այնուհետեւ չէի հաւատար ոչ իր դէմքին անմեղութեան, ոչ իր ակնարկներուն անուշութեան, ո՛չ զգուսնաց և ոչ համբոյրներուն: Ի՞նչ սոսկալի բան եթէ այս ամէնը կեղծիք ըլլային:

« Առտու մը կամսուհին եկաւ վերստին որպէս զի կինս հրաւիրէ իր տունը, և շատ թախանձելէն ետեւ, յորդորեց որ այն օրը իրեն հետ անցնէ: Մեր բնակարանները իրարմէ քանի մը մղոն հեռու էին, և խօսք տուի քանի մը ժամէն կենակցիս միանալու: Այն ինչ կառքը բակէն հեռացաւ, և տան բոլոր բանալիները հաւաքեցի և մի առ մի փոքր գզրոցը բանալու փորձեցի, մէկ հատը բացաւ: Կ'զգայի որ առաջին սճիբը գործող մարդու մը կը նմանէի: Գող մըն էի որ իմ խեղճ կնոջս գաղանիքը կորզելու կը փորձէի: Ձեռքս կը դողար երբ գզուչութեամբ գզրոցը քաշեցի, և բոլոր առարկաները մի առ մի առի: Կարգաւ առանց շփոթելու, որպէս զի չիմացուի թէ օտար ձեռք մը խառնած է գզրոցը: Սիրտս կը ճըմլուէր, գրեթէ կը սառէր: Յանկարծ շղարշի մը տակ նամակներու ծրար մը ինկաւ ձեռքս: Կարծես թէ գլխէս փայլակի նման բան մը թափանցեց սիրտս: Ահ, այնպիսի նամակներ էին որ մէկ ակնարկով կարելի էր հասկնալ թէ ի՞նչ կը նշանակէին: — Սիրալին նամակներ, — ծրարը կապուած էր վարդագոյն ժապաւէնով մը արծաթածիր: — Միթէ իրաւունք ունե՞մ իրմէ համար պահանջել այն զգացմանցը համար զոր կրնար ունենալ իմ կինս ըլլալէ առաջ: Իրաւունք ունե՞մ նախանձիլ ժամանակէ մը, երբ անձանօթ էի իրեն: Ո՞վ կարող է մեղադրել զինքը սխալմունքի մը համար: Ո՞վ: Եւ մեղապարտ եմ որ կը կատկածիմ իր վրայ: Նոյն պահուն ստատանան վերստին փոփոսց իմ ականջիս: — Բայց եթէ այդ նամակները այնպիսի թուակամ մը կը կրեն երբ գուն արդէն իրաւունք ունէիր իր բոլոր խորհուրդները գիտնալ, երբ գուէրնայիր մինչեւ իսկ իր երազներուն համար նախանձիլ, երբ նէ արդէն քուկդ էր:

«Ժապաւէնը քակեցի: Ոչ ոք տեսաւ զիս: Եւ ոչ իսկ հայելի մը կար սենեկին մէջ որ մէջը նայելով կարմրէի. ամօթահար սուկացի, բացի նամակ մը, սպա ուրիշ մը, և մինչեւ վերջը կարգացի: Ահ, սուկալի ժամ մըն էր այն ինձի համար: Ինչե՞ր կային այդ նամակներուն մէջ: Ամէնէն վատթար մասնութիւնն սրու մարդ կրնայ ենթակայ ըլլալ: Այս նամակներուն հեղինակն իմ մէկ սրտակից բարեկամս էր: Եւ ի՞նչ ոճով գրուած էին, ի՞նչ տափանք, ի՞նչ սէր. որոնք անշուշտ փոխարէնը կ'ընդունէին: Եւ բոլոր այս գիրերը կը կրէին մեր ամուսնութեան ժամանակի թուակամը: Ի՞նչպէս կարելի է բացատրել զգացածս նոյն պահուն: Երեւակայեցէք մարդ մը որ արբէժս է մահաբեր թոյնի մը գորութեամբ: Կարգացի բոլոր այդ գիրերը: — Բոլորն ալ մի առ մի կարգացի: Ապա ծրարեցի, ժապաւէնով կապեցի և շղարշին ներքեւ դրի գզրոցը կզպելով: Գիտէի որ կինս երբ զիս կէս օրին չտեսնէր՝ իրիկունը պիտի դառնար իր այցելութեան, — ինչպէս որ իրօք դարձաւ: Կառքէն իջաւ նէ արտօնօք, և զէպի ինձ վազեց՝ երբ դրան սենեկ մին վրայ կ'սպասէի: Անհնարին գորովով համբուրեց զիս, և շատ երջանիկ կ'երեւէր որ վերստին զիս կը տեսնէր: Դէմքիս վրայ սրտէս անցածը ցոյց չտուի, խօսակցեցանք, միասին ընթրիք ըրինք, և սպա մեր առանձին ննջարանը քաշուեցանք: Բայց աչքս քուն չի մտաւ: Բոլորովին արթուն էի, ժամերը կը համրէի, երբ ժամացոյցը զարկաւ կէս գիշերը քառորդ ժամ անցած, անկողինէս ելայ և կնոջս սենեակը մտայ: Իր գեղանի գեղձան գլուխը կը հանգչէր մեղմիկ սպիտակ բարձին վրայ — ձիւնափայլ ամպերու մէջ նկարուած հրեշտակներու նման: Բնութեան

ինչ ահուելի ստուծիւնն է այն մտուծիւնը որ էր խեղագարի մը անյողդողդ կամակորութեամբ որչափ մը, որ իբրեւ անշարժ գաղափար գլուխս գրաւեր էր: Թողնը լիովին ապականեր էր հոգիս: Որոշէր էի, այս՛, քնացած ատեն զինքը սպաննել: Այս սճիւրը չեմ ուզեր մանրամասն պատմել: Մեռաւ նէ ստանց թեթեւ ընդգիծութիւն մը անգամ ցոյց տալու, իբր թէ հանգարա խոր քուն կը մտնէր: Նէ բնաւ զայրայր չյայտնեց ինձի դէմ — մինչեւ իսկ երբ զինքը սպաննեցի: Արիւնի կաթիլ մը միայն իմ ձեռքիս վրայ ինկաւ — գիտէք արդէն թէ ուր ինկաւ:

«Կամուհին, որ ստէպ կը յիշուի, մեր բնակարանն էր երբ գերեզմանատունէն վերագարձայ: Այնքան լաւ կարգադրեր էի ամէն բան որ նէ շատ ուշ հատեր էր և թաղման ներկայ չէր: Երբ նէ ահաւ զիս, շատ այլայլութիւն զգաց: Այնչափ սարսափ, համակրութիւն, վիշտ և չգիտեմ ուրիշ ինչ բաներ ցոյց տուաւ նէ իր խօսքերուն մէջ, որ չկրցայ ըմբռնել թէ ինչ ըսել կ'ուզէր զիս մխիթարելու համար: Եւ միթէ կարճ էի մտիկ ընել, միթէ մխիթարութեան կարօտ էի: — Ո՛չ, տրտում չէի: Ի վերջէ կամուհին ընտանեւոր ձեռքէս բռնեց և ձայնը մեղմելով յարեց թէ պարտք կը համարի ինձ գաղանիք մը հաղորդել, և թէ իբրեւ պատուաւոր մարդու մը, կը վստահի իմ վրայ որ այդ գաղանիքը պիտի մնայ մեր մէջ: Նէ կնոջս առած էր նամակներու ծրար մը որպէս զի պահէ, վստան զի չէր կրցած իր տանը մէջ պահել, և այժմ կը պահանջէր որ այդ ծրարը իրեն վերագարձընեմ: Մինչդեռ նէ կը խօսէր՝ ստէպ զգացի բոլոր մարմնոյս մէջ սոսկալի սարսուռներ: Սակայն երեւոյթական պաղութեամբ հարց ու փորձ ըրի թէ ինչ կը

պարունակին այն նամակները: Այս հարցումիս վրայ կամուհին շարժում մը ըրաւ և բարկութեամբ պատասխանեց:

— Պարո՛ն, ձեր կլինն շատ աւելի վեհանձն գլուխուեցաւ քան դուք՝ երբ նէ այդ իմ նամակներս առաւ, չհարցուց բնաւ թէ ինչ կը պարունակին: Նէ խոտացաւ անգամ որ ակնարկ մը իսկ չպիտի նետէ անոնց վրայ, և ես համոզուած եմ որ և ո՛չ մի սող կարգացած է:

«— Շատ լաւ. պատասխանեցի. բայց ինչպէս պիտի ճանչնամ այդ ծրարը:

«— Այդ ծրարը կապուած էր արծաթածիր վարգազոյն ժապուէնով:

«— Այժմ պիտի երթամ զայն փնտուելու:

«Առի կնոջս բանալիները, քաջ գլխաւորով թէ ո՛ւր կը գտնուի ծրարը, թէեւ այնպէս կը կեղծէի թէ մեծ դժուարութեամբ պիտի գտնեմ:

«— Միթէ ա՛յս է հարցուցի կամուհւոյն, զայն իրեն տալով:

«— Այո՛ այդ է: Տեսէք իմ կապած հանգուցս նոյն վիճակին մէջն է:

«Իմ աչքս չկրցայ դարձնել իր աչքերուն, կը վախնայի թէ չկարգայ անոնց մէջ թէ ես ծրարին կապը քակեցի, և ամբողջ նամակները կարգացի: Յանկարծ հեռացայ իրմէ, և կամուհին ցատկելով իր կառքին մէջ ձիերը բռնեց:

«Արեան կաթիլը անհետ եղեր էր, արտաքին նըշանով մը ցաւը չէր յայտնուեր, և սակայն այդ կաթիլին ինկած տեղը կ'այրէր՝ իբր թէ ուրիշ թոյն մը զայն կը լափէր: Այդ ցաւն ժամէ ժամ կ'աւելնայ: Երբեմն կը քնանամ, բայց երբէք չեմ գաղբիր իմ

վերջաերուս գիտակցութիւն ունենալէ, չեմ գանգատիք մարդու մը, ոչ ոք արգարե պիտի հաւատայ իմ պատժութեանս: Դուք տեսաք իմ տանջանքներուս սաստկութիւնը, և գիտէք թէ երկու վերաբուժական գործադրութիւններն որքան սփոփեցին զիս, ըստց երբ վէրքս կը բուժէ, ցաւը վերստին երեւան կ'ելլէ: Այս չորրորդ անգամն է որ կը շարչարէ զիս, և այլ ևս ոյժ չունիմ գլխմանալու: Ժամէ ժամ պիտի վերջացնեմ կեանքս, մահս մօտալուտ է: Միայն մտածում մը կը միտիթարէ զիս, այն է որ չէ իմ կիսս, վրէժ լուծեց այս աշխարհիս մէջ, թերևս հանդերձեալ աշխարհի մէջ ներէ ինձ: Շնորհապարտ եմ ձեր բոլոր հոգատութեան համար: Թո՛ղ կրկին վարձատրէ ձեզ»:

Քանի մը օր ետքը օրագիրներուն մէջ ամէն մարդ կարգաց թէ՛ Ս... ամէնէն հարուստ հոգատէրներէն մին, իր ուղեղը պայթեցուց:

ԽՕՐԻՍ ԵՕՐԱԵ



ՔԱՐԻԻՂԻ ԿԱՆԹԵՂՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Քարիւղի գործածութենէն յառաջ եկած բազմաթիւ դժբախտութեանց առջեւն առնելու համար մեծապէս կը նպաստէ հետեւեալ կանոններուն ճշգիւ պահպանութիւնը:

1. Քարիւղը պէտք է թիթեղեայ ամաններու մէջ

և զով տեղեր պահել: Այն ատեն միայն պայթում կրնայ յառաջ գալ, երբ քարիւղը կազալին վիճակի մէջ մտնէ. քարիւղը կազալին մարմին կ'ըլլայ Ռէօմիւրի 25 ստախճան ջերմութեամբ:

2. Կրակի, կանթեղի և ճրագի քով պէտք չէ քարիւղ լեցնել կամ պարպել, լեցնելու ժամանակ թեթեւ անոգուչութիւն մը կամ շփոթութիւն մը կրնայ հրդեհի պատճառ ըլլալ: Բացարձակապէս թող տալու չէ վառած կանթեղի մէջ քարիւղ լեցնել:

3. Կանթեղին գործածելի պատրոյգը չսլորովին մաքուր և չոր ըլլալու է. շատ բարակ պատրոյգը պատուզակալը կը տաքցնէ և քարիւղին բռնկելուն պատճառ կ'ըլլայ: Խնաւ կամ շատ հաստ պատրոյգ մը լաւ չի ծծեր ուստի արգուկով (իօթիւ) չորցնել՝ ամենալաւ միջոցն է:

4. Ամէն օր պատրոյգին և պատուզակալին վրայ ժողվուած ամխային ազտերը մաքրելու է: Երբ կանթեղ մը երկայն ժամանակ գործածուած չէ, գործածուելէն առաջ խնամով մաքրուելու է:

5. Կանթեղի պատուզակալն և օդ բանելու մասերն ամէն օր մաքրելու է: Վնասուած պատուզակալներն անպատճառ փոխելու է: Եթէ օդ բանելու կազմածը մաքուր ըլլայ, պատուզակալը չի տաքնար:

6. Կանթեղի մը մէջ միշտ այնչափ քարիւղ ըլլալու է, որ պատրոյգը միշտ քարիւղի մէջ ըլլայ: Եթէ քարիւղը պակիս, կը չորնան պատրոյգը և պատուզակալը և անկէ քարիւղը կը տաքնայ և քարիւղէ յառաջ եկած կազը կը բռնկի:

7. Նայելու է որ քարիւղի կանթեղին ընդունարանը չտաքնայ վառարանի մօտ գրուելով:

8. Երբէք պատրոյգը քիչ բարձրացնելու չէ. վասն

զի ասով քարիւղի խնայողութիւն չըլլար. այլ պատ-
րուգակալը կը տաքնայ և գարշահոտ ու առողջու-
թեան վնասակար կազեր կը ծնանի:

9. Կանթեղը մարելէ առաջ՝ պատարոյգը քիչ մը
վար առնելու և մեղմով ապակիին վրայէն փչելու է:

10. Որչափ կարելի է՝ մանուսանդ տղոց խուցերուն
մէջ՝ կախուած կանթեղ գործածելու է:

ԼԱԹԻՆ ՎՐԱՅԻՆ ԱՅՐԱՄԻ ՀԵՏԻՐ ՁՆՁԵԼ

Եթէ լաթեղէնն վառարանի առջև չորցնելու ժա-
մանակ կամ արգուկելու ատեն այրածի գոյն առնէ,
երբ թելերն բոլորովին այրած և քայքայած չեն, կա-
րելի է հետեւեալ կերպով այրածին հետքը ջնջել:

Պէտք է 15 կրամ ծխափողի սպիտակ կաւ, 20
կրամ հաւու թարմ տղբ, 15 կրամ սպիտակ աճառ,
մեծ սոխի մը հիւթը և կէս լիտր գինիի ոգի իրարու
հետ խառնել, և այս զանգուածը այրած մասին վրայ
տարածելու և թող տալու է որ չորնայ: Չորնալէն
ետե՝ զանգուածը վրայէն հանելով լաթը դաղջ ջուրի
մէջ լուսլու է: Եթէ մէկ անգամով բոլորովին չի
ջնջուիր՝ կրկնելու է նոյն եղանակաւ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՄԱՀԱԴԱՐԱՆ

Ամերիկեան թերթ մը կը պատմէ՝ իբր նորագիւտ
ու անբացատրելի երեւոյթ, թէ Արիզոնա նահանգին
մէջ՝ Նիտլա լեռներէ 60 մղոնի չափ հեռի դէպի
հիւսիսակողմն, գրեթէ անհպելի կոճղի մը վերեւ
կանգուն կ'երեւի ահագին ելեքտրական քար մը:
Հնդիկները մահադարան կ'անուանեն այդ քարն, իսկ

սարն որու վրայ գետեղուած է այն, լեռնային մահա-
դարան: Ժայռն ինքնին կոշտ, սեւ է և ատամնա-
ձեւ, որ՝ իր շրջակայ խարակներու հերձակաւէն
դուրս պայթելով՝ լեռան կողին վրայ կը բարձրանայ
իբր 7 սոք, երբ սրածայր սարաւանդ մը նորէն կը
հակի, որով եռակուսի ձագար մը կը յօրինէ, թե-
րեւս ինը սոք երկայն և հինգ սոք լայն: Ժայռը
սովորաբար կապուտակ մետաղեայ գոյն մը ունի և
հրաբղխային գործունէութեան նշաններ կը ցուցնէ՝
հալած լավայի խաւեր ու ցցուածներ ունենալով:
Տօթագին օրուան ժամանակ՝ երբ անոր վրայ արեւը
ուղղաձիւ կ'իջնէ ու կը փայլի, ժայռը ամպն կապոյ-
տի երանգ մը կ'առնէ, և նոյն միջոցին հնդիկները
կը յայտարարեն թէ ժայռը բոլորովին անվաս է:
Սակայն երբ արեւը կիրճէն քաշուի, քարը քիչ քիչ
կը մթանայ, իսկ երբ մութը բոլորովին պատէ չորս
դին՝ հալած կոյտի նման պայծառ կը շողայ: Եթէ
միջնարգել լեռները չլինին, լուսավառութիւնը շատ
հեռուէն կը նշմարուի: Գալով ժայռին մահաբեր զօ-
րութեան, կ'ըսուի թէ ո՛չ մեծ և ո՛չ փոքր կենդանի
մը կարող է անոր վրայ սոք կոխել ու ապրիլ: Այն-
քան բուռն են տուած ցնցումներն որ եթէ թեթեւ
չփում մ'ընդունի, անհնար է որ մինչև անգամ ա-
մենէ մեծ կենդանի մը դիմանայ անոր զօրութեանը:

Անգամ մը սրտորդներու խումբ մը առանց ուղե-
ցոյցի կը յանդգնի վտանգաւոր լեռները անցնելով՝
հասնիլ արձակ կիրճի մը ճամբան՝ հալածելով այժ
մը: Յանկարծ զարմանօք կը դիտեն ութսուն սոք
հեռուէն այժին անկումը, թէև գնդակ մը չէին ար-
ձակած, նոյն պահուն՝ լեռան ծնօտը մագլելու կը
պատրաստուէին որ այժն առնեն, երբ ծեր հնդիկ

մը՝ սեպի մը վրայ կեցած՝ կատաղօրէն կը պօռայ որ կանկ առնուն: Որսորդները կ'սպասեն որ ծերունին գահաւանդէն վար իջնէ, և ահա այն ժամանակ կ'իմանան այդ ելեքորական հրաշալիքին պատմութիւնը:— «Այժը մահադարանն ինկած է, կ'ըսէ Հընդիկը, և եթէ դուք ալ հետեւիք անոր՝ անտարակոյս նոյն բաղդին պիտի վիճակիք»: Ծերունիին պատմութիւնը հաստատող փաստեր ակներև կ'երեւէին, քանի որ ժայռը շրջապատող կիրճը բոլորովին դամբարան մըն էր դարձած, բազմաթիւ զոհերու ոսկորներով լի: Որսորդները ծերունիին շնորհապարտ մնալով հանդերձ, ցաւ յայտնեցին այժին կորստեան վրայ, որու տեսակը այժմ գրեթէ ջնջուած է: Բայց հնդիկը մէջքէն օղակապ մը հանեց և ժայռերուն ներքև նետեց: Իր նշանն անվրիպելի էր, վասն զի խկոյն այժն իր լարովը քաշեց ապահով վայր մը ու որսորդները զայն առին:

Նոյն պահուն, արեւը մայրը մտած էր, և որսորդները հնդիկին հրաւերին վրայ անոր լեռնական հիւղակը կը դիմեն, ուսկից կը նշմարեն ժայռին վառելի երբ լուսինն ևս անհետ կը լինի: Երբոր ամէնքը խարոյկի մը շուրջը նստած այդ հրաշալի տեսարանը կը դիտէին, ծերունի հնդիկը զանազան աւանդավէպերէ կատ, պատմեց թէ ինչպէս հարիւրաւոր տարիներ առաջ իր ցեղը գտած էր այդ ժայռը:

«Շատ տարիներ առաջ մեր ցեղն այցելեց օտարական մը որ հաց ու ապաւէն կը փնտռէր: Հրաշալի գեղեցիկ դէմք մը ունէր: Ունէր նաև զարմանալի յատկութիւն մը հիւանդները բժշկելու իր ձեռքն անոնց վրայ բռնելով: Անասուններն անգամ իր շուրջը կ'առնէին եթէ ուզէր, և ցեղապետն այնքան

կը յարգէր ու կը մեծարէր օտարականն որ վերջապէս զանի որդեգրեց և իր բժիշկն ըրաւ: Տարիներ կ'անցնին և օտարականը կը մնար իր մօտ: Նոյն առեւն ցեղապետին որդին մեծնալով հարկ կը լինի կին մը տալ անոր: Իբր նշանած ամէնէ չքնող աղջիկը կ'ընտրեն և հարսնիքի պատրաստութիւնները կը տեսնուին: Երբ արարողութեան օրը կը հասնի, աղջիկը անհետ կը լինի, և պառաւ կին մը կը յայտարարէ թէ բժիշկն աղջիկն սգիացուց և փախցուց: Ամեն խուզարկութեան հակառակ, օրիորդը չգտնուիր և ցեղապետը դժկամակութեամբ կը հաւատայ որ իր որդեգրած բարեկամն է յանցաւորը, ուստի՝ ազաներկու ամենաքաջ մարդիկներ հրաման կ'ընդունին ցեղէն արաւքսել բժիշկը, վասն զի ժողովուրդն այնքան կը սիրէր զանի որ ոչ ոք կը հաւանէր տեսնել անոր մահը: Առաւօտ մը կանուխ ճամբայ կ'ելին որ բժիշկը լեռներէ անդին վճռտեն, մինչդեռ նա այնքան արագ կը վազէր որ հազիւ կարող էին տեսնել: Վերջապէս յայտնի եղաւ որ բժիշկն իր ետեւէն կը քաշէր քաջերն փոխանակ առջեւէն խոյս տալու, և թէպէտ ցեղապետն պատգամաւորներ հանեց որ իր մարդիկն ետ դառնան, սակայն անկարելի եղաւ այդ հրամանը կատարել տալ: Հետզհետէ կը վազէին մարդիկ՝ լերան կողէն մազլցելով՝ առանց աջ ու ահեակ նայելու, այլ միշտ բժիշկին վրայ աչքերն յառած: Պատգամաւորներն ևս մօտէն կը հետեւէին, և վերջէն տարափահար տեսան որ մարդիկներն մի առ մի շանթահար կը մտնէին մեծ կապոյտ քարի մը բացուած շրթերուն մէջ: Ահա՛ այսպէս զանուեցաւ, հարիւրաւոր տարի առաջ, մահադարանն, և հնդիկներն այնպէս կը կարծէին թէ բժիշկն դրած էր այդ քարն, որպէս զի ամէն հալածանքէ ինքն ու իր գոյցած հարսը զերծ մնան»:

ՆՇԱՆԱԻՈՐ ԿԵՂԾԱՐԱՐ ՄԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Մէնսիս քաղաքին մէջ դրամանենդ—կեղծարար մը այնպի՛սի ճարտարութեան ու յանդգնութեան գործ մը կատարած է՝ որու նմանը մինչև ցարդ տեսնուած չէ:

Այս կեղծարարին անունն է Հէնրի Տէվիս, Սգօարարդ անունով, որ ի սկզբան բանտարկուեցաւ ժէրսիի բանտը և դատարարհի կ'սպասէր, Բիրոֆիլտ դրամատան վրայ կեղծ փոխանակագիր մը քաշելուն համար: Բայց միայն այս ամբատտանութիւնը չէր որ կը ծանրանար Տէվիսի վրայ, այլ բաւական ժամանակ առաջ զանազան չէքեր շինած էր որք անմիջապէս կը վճարուէին, առանց երբէք կասկած մը գրգռելու, վասն զի շինծու թուղթերը հրաշալի ճարտարութեամբ անուանի դրամատէրներու ստորագրութիւնները ամենայն ճշգրտութեամբ կը կրէին: Տէվիս իր անմեղութիւնը հաստատելու համար շատ պատուաւոր վաճառականներու և դրամատէրներու վկայագիրները կը ներկայացնէր, բայց բոլոր վկայագիրներն կեղծ էին: Տէվիս կը դատապարտուի տասնամեայ շղթայակապ բանտարկութեան իր փաստաբանին անձանձիր ճիգերուն հակառակ: Վերջապէս Տրէսի կը զրկուի շղթայակապ աշխատութեան, բայց չվհատիր:

Սոյն քաղաքին կառավարիչը, Պ. Պըքնան օր մը կ'տանայ աղերագիր մը Տէվիսի ներուժը խնդրող: Սոյն աղերագրին կցուած էր իր փաստաբանին մէկ նամակը՝ ճարտար ու սրտաշարժ ոճով գրած, աղերասագիրը ստորագրած էին սոյն դատական ատեանին բոլոր պաշտօնեաներն՝ որոնց կողմէ Տէվիս դատուած

էր, բոլոր երգուեալ դատաւորներուն՝ որոնց կողմէն Տէվիս պատժապարտ դատապարտուած էր: Նոյնպէս Դէնէսիի բազմաթիւ ազգեցիկ և հարուստ քաղաքացիներ, որոնց մէջ կը գտնուէին Պօքնանի շատ մտերիմ բարեկամները:

Աղերագիրն այնքան պերճախօս և համակրական էր որ կառավարիչն օր շատ քիչ անգամ կը ներէր դատապարտեալի մը առանց աղերտարկուներու մէկ քանիին հետ խորհրդակցելու, այս պարագային մէջ աւելորդ կը համարի այգպիսի խորհրդակցութիւն մը: Ուստի ներողագիր մը կը շնորհէ և Տէվիս կը գտնէ իր ազատութիւնը: Այս բաւական չէ, Պ. Պըքնան անձամբ ձեռք մը հազուստ կուտայ Տէվիսի և միանգամայն ստակի գումար մը: Ապա Տէվիս աներեւոյթ կ'ըլլայ: Երկու շաբաթ ետք՝ կառավարիչը կը տեսնէ Տէվիսի փաստաբանը: Պ. Պաթիստն, և իր ջանքերուն յաջողութեան վրայ զինքը կը շնորհաւորէ: Պ. Պաթիստ կը գարմանայ կը մնայ և չէ կարող ըմբռնել թէ կառավարիչն ի՞նչ ըսել կ'ուզէ: Ի վերջէ յետոյ Պ. Պըքնան կ'իմանայ թէ Տէվիսի ազատութեան բնաւ տեղեակ չէ փաստաբանը: Ի նպատակ Տէվիսի իրեն ներկայացուած բոլոր նամակներն ու ստորագրութիւնները շինծու ու կեղծ էին և աղերագիրն ինք Տէվիս գրած էր բանտին մէջ: Ի՞նչ միջոցաւ կարող եղած էր Տէվիս այդ տարօրինակ նենգութիւնն ի գլուխ հանելու: Անյայտ կը մնար:

Այնուհետև Տէվիսի վրայ բնաւ լուր չլսուիր, մինչև որ Բիրոֆիլտի դրամատան վրայ քաշած թուղթին նենգութիւնը երեւան ելլելով Սգօգրարտ կը ձերբակալուի: Ոստիկան մը յաջողեր էր իմանալ որ Սգօգրարտ և Տէվիս միեւնոյն անձն է. և այսպէս խնդիրը հրապարակ կ'ելլէ:

ՋՐ ՀԱՆԿԻՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մտեղ, հուժկու ուտերուն վրայ կը դողդղար ջրհանին յեցակը, երբ գլխերը կամ ցորեկը, իր ընկերներուն հետ, կըրակի վազէր՝ անտանման աշխուժով և տարապայման սգեւորութեամբ, գահավէժ աճապարումով վազրի մը որ կէս մղոն հեռուէն իր որսին հոտն առած է: Դեռ քսան երկու տարու հազիւ կար պապախոյ Օննիկը, որ իր կանխահաս կորովսփն ու յանդգնութեամբը իր արհեստակիցներուն մէջ սկսած էր համբաւ մը շինել, որմէ իր փառատիրութիւնն այնքան կը շոյուէր կը փայփայուէր որքան քաջարի զօրավար մը իր հռչակէն: Ջրհանկորութեան ըղձազրգիւ արհեստին մէջ հինուուրց փորձաուուի մը հմտութիւնն ունենալ կը ցուցնէր, իրմէ առաջ այդ դժուարակնճիտ արհեստին մէջ մտնողներուն վրայ ստուեր ամէրու յաւակնութիւնը կը տարածէր, և իր երազային վայրկեաններուն կամ քունին մէջ ոսկիէ ակնասխտիկ տառերով գրուած կը տեսնէր ռեիզ բառը, որուն արժանանալ կը բաղձար իր հոգիին ու ոիրտին բովանդակ ուժգնութեամբն ու թափովը: Իր փառատենջութեան միակ նպատակակէտն էր հասնիլ իր արհեստին այդ բարձր աստիճանին: Սիրտին եղերը կը հալէին երբ հրգեհի ատեն կը տեսնէր իրենց ռեիզին յոխորտանքն ու արձակած մեծագոջ հրամաններն, որոնց կը հնազանդէին ջրհանկորներն՝ ստրուկի հլութեամբ. կը հառաչէր տեսնելով իրենց պետին մարտական վազքը ջրհանին առջեւէն, խորագան մը ի ձեռին զօր կը ճօճէր սպառնազին, աջ և անհակ: Օ՛հ, այդ զէրքին հասնիլ, ի՛նչ անկարելի,

դժուարին իրականութիւն: Կսկծալի ստորնութիւն կը համարէր հնազանդիլ այն մարդուն, որուն արժանիքն իրմէ շատ վար կ'ենթադրէր, բայց ակամայ գլուխ կը ծռէր բախտի այս դժպէնի բերմունքին առջև, և կը միտիթարուէր ապագայի լուսաշող երազներով ու յոյսերով: Ամենաջնջին առիթէն սգուտ կը քաղէր՝ ցուցնելու համար իր չարշնեղ բազկին և հուժկու մարմնին բոլոր առաւելութիւնները և կ'ուզէր որ ամէնուն սքանչանքն իր վրայ հրաւիրէ: Հասակը շատ բարձր չէր, բոլոր անդամները զուգաշափ համեմատութիւններ ունէին. գլուխը՝ հաստ ու ջղուտ վիզով մը կը ցցուէր լայնչի մազոտ կուրծքի մը վերեւը, հրացայտ աչուրներով զինուած, բարակ սև պիտով մը զարդարուն: Իր ամբակուռ որունքներուն վրայ ցատքած ատենը, բնաւ դանդաղում չէր ունենար, կարծես խոկոյն կը գամուէր կը մնար կեցած տեղը: Իր ընկերները, թերեւս նախանձութենէ շարժեալ ծաղրել ուզելով այդ կարիճը, պապախոյ մականունով մկրտած էին զայն, որ սակայն շատ լաւ կը յարմարէր իրեն և ինք գոռոզանք մը, գրեթէ պարծանք մը կ'զգար ի լաւ այդ ուսուցիկ վերադիրին:

Օննիկի սովորական արհեստն էր երկաթագործութիւն, զոր կ'արհամարհէր և իր ապրուստին հայթայթման մէկ միջոցը կը նկատէր միայն: Առտուրնէ մինչև իրիկուն սայլին վրայ կը ծեծէր անապին ծանրածոյլ վայրգը, որ հազիւ թէ յագուրդ կուտար իր զեղուն ուժին. այդ հարուածներուն անհագնութիւնը, դժոխային երեւոյթը, իր վարպետներուն խըռպոտ այլանդակ գօշիւնները՝ համակ հրապատ սեփ սեւ այն գործարանին մէջ, կարծես Օննիկին բնաւորութեան համար ամէնէն պատշաճ տարրը կը ձեւա-

ցունէին, որուն մէջ եռանդնազեղ երիտասարդը երջանիկ կ'ապրէր, հեւայով, ֆշայով, թոքերուն բովանդակ զօրութեամբը ծծելով այն զազիր մահաբոյր մթնոլորտը:

Բայց ամէն բան կը մտնար, վայրոգ, սալ, երկաթ, վարպետ, երբ լսէր թէ կրակ կայ. կայծակի արագութեամբ, գրեթէ միշտ ամէնէն առաջ կը հասնէր խովոռչը, ակնթարթի մէջ կը հանուէր, սրունդները կը բանար, թեղանիքները կը սոթթէր, գլուխը կը կապէր կարմիր թաշկինակ մը և տեսնելու բան էր թէ ի՞նչ խանդով կը փարէր ջրհանին, ինչ գուրգուրանքով կը պահէր անոր կոթն իր ուսին վրայ, ի՞նչ համեմատութիւն մը կը դնէր իր խօլ վազքին մէջ՝ վար չիյնալու և ջրհանին մըստ չպատճառելու համար: Շատ անգամ կը յանդիմանուէր իր պետին կողմէ որ՝ գովելով հանդերձ Օննիկին ճարպիկութիւնն ու արհեստին մէջ արագ յառաջգիմութիւնն՝ երբեմն կը սրամտէր անոր չափազանց ժպրհութենէն:

—Մ'օ՛, կը պօռար, պոյէդ վեր մ'ելլար, քենէ մենծերը կան հոս:

Մուշայով կը հեռանար երիտասարդ ջրհանիկը, սաստիկ վիրաւորուելով իր անչահ ընկերներուն քով յանդիմանուելէն բայց, ինչպէս ըսինք կը մխիթարուէր միշտ իր ապագայի յոյսերովը:

—Ա՛խ, կ'ըսէր սիրտին ալքերէն խորունկ հռոտչով մը, ե՛րբ պիտի ունիզ ըլլամ, ե՛րբ:

Եւ հրդեհի առասպելական ու դիւցազնային տեսարաններ կը յօրինէր միտքին մէջ, քաջագործութիւններ կը վերագրէր իրեն, բոցերու, հրավազերաններու մէջ անլուր յանդգնութեան փորձեր կ'երեւակայէր, տուներ կ'ազատէր հրդեհի ճիրան-

ներէն, հողիներ կը փրկէր և կեցցեներու կ'արժանանար: Իր պահանջկոտ հողիին սնունդը կը գտնէր այս քստմնելի մտածումներուն մէջ:

Օր մը պատահեցաւ որ իր երկաթագործ վարպետին հետ տուն մը գնաց, որուն պատահաններուն երկաթորմ պիտի անցունէին: Մէկ օրուան մէջ ըմբնալիք գործ էր. Օննիկ շարաթ մը շարունակ գնաց եկաւ այն տունը ուր բնակող ընտանիքը հարուստ կ'երեւէր իր աչքին և մանաւանդ յոյժ հաճելի այն մանկամարդ աղջիկը, որուն սե խոշոր աչուքները կը ցնցէին երիտասարդ երկաթագործին ջիղերը: Օննիկ զարմացմամբ դիտեց որ իր զգացումներուն մէջ, զորս միայն ջրհանի վրայ կեդրոնացած կը կարծէր, տարբեր բան մըն ալ կար, որ հաճոյքէ զուրկ էր: Իր գործով զբաղած պահուն գաղտագողի ակնարկներ կը նետէր դէպի մանկամարդ աղջիկն, որ բազմոցին վրայ նստած ձեռագործ կը բանէր: Մէկ քանի անգամ Օննիկ դիտեց որ ան ալ զինքը կը գիտէր երբ ինք երկաթներուն դարձուցած էր երեսը, այն ատեն աւելի սիրտ առաւ՝ և խոյս չտուաւ անոր կիզիչ նայուածքէն: Աղջիկը որ ի սկզբան արհամարհանք միայն զգացած էր երկաթագործի այդ աշկերտին նկատմամբ, հիմակ նուազ խոժոռումով և տեսակ մը հաճութեամբ կը դիտեր անոր անոյշ կայտառ դէմքը, հուժկու մարմինը. օր մը, մինչև իսկ սիրտ ըրաւ անոր հետ խօսակցելու:

—Քու անունդ ի՞նչ է, հարցուց:

—Օննիկ, պատասխանեց երիտասարդը, մէկէն ի մէկ տարութիւն մը զգալով երեսին վրայ:

—Գործդ ա՞ն է:

—Մի՞նակ սա չէ. իմին ասըլ սիրած գործս թուլումպանութիւն է:

Աղջիկը արհամարհոտ ժպիտ մը ունեցաւ և անոր վրայ խղճալու յայտնի շարժում մը ընելով հեռացաւ: Օննիկ հասկցաւ իրեն եղած նախատինքը և նորէն սկսաւ իր մուրճը տփել՝ մրմուռով:

—Վա՛յ, ըսել է թուրումպածիութիւնը կէշ գործ է հա՞... խալթ է խառներ:

Բայց մանկամարդ աղջիկը նորէն եկաւ, և ձեռագործն առնելով սկսաւ աշխատիլ: Օննիկ ալ չնայեցաւ անոր երեսը, վասն զի վշտացած էր: Այդ օրը անցաւ առանց ու և է խօսք փոխանակելու անոնց միջև բայց յաջորդ օրը, որմէ ետքը ա՛լ չպիտի գար Օննիկ մանկամարդ աղջիկը լուրջ դէմքով հարցուց երիտասարդին.

—Կրակի կ'երթա՞ս, պարոն Օննիկ:

Սա՛ երեսը նորէն աագին դարձուց և յոխորտ ու խիտ շեշտով մը պատասխանեց.

—Հէլպէթ քուրիկս. աս գէնահաթը քուկին աչքիդ աղէկ չերեւար կ'որ ամա, կիտցած ըլլաս քի օր կ'ըլլայ քի մեզի միւխթած կ'ըլլաս, մենք հողի կ'ազատենք, մալ կ'ազատենք, տուն տեղ կ'ազատենք, ձեզի պէսները խօս կը նային մեզի, թուրումպածի կ'ըսեն, կէօյա կէշ մարդիկ ըլլայինք... չէ՛, անանկ չէ, մենք բէք աղէկ, բէք շէք շնորհք մարդիկ էնք էյէր աս թեւերը չըլլան, աս օմուզը չըլլայ, աս ոտքերը չըլլան նէ ի՞նչ կէշութիւններ, ի՞նչ գուրումներ, կ'ընէ կրակը, կիտն՝. չիյտես նէ հասկցի՛ր, հա՞, քուրիկս:

Վերջին բառերը կրակի պէս դուրս կ'ելլէին Օննիկին բերնէն, աչուրները բոցեր կ'արձակէին, որք կը թափէին մանկամարդ աղջկան վրայ: Երիտասարդը ա՛լ գործն աւարտած ըլլալով՝ ժողվեց իր գործիքները մեկնելու համար:

Մանկամարդ աղջիկը, որ մտածումով մը համակուած կ'երեւէր, յանկարծ հարցուց.

—Է՛յ մեր տունը էրի տէ՛ կրակներուն մէջ մնամ նէ ինձի կ'ազատես:

—Հոգիս քեզի համար թէլէֆ կ'ընեմ, քուրիկս, ըսաւ Օննիկ, և այս յանդուզն խօսքը բերնէն փախցընելուն պէս վազեց դուրս ելաւ:

*
*
*

Այդ օրէն սկսեալ քանի հրդեհ պատահեցաւ, Օննիկ խնդրեց ուէիզէն որ ջրհանը վերայիչեալ տունին առջեւէն անցնի. իր բաղձանքին հասաւ. մանկամարդ օրիորդը պատուհանէն ամէն անգամ կը դիտէր ջրհանկրաց խումբին մեծածխոր անցքը և մանաւանդ իր աչքը կը հանդիպէր երիտասարդ երկաթագործին որ ջրհանն ուսին վրայ համարածիկ և ուռուցիկ վեհութեամբ, կրկնապատիկ կորովով ոգեւորուած՝ կատարար կը վաղէր՝ սլացիկ ակնարկ մը նետելով դէպ ի պատուհանը. այդ անցքէն ետք, հրդեհին վայրը Օննիկ քաջութեան և յանդգնութեան հրաշքներ կը գործէր:

Մէ՛կ իտէալ միայն ունէր հիմակ. ռեիզ ըլլաւ և անցնիլ «իրենին» տունին առջեւէն: Այն երջանիկ օրը թուիչ պիտի առնէր և մինչև այն պատուհանը սաւառնէր. ասոր համար ամէն բան ըրաւ, ամէն զոհողութիւն, ամէն միջոց ի գործ դրաւ աղաչեց, տեղին համեմատ սպառնաց ալ և վերջապէս յաջողեցաւ փոխ ռեիզ կարգուիլ: Ատիճանի այս բարձրացման այնքան արժանի ցուցուց ինքզինքը, որ երբ ջրհանկիրներու մէջ սովորական եղող անհամաձայնութեան մը հետեւանօք ռեիզը հրաժարական տուաւ,

միւսները ժողով գումարեցին և յետ երկար ու աղմուկալից խորհրդակցութեան, իրենց պետ ընտրեցին պապախիթ Օննիկը, որուն աջուքները մութցան երբ այս ընտրութիւնը լսեց: Շնորհաւորութիւններ չորս կողմէն տեղացին: Յնորք էր ռեխիզ, այսինքն լրումն երանութեան:

Անմիջապէս սկսաւ իր ազդեցութիւնն ի գործ դնել. կանոնաւորութիւններ ներմուծեց խումբին մէջ. պատիժներ սահմանեց և վարձատրութիւններ խոստացաւ:

Հիմակ անհամբեր կ'սպասէր հրդեհի մը, որ պէսզի ինքզինքը ցուցնէ «իրենին»:

Գիշեր մը իրենց յատուկ սրճարանին մէջ նստած էին ջրհանկիրները, երբ յանկարծ «կրակ կ'այ» ի աղաղակ մը լսուեցաւ: Օննիկ ուրախութենէն խաղաղ վազեց իր ընկերներուն հետ և վայրկեան մը չտեսած՝ ջրհանը կը սուրբար փողոցներէն՝ առաջնորդութեամբ Օննիկի որ խորագամը ձեռքը՝ սրագոչ գանչիւններ կ'արձակէր: Հրդեհին վայրը հասան բայց Օննիկ ի՞նչ տեսնէ հոն. տունը, որուն երկաթօրմերը շինած էր ինք, միջին յարկէն բռնկած էր անուկի սաստկութեամբ. բոցերը՝ դուրս ժայթքելով պատուհաններէն՝ տունին վերնայարկը կը լցուրտէին: Կին մը՝ հերարձակ և կիսամերկ՝ փողոցին մէջտեղը կեցած «աղջիկս, աղատեցէք աղջիկս, կերի կոր» կը պռռար աղեկէջ ձայնով:

Օննիկ ձեռքը ճակտին զարկաւ:

—Օ՛, ա՛ն, ա՛ն, կերի կոր, էս պիտի ազատեմ:

Երիտասարդը կոյր յանդգնութեամբ վեր շուլուեցաւ տունին ստորին պատուհանէն, մինչ բոցերը վար կը թափթփէին հեղեղի պէս, և տունէն ներս մուխի ալիքներուն մէջ անհետ եղաւ:

Օննիկի ընկերները դող ելած՝ կը պռռային կը կանչուրտէին որ դուրս ելլէ. ո՞վ մտիկ կ'ընէր, երիտասարդը՝ յախուռն ոստումներով շտենակէ սենեակ կը վազէր վառած գերաններ գլխուն ընդունելով, բոցի ապտակներն արհամարելով. էն վերի յարկը հասած էր հիմակ և փողոցին վրայ նայող սենեկի մը մէջ, որ մուխով լեցուած էր, սկսաւ խեղայեղումով վազվառել, աղիտղորմ աղաղակներ արձակելով, յուսահատութիւնէ գրէթէ լալով. յանկարծ կանգ առաւ, կը խեղդուէր, կը ցնորէր, կը մարէր, սենեկին անկիւնը որ չէր տեսնուէր, մէկէն լուսաւորուեցաւ. Օննիկ դէպի հոն վազեց ուրախութեան անպատմելի ճիւղ մը բառնալով. բան մը, մարմին մը գրկեց իր կորովի բազուկներուն մէջ և երկու տատումով պատուհանին քով հասաւ. չչափեց անջրպետը, վասն զի միտքն իր կշիռը կորուսած էր, թանկագին բեռովը մէկտեղ վար նետուեցաւ, միջոցին մէջ, ուր իրեն հետեւեցաւ բոցավառ գերաննիրու խուժան մը:

Երբ Օննիկ սալայատակին վրայ ինկաւ, խուռն ամբոխն անոր վրայ խուժեց:

Ամէնուն բերնէն ցաւազին աղաղակ մը ելաւ:

Օննիկ, որ անմիջապէս մեռած էր, իր հուժկու բազուկներուն մէջ կը սեղմէր շրջագգեստ ձեւերու յատուկ գաճէ արձան մը:



Խ Ա Չ Ի Ն Ա Ի Ա Ն Գ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Անտարակոյս կան բազմաթիւ աւանդութիւններ խաչին ծագումին նկատմամբ՝ որոնցմէ շատերը յիշատակուած են նշանաւոր պատկերներու կամ ծանօթ գրութիւններու մէջ: Սըր Չօն Մէնդվիլ կը յիշէ սոյն աւանդութիւններն, բայց որովհետեւ երկար պիտի ըլլայ զանոնք մանրամասնաբար մէջ բերել, հոս յիշենք միայն սոյն աւանդութեանց գլխաւորներու ամփոփումը:

Թէպէտ Ադամ ու Եւա երկար ժամանակէ ի վեր երկնային գրախտէն արտաքուտուած էին, և մեղքի փորձութենէ ազատ, հին օրերու յիշատակը թարմ պահած էին, թէպէտ բազմաթիւ դարեր անցած էին Ադամի ծնած օրէն ի վեր և շատ մը դժբախտութիւններ շարունակուած, բայց տակաւին փափաքելով ապրիլ, տխրեցաւ երբ տարիներու հոլովմամբ ծերանալով զգաց թէ մահամերձ էր, վասն զի իր սիրեցեալ Աբէլ որդիէն զատ՝ տակաւին տեսած չէր մարդ մը որ դադարած ըլլայ ապրելէ, ուստի կանչելով իր Սէթ որդին խնդրեց որ երթայ և Եգեմի պարտէզին մէջ աճող կենաց պտուղը կամ հոն բզխող սղորմութեան իւղը իրեն բերէ՝ որպէս զի բժշկուելով իր հիւանդութենէն՝ կեանքը երկարի: Սէթ վարանեցաւ, որովհետեւ չէր գիտէր մարդկային առաջին բնակարանին ճամբան, բայց Ադամ բացատրեց անոր թէ բաւ պիտի ըլլար հետեւիլ միայն իր ծնողաց հետքերուն որ հողին վրայ այնչափ որոշակի դրոշմուած էին:

Այսպէս հետեւելով ճամբան քայլ առ քայլ Սէթ հասաւ երկրային դրախտի դուռը, սակայն մեծ եղաւ

իւր յուսահատութիւնը երբ դրան մօտ տեսաւ հրեշտակ մը՝ լուսաւոր սուր մը ձեռքը, զոր ամէն կողմ կը տատանէր: Սէթ խոնարհաբար յայտնելով իր յանձնարարութիւնը, խնդրեց որ Ադամի այնչափ փափաքած սպեղանին սուներու համար թոյլտուութիւն տայ իրեն, սակայն հրեշտակը առանց իր տեղէն շարժելու ըսաւ Սէթի, «Ողորմութեան իւղը Ադամի մեղաւոր գլխուն վրայ թափելէ առաջ հինգ ու կէս երկայն օրեր (հինգ հազար հինգ հարիւր տարի) պէտք է անցնին»: Սէթ ահաբեկ և յուսահատ ետ դառնալու միջոցին հրեշտակը գլխով անոր վրայ թոյլ տուաւ միայն գաղտնի ակնարկ մը նետել այն պարտէզը ուր երբեմն իր ծնողքը բնակած և անհնազանդութեամբ ամէն բան կորուսած էին: Շարժուն սուրին վայրկեան մը հանգարտ կեցած ժամանակը մեծ փափաքով սկսաւ ներս դիտել, սակայն իր անյազ աչքերը աւելի երկար յառած մնացին պարտէզին ճիշտ մէջտեղը տնկուած ծառի մը վրայ՝ որուն արմատները դժսխքի ստորնագոյն խաւերուն մէջ կեցած և իր ձիւղերը մինչև երկինք կը հասնէին, իսկ իր ամենաբարձր գագաթին վրայ կը կենար նորատի կին մը լուսափայլ տղեկ մը ի ձեռին, վայրկեան մը վերջը հրափայլ սուրը նորէն սկսած էր իր արագ արագ շարժումը: Պահապան հրեշտակը տեսնելով Սէթի սիրտը որ մանկիկին ակնարկին երկիւղով լնցուած էր, յայտնեց իրեն թէ ան Փրկիչն էր որու գալուստը այնքան տարիներ տուած մեր նախահօր անիծուելու ժամանակ նախաձայնուած էր: Յետոյ հրեշտակը կենաց ծառէն երեք սերմ փրցնելով Սէթի տուաւ և պատուիրեց Ադամին լեզուին տակ դնել զանոնք, երբ սա իր վերջին շունջը աւանդէր: Սէթ տուն վե-

բաղարձաւ իր հետ զգուշութեամբ տանելով հրեշտակին պատուէրները: Երեք սերմերէն երեք բարակ ծառեր յառաջ եկան որ քիչ մը ետքը միտնալով կաղմեցին մէկ բուն.—խորհրդամշան Երրորդութեան—ծառն աճեցաւ և տարածեց իր ահագին ճիւղերը մինչև Արբահամու օրերը, որուն շուքին տակ առաջին անգամ հանգչեցաւ Արբահամ երբ Աստուծոյ ձայնին առաջնորդութեամբ Պաղեստին գիմեց: Կ'ըսուի թէ Մովսէսի և Ահարոնի հրաշագործ գաւազանները այս զարմանալի ծառին սարերէն շինուած էին և Մարահի լեզի ջուրը երբեմն անուշցած էին այս ծառին կեղեկէն փոքրիկ կտոր մը աղբիւրին մէջ նետելով:

Մէկ քանի հեղինակներ կը հաստատեն թէ Ադամ Լիբանանու մէջ թողուած էր և թէ Դաւիթ սնոր գերեզմանին վրայ աճած ծառին գեղեցկութեան վրայ զմայլելով փոխադրած էր Երուսաղէմ իր պալատի պարտէզներուն մէջ. երբ Սողոմոն սկսաւ իր անունը կրող տաճարը կառուցանել, հրամայեց ծառը կտրելով փայտը շինութեան գործածել, բայց հակառակ հանրածանօթ ճարտարապետ Հիրամի ջանքերուն սոյն ծառին փայտը յօրինած առարկային չի յարմարելով միշտ անգործածելի կ'ըլլար: Հիրամ սրտնեղութեան միջոցին կը նետէ գայն անօգուտ նկատելով, որուն վրայ քիչ ետքը կին մը Սէպէլա գալով հանգչելու համար անոր վրայ կը նստի, յանկարծ իր հագուստները կը բռնկին և բոցերը դայն շրջապատելու ժամանակ կատաղաբար կը մարգարէանայ որ այդ փայտը բացարձակապէս Հրէից կործանումը կը նախաձայնէր:

Այս տեսակ գիպուած մը կրկին չպատահելու հա-

մար փայտը կեղրոնի հեղեղատին մէջ նետուեցաւ, ուսկից Միջին դարու մատենագիրները կը պատմեն թէ նախ հոսանքով քշուեցաւ Յորդանան գետի մէջ, ապա Մեռեալ ծովը, և անկէ Կարմիր և Պարսից ծոցը ուր կը հանդիպի Սափա թաղուհիին, որ առնելով ընծայ կը տանի Սողոմոնի, որուն հարստութիւնը խելքը և իմաստութիւնը փորձելու համար այցելութեան կ'երթար:

Պատմութեանս ուրիշ մէկ մեկնութիւնն ալ կը յայտնէ թէ տաճարի շինութեան ժամանակ Հիրամի մէկգի նետած փայտը առուակի մը վրայ իբր կամուրջ կը ծառայէր: Սափա թաղուհին այդ կողմէն անցած ժամանակ սարգան կանխատեսելով և չուզելով սուրբ սեան վրայ կոխել՝ վերցուց իր քղանցքն և բոկոտն անցաւ ջուրին մէջէն: Հրաշալի փայտը իր հրամանով Սողոմոնի բերուեցաւ, որ ոսկիով պատեց ու տաճարին գրան վրայ գետեղեց՝ ուր մնաց մինչև իր թուան ժամանակ, որ ոսկին առնելով փայտը հողին մէջ թաղել հրամայեց իր ըրածը գաղտնի պահելու համար. տարիներ վերջը Բեթիսդայի աւազանը փորուեցաւ, ճիշտ այն տեղն ուր այս ծառը թաղուած էր, և իր ջուրերու անկող զօրութիւնը վերայիշեալ փայտին ներկայութեան կ'ըմբոստանային: Հոս անտեսանելի մնաց մինչև Քրիստոսի խաչելութեան ժամանակը երբ խորհրդաւոր կերպով ջուրին երեսը ելաւ և չորնալու վրայ էր, երբ դահիճները փայտի կտոր մը կը փնտռէին Նազովրեցին չարչարելու գործիք մը պատրաստելու համար, և որովհետև ձերբակալումէն ետքը ժամանակը կարճ էր, աւելի հեռուները չերթալու համար հոն պատրաստ գտնուած աւանդական փայտն առնելով՝ խաչ մը շինեցին: Զարմանալի է ըսել թէ

խաչը դրուեցաւ ճիշդ այն կէտին վրայ ուր տարիներ առաջ միեւնոյն ծառը բուսած էր և գետինը փորելու ժամանակ գտնուեցաւ Ադամի գանկը որուն համար բլուրն ալ կոչուեցաւ Գողգոթա (գանկին տեղը):

Աւանդութիւնը կը յաւելու նաև թէ Քրիստոսի խաչելութեան ժամանակ մէկ քանի արիւնի կաթիլներ կ'իջնան Ադամի գանկին վրայ կատարուելու համար Եգեմի պահապան հրեշտակին մարգարէութիւնը, այս աւանդութեան պատճառով է որ նկարիչները շատ անգամ խաչին քով գանկ մը կը ներկայացնեն, ցուցնելու համար թէ Փրկչին գորութիւնը կը տարածուի աշխարհի սկիզբէն, առաջին մարդէն, մինչև յաւիտեան:



Ո Ւ Տ Ո Ղ Ն Ե Ր Ե Ի Ո Ւ Տ Ո Ի Ո Ղ Ն Ե Ր

Դիտած եմ որ աշխարհս միշտ շատակէրներով լեցուած է:

Օրինակները չեն պակասիր:

Դիցարանութեան մէջ թիւոնոսը ունինք որ իր զաւակները կ'ուտէր առանց որ և է ցաւ մը զգալու իր աղիքներուն մէջ:

Սուրբ գրոց մէջ Եսաւ պնակ մը ոսպի փոխարէն իր անդրանկութեան իրաւունքը եղբորը Յակոբին ծախեց, թէպէս ան ալ վերջէն զինքը սեղանաւոր ըրաւ:

Միջին դարու մէջ Իւկոլէն իր զաւակները կ'ուտէր, ինքզինքը աւելի առողջ պահելու համար:

Տղաքը կը վախցնեն խրտուիլակի (խարախօսիճօրօզ) սպառնալիքով որ կ'երեւի թէ հոչակաւոր շատակեր մըն էր:

Համբաւաւոր է Շարան, որուն մեծ և արգասաւոր գաւառ մը հագիւ կը բաւէր:

Լուկուլասի համբաւը ամէն մարդ գիտէ:

Տօքթօր Վէրօն, Աղէքսանդր Տիւմա Հայր, Պոտօն, Պրիս երեւելի շատակերներ էին:

Եթէ քիչ մը գլուխս դարձնեմ, առանց վախնալու թէ վիզս կը բռնուի, պիտի տեսնեմ որ թէ՛ ասուն և թէ՛ անասունք միշտ թէ՛ կերած են, թէ՛ կուտեն և թէ՛ պիտի ուտեն:

Օրինակի համար. —

Սարդերը ճանճերը կ'ուտեն, գայլերն ալ փափուկ գառնուկները, և կատուները մուկերը ևն.

Թռչունները որդերը կ'ուտեն:

Շանաձուկերը խոշոր ձուկերը կ'ուտեն:

Չկնորաները բռնած ձուկերնին կ'ուտեն:

Առիւծները և վագրերը պզտիկ երէները կ'ուտեն, աղուէսը՝ աքլոր և հաւ:

Կալուածատէրերը և փաստաբանները իրենց յաճախորդները կ'ուտեն:

Վաչխառունները իրենց աղքատ պարտականները կ'ուտեն:

Բժիշկները և դեղագործները իրենց հիւանդները կ'ուտեն:

Թոթովները՝ բառերը կ'ուտեն:

Թատրոնի կամ քաֆէ—չանթանի դիցուհիները իրենց տնօրէնները կ'ուտեն:

Աճապարարները թուր կամ քար կը կլենն :

Հարուստի տղաքը իրենց հօրը ձգած ժառանգութիւնը կ'ուտեն :

Եկեղեցականները սուրբերը կ'ուտեն :

Տղաք, բացի անոնցմէ որ պիպրօնով կը մանին, ստինք կ'ուտեն :

Պօաները՝ այժ և մինչև անգամ էջ կ'ուտեն, թէ պէտ ասիկա արգելք մը չըլլար ասոնց թուոյն հետարգհեաէ աւելնալուն :

Վառարանները ամուլս կամ փայտ կ'ուտեն :

Դիւրագրգիւ մարդիկ իրենց խօսակիցը կ'ուտեն : Եթէ իրենց խօսակիցը աղուորիկ կին մը ըլլայ՝ կորուստը այնչափ մեծ չըլլար :

Աւանակները իրենց ցորենը չհասունցած կ'ուտեն :

Աղքատները սատկած կովու միս կ'ուտեն :

Խոստէրք հացը իրենց գրպանին մէջ կ'ուտեն :

Ատեն մը Պօրսայի մէջ խաղացողները ձերմակ հաց կ'ուտէին, հիմա հացութան կ'ուտեն :

Քօքօթները, հասարակաց կիները, մօտիսթները, սրճարաններու մէջ ծառայող կիները, պզտիկ դերասանուհիները, վերջապէս Եւայի բոլոր աղջիկները ամանկ աղուոր կերպիւ կ'ուտեն մարդիկը որ ես կը զարմանամ թէ ինչ մեծ հրաշքով մարդկային սեռը երկրի վրայէ անհետացած չէ մինչև ցարդ :

Կ Ա Ր Ծ Ի Ք Ի Ն Բ Ի Ա Յ Ա Ն

Անձանօթ թաղական մըն եմ ես :

Ենթադրենք որ Տէր թաղական մը, որ հարիւր հազար ոսկի ունի, յատենի խորհրդոց կը պնդէ որ մը թէ շաքարը սև է :

— Այո՛, կը պատասխանեմ, մանաւանդ թէ շատ սև է մինչդեռ տգէտներն այն հաւատքն ունին թէ ճիրմակ է :

Թաղական մը որ իննսուն հազար ոսկի ունի, շաքարի սեւութիւնը կը փաստաբանէ նոյնպէս :

Կը պատասխանեմ :

— Իրաւունք ունիք, ինչ որ կ'ըսէք յայտնի է արեւու պէս :

Ութսուն հազար ոսկի ունեցող թաղական մըն ալ կը փափաքի որ մը որ շաքարը սև ըլլայ :

Կը պատասխանեմ :

— Համակարծիք եմ ձեզի, քուէի դրէք ինդիրը : Եօթանասուն հազար ոսկեոյ տէր թաղական մըն ալ կ'որոշէ ինքնիրեն թէ շաքարը սև է :

Կը պատասխանեմ :

— Կ'երեւի թէ բաւական խնստասիրած էք շաքարը :

Վաթսուն հազար ոսկի պարունակող դրամարկի տէր թաղական մըն ալ կը հաւատայ թէ սև է շաքարը : Կը պատասխանեմ :

— Հաւատք քո կեցուցին գրեզ :

Յիսուն հազար ունեցողին ալ ինչո՞ւ քուէն չտալի նպատակ սեւութեան շաքարի :

Անոր ալ կը պատասխանեմ :

— Մանաւոր ուսու՞մ ըրած էք գոյներու վրայ :

Քառասունըհինգ հազար ոսկի հարստութիւն ունեցողն ալ որ մը կը հաճի պնդել շաքարին սեւութիւնը : Կը պատասխանեմ :

— Կարծեմ թէ շաքարն սանկ քիչ մը ձերմակութիւն ունի :

— Ամենեւին չու՞ի, ամենեւին

- Աննչմարելի ճերմակութիւն մը :
- Սխալ է, կատարեալ սև է :
- Սէքերս խարած են զիս ուրեմն, ներեցէք :
- Քառասուն հազար ոսկին ալ երկար ատենաբա-
նութեամբ մը կը ճառէ շաքարին սեւութեան վրայ :
Կը պատասխանեմ .
- Ձեզի համակարծիք չեմ այս մասին . շաքարը
աւելի ճերմակին մօտ է քան սեւին :
- Կը սխալիք, չարաչար կը սխալիք :
- Կարելի է :
- Երեսուն հազարնոցն կ'սկսի փաստաբանել շաքա-
րին սեւութիւնը :
- Կը պատասխանեմ
- Հակակարծիք եմ ձեզի, էֆէնտի, շաքարը սև չէ :
- Սև է :
- Ո՛չ :
- Կարծիքներն ազատ են :
- Քսան հազարնոցին հետ դէմ առ դէմ կուգամ :
- Շաքարը սև է :
- Կը սխալիք, էֆէնտիս, շաքարը ճերմակ է :
- Սև է :
- Ճերմակ է :
- Սև է :
- Ճերմակ է :
- Տասը հազարնոցը կը յաջորդէ քսան հազարնոցին :
- Ի՞նչ կարծիք ունիք շաքարին գոյնին վրայ :
- Ա՛տ ալ հարցնելու բա՛ն է . ճերմակ է :
- Ո՛չ, սև է :
- Հրամանքդ գնա՛, ինքզինքդ կարգալ տուր
քիչ մը :
- Հաղարնոցը կուգայ :

- Սա շաքարին գոյնն ի՞նչ աղուոր սև է :
- Շաքարը սև է մի, խենդեցա՞ր, ի՞նչ եղար :
- Ինչո՞ւ խենդենամ :
- Գնա սրկէց աղբար, գնա՛, դուն ընաւ գաղա-
փար չունիս գոյնելու վրայ, ամօթ է, ամօթ :
- Ե՞ս չունիմ :
- Այո՛ :
- Դուն տգէտ ես :
- Տգէտը դուն ես, քու տեղդ ըլլամ նէ կ'ամչնամ
խօսելու :
- Հարիւր ոսկինոցը կը ներկայանայ :
- Շաքարը ինչո՞ւ սև է :
- Պատուոյս չեմ ձգեր քեզի պատասխանելու :
- Դասատու մը եւս կը պնդէ ինչ որ պնդած են
առաջինները :
- Կը պատասխանեմ,
- Տղայ ես դուն, նախակրթարան գնայ :
- Խեղճ խմբագիր մըն ալ օր մը պատիւ կ'ունենայ
նոյնը պնդելու :
- Կը պատասխանեմ,
- Անպիտան, ջնջո՛ց, մուրացկան, գնա գրաչա-
րութիւն ընելու :
- Երկու ոսկի ունեցող թաղական մըն ալ միւսնե-
րուն պէս կը պնդէ :
- Կը պատասխանեմ :
- Ո՞ւհ, աւանակ :
- Փող մը չունեցող թաղական մըն ալ կը յանդգնի
նոյնը պնդել :
- Կը պատասխանեմ :
- Ձեզիպէսներն են որ թաղիս վարկը կտարեցին :
Եւ փայտ մը առնելով ուզածիս պէս կը ծեծեմ :
- Յ . Յ . ՊԱՐՈՆԵԱՆ

ՊԱՆՈ Կ'ԵՐԹԱՅ

Բնիկ Ակնայ քաղաքէն ձթիկօնց Ավտօ աղան, որ 14 տարեկան եղած ատեն Պոլիս եկած և գլխուն շատ մը տաք ու պող ջուրեր հոտած ըլլալէն ետք, ներկային մէջ 30 գարուններ ու 31 աշուններ տեսած ամուրի երիտասարդ մ'է, ցերեկները սեղանաւորական փոքր գործերով կ'զբաղի ու գիշերներն ալ ժամանցի տեղեր կ'փնտռէ, իրեն ծանօթ չըջանակին մէջ: Արգարե ամէն գնացած տեղն ալ լաւ ընդունելութիւն կը գտնէ, որովհետեւ վրայ ձգոց մարդ մը չէ, և իր կարողութեանը համեմատ «Լեզուն բերնին մէջ կը գառնայ» կ'ըսէին, այսինքն խօսածը մտիկ ընել կուտայ:

Քանի որ մեր ընթերցողները զինքը ճանչցան, հետեւինք ուրեմն իրեն, որ անցեալ փետրուարի վերջին շաբաթ գիշերը քաղքցիներէն իսուպխարենց իրաչիկ աղային տունն այցելութեան կ'երթայ, որոնք բազմամեծ ու բարեկեցիկ ընտանիք մ'են:

— 0. . . հրամայեցէք Ավտօ աղայ, կ'ըսէ իրաչիկ աղան, ա'ս ուրէք իւր օրթան չիկաք. ճի՛փ մեզ մօռցար:

— Ի'նչիւ տի մօռնամ, ուր իւր բաց գէօն գըննիմ նը ներս կու մըննիմ. անէնկ ալ ըսի թը սո իրիկիւնն իրաչիկ աղային էրթամ, կ'ըսէ Ավտօ աղան:

— Բարձօվ հաղար բարէօվ, մենք ալ աիօմնիս գըռանը քերիչին էյանք տըվէր թը նայինք ճէնկըռտիքը վէօվ տի շաջեցընէ իւ ներս տի մըննէ: Շա-

բաթ իրիկուն է էյլէք կուլինք՝ վախիթէ կ'օսնի: = Մէր ծնցուցած վախիթ ն'իչ տ'ըլի իւր, հէյկիտիտի, վախիթը անէօնք կ'օնցընեն իւր աղէրնին չէօր իւ վէգէրնին պէք կու կօյնի. մենք տոտօնց կ'էլենք չարչու կ'երթանք թը իրէք ու կէսին ճամբան գըննինք, իրիկընէր ն'ալ հոգինիս քարերը կու բըսինք: Լաքին սո ըստգնէրս պաշլիճայ իմ հախիտ է. չիւնքիմ էֆէնտիմէ սէօյլէհէմ,

— Էֆէնտիմիգ Ալլահ: = Հըրամմանքնիգ Աստըզու տըվածէն ճէշտէ ճէշտէ տըղաք էք հասիւցէր, անէօնց էմմէն մէկը մէյմէկ խօլթուիս քտէկնէկի ին. Ասվազ էմմէ ն'ալ ամուր ճէոօք պահէ իւ ճէգ ալ կէճինտէն տայ իւր վրանին նայինք իւ վայլէք:

— Օնցած շաբաթ տղօցը աշվին գէօնը մնաց թը՝ հըմայ Ավտօ աղան ուր իւր է նը կուգայ իւ կըսկուծ Լավֆ կունէտինք. էյ հաթթայ խէհվէնի'ս ալ կէս սահաթ մէքս արանք թը հիրաց խըմենք խէ տէ, սո թասախուպնիս պօշը էլավ, էտ նախըպէթ կայանք տըվանք թը՝ գէհէր Հարգինցը գնաց:

— Օնցած շաբթըվան գելիւս էկագները հէ'չ մի հարցնէք. խէլք ս'իւ միտքըս էպէօ գէպէօ էյավ, իւթ օր է տահա գէլինս վրաս չէկավ:

— Ի՞նչը լընի, մենք ալ կրանք վուխուֆ լընիթ թը ինչիւկին ն'է:

— Էվէլ էմիթ տէ սա՛ տի հարցնեմ թը հըրամմանքնիտ պալօզ գնացէ՛րէք:

— Իրաչի, Ավտօ աղայ, ծառայականդ հէ'չ չիմ գնացէր իւ կէնճիւթան ս'ալ շատ հավաս կ'անէյի թը օր մի ն'էրթամ, լավը խըմէթ չէյավ:

— Իրաչիկ աղայ, բարէօվ իւր չէս գընացէր,

հըմայ գըրխէս օնցած ն'իւ աչօքըս տեսողներ ս'իւր
խօրըթխմ նը՝ օխտը ճէտտիտ նէսիֆ երեսլեֆ թէօ-
պէսի տ'անէս պալօղին գոնէն պիլէ օոնէլլա :

— Օրհնազ բէրանտ բաց նայինք թը գէօրծը
ի'նչիւկին նէ, Ավտօ աղայ :

— Օնցած շարթ առտիւ՝ անիւնէօվը չիլլի,
սատընին մէկը պիւկէլէկ էղալ թը «Ավտօ աղայ սս
իբիկիւն ճէսիւմ պալօղ մի տ'իլլի Պէքօղլի՝ հիրաց
էլլինք էրթանք» :

— Բարէօվ կ'ըսէս, ըսի ըմայ, ծառայականիտ
չի գնացած տեղ նէ. օղանցան չի գիտիմ : «Ատ
խուսուտին հէ՛չ մէրաք անէլիւ բան չի կայ» ըսաց,
«էս հիլվէց տըպայ մի գնացէր իմ, շատ բարէօվ էլլիկ
կ'ուլլինք» :

Տէրեքէն էֆէնտիմ, խօրըթաս չիւրիւթմիչ չա-
նիմ, «մէկը մէկիւն քահընայ, մէկը մէկիւն սատընայ»
ըսածին պէս, խելք խելքի տըվանք իւ գիշերվան
սահաթը Չիլին ըէտտէնէրիւն քէօփրիւէն օնցանք
օթթին, իւսկէկ խալտուրումէն թէք նէֆէս շուլլը-
վէցանք վ'երանք Պէկ օղլիի տըրիւսթ ճամբան : Մէկէր
սահաթը կէն էոէչ պալօղին գըռվիքը չեն բանալ
էղեր. գաղինօ մի մտանք՝ քանի մի խէտէն գօնետաթ
ծփեցանք, սէյ նէնկ վախիթ նէկաւ, մեր գլօխներ
ն'ալ պուլուտի խափտան էղած, տըրիւսթ պալօղին
գէօրը ափ առանք :

Մարդ գլօխ ճէօրիւմէն լիւրայ մի նէ էղեր,
կըտէրը ցընծացանք, ֆըթիյները ափէրնիս դըրին,
մէնք ալ տարանք միւքէրրէր գէօրը կօյնօղին տը-
վանք վ'օնցանք նէրս :

Լա՛քին, աֆ տ'անէք իւր հըժվի ֆէօտ խօրըթիւ
պարմուս փակցընիս, իւ էօմը 'անէք իւր ջուր

բէրին՝ խէյֆէնիս ալ խըմինք էվ պախի մնացածը
նախ լ'անիմ, կ'ըսէ Ավտօ աղան :

— Տղա՛ք ջուր մի բէրէք Ավտօ աղային, իւ խէհ-
վէնիս ալ ատիւրցիւցէք. պօռաց, իյաչիկ աղան :

Հրամանը շուտով կատարուեցաւ, և Ավտօ աղան
ջուրն ի մի ումպ պարպելէ ետք, յարեց թէ,

— Խաչիկ աղայ ա՛ն ինչ ապուհանաթի պէս անիւշ
ջիւր է, այնի Ակինը կաթնախպիրայ ջըրին համը
կուժանի :

— Չաննէրնիտ ճիփ կօղլիչ չէ, Ավտօ աղայ, մէնք
հըմայ խըմէլիւ սարֆլյաթ արած ջըրէրնիս Սիրքէճին
Յէ նօմէրալիւ խանիւթը սաքին, էպիչէխպայ միւթէ-
պէրնեքէն Մխիթար աղան իւր կայ իսէ նը՝ անկի
կ'առնինք. ի'նչ անիմ չիւրիւյ լաֆը, ըսածիտ պէս
մարդը կաթնախպիրին իւ բէրգին ախբերին ջըրէրիւն
պէս նատիտէ ջըրէր կու ծախէ :

— Ծառայական տ'ալ բարէօվ կու ճօշնամ Մխի-
թար աղան, լաքին չիգիտէլի թը ջիւր կու ծախէ :

— Ջիւր ծախէլ կ'ըսէս իւ կ'օնիս Ավտօ աղա .
Մխիթար աղան անիւշ ջըրի ճէսիւմ թիւճճար է :

— Ասկի էթքը ձան ս'հասած տէղը չով տ'անիմ
թը բարէօվ ջիւր խըմէլ իւղէօղը՝ գլօխը Սիրքէճին
Յէ նօմէրօն թօղ խօթէ :

Այսպէս և այնպէս սուրճերնիս խմիլէ վերջ,
Ավտօ աղան խօսքին թելը ձեռք առնելու համար
կը տատամսի :

— Ավտօ աղայ, գի'տէս թը լէզվիտ տակը բան
մի կայ իւ գայել չէս անէր :

— Տի խօրըթիմ ըմայ՛, իշկել կանիմ :

— Իշկել ի'նչիւ տ'անէք, սս ալ ձէր տիւնը կու
սէպվի, բան մի կուղէք նը էօմը 'արէք իւր բէրեն :

— Խա՛յիր էֆէնտիմ, ըսէլ բանս ա՛տ չէ, սս հէ-
 տղղին միթ ս'ինկաւ թը՝ մէր Այնայ օզանցան անէնկ
 էր իւր, էփիւրիւր դաս դրացին իրարիւ տիւն իւր
 կու ժողվրտէյին նը. էկսիւկ էթէյնէր ն'իւ ճահէլ
 հարանէրը՝ մնծիւնացը քէօվ անխօս լընէլնիւն
 մինասիպէթէօվը, իրարիւ հէտ կալլած սըռտան
 խօրըթանին սէրպէսթ անէլլու համար, տանը սամ-
 մէնէն խէլլէթ տէղը կու ժողվրտէյին, եայնիւայ՝
 — խօրըթաս հէռիւ օտայէս, — հիրաց կէրթային
 օսաց ճամբան: Անէօսմէ մէկը կ'օտնէր սսըլ մէ՛հէլ
 տէղը կու նըստէր իւ մէկալէօնք ալ աշկերտասն
 տղօց պէս՝ օտաս վրայ սըրափայ կու շարվէին,
 սըվկի նըվկի խօրըթելէօվ իրար էյլիկ կ'անէյին.
 նէտէն սօղրայ՝ նըստօղը կէլէր իւ ճօթը կօյնօղը
 կու նըստէր. վէլհասըլը՝ հըժվի վարի ճէօթը կօյնօղին
 կուգար սըրան:

— Ավտօ աղայ, տըրիւսթ ն'իւր ըսեմ նը ատ օզան-
 ցանիս ըստըմպօյցօց քէօվ խօրըթելլու բան չէ. գօ-
 րէմ «փիս հօտիւն վրայ էյլիկ չ'ըլլիվեր» ըսէլէօվ,
 մատէրնին տի փաթթին:

— Ծառայական տ'ալ ըսէլ չիմ ուղէր թը բարէօվ
 օզանցայ մի ն'է, եանիւայ ըսէլ բանըս անէթը, մն-
 ծիւնաքը մինակ կու մընային իւ ուղածնիւն պէս
 էմմէնէն թէրքիտէպ բան ն'ալ կու խօրըթէյին:

— Միտ բանիտ հըմայէկս հասկըցայ, և խօսքն
 իրեննիրուն ուղղելով, աղաք քիչ մի օթթի օտան
 գնացէք էյլիկ եղէք:

Հրամանը շուտով կը կատարուի:

— Չիւնքիմ անէնկ բանէր նախը տանիմ իւր,
 ճայհէլնէրիւն քէօվ չի խօրըթվիր:

— Ալ հմայէկս ուղազնիւտ պէս կրաք տէօչէնմիւ
 լընիր:

— էֆէնտիմ, էփիւրիւր պալօղին սսըլ մէհէլ
 տէղ ն'իւր մտանք նը՝ գիտցայ թը կըթթէօց համա-
 մին խէլլէթ ն'իմմտէր: Էս ըսիմ հարիւր, հըրամանք
 տ'ըսէ երկու հարիւր. էս ըսիմ իրէք հարիւր, հրա-
 մանք տ'ըսէ չօրս հարիւր, հասըլը՝ թէվէթիւն չանիմ
 հինգհարիւր կընիյ վ'աշխիկ կալին: Մէյ մ'ալ աշվիս
 վէր առնիմ իւր՝ ի՛չ կունայիս, դատաստանի պար-
 կէնքի պէս խաթ պէ խաթ կըթիք վ'աշխընէր, թէ-
 վէրնին իւ ծըծէրնին չըլպախ՝ տըտըղվէօրէր իւ նըս-
 տէրին ձէսվընին ալ մէյմէկ չիֆթէլլու տիւլպիւնէօվ
 իրար սէյիր կ'անեն:

— Ա՛լ իշկայ չիկայ, կը բացագանչէ Խա՛յիկ
 աղան:

— Ի՛չ տըսիմ իւր, տէսածըս կու խօրըթիմ: Ըսէլ
 ն'իքէն էֆէնտիմ, ան չըլպախ կօքիւզնէրնիւն վրայ՝
 չըլլինին կախած էլմասէ պօյմախ ն'էր ն'իւ գըլօնիւն
 անըմէկ մագէրնիւն մէջ խօթած միւճէֆէրաթը լէգ-
 վէօվըս չիմ կրնար թապիր անէր, կըրամ ըսէր թը
 խուեմուճի չարշիւտին պիլէ անխըտար զիւլէթ չիկայ.
 աշվիս չըլէցավ իւ խըմնիւս գըլօխըս վար ծոնցի:
 Հըմայէկըս աշվընիւտ էոջին բէրէք անխըտար մ'ալ
 էյիյմարգ: Չէօրսղին լէօսէրէօվ կուճըրքտայ. էճէլ
 չէճէլ լաթէրին հագէր. վէօր մէկը էրէսը գօցէր է
 իւ վէօր մէյ ն'ալ աշվին: Վրաս թասայ կօխէց, լա-
 քին մէյ մի գըննըված էղայ: Դառցայ հէտինիս ըսի
 թը՝— Մա՛չիւ սս լ'չիւնկին ն'է, չիւնը տէրը չի ճօշ-
 նար: Ակօնճ ս'իվար ըսած թը, «գիւն հէ՛չ կըստօտ
 մ'ալըրէր իւ էյլիկ լընէլտ նայէ. սսէօնց էմմէն ն'ալ
 սսըլ զէտէ մարգիկ էն իւ իրէնց ֆամիլիեաներ ն'են»:

Լավօը՝ ի՛նչ իւր ըսայ նը ախօնճըս չի մտալ:
 Մէյ մի գէյինըս էպէս զէպէս էղավ. բարկէննի մառ-

խըրանհերիւ պէս էմմէնը մէյ մէկ խըյէֆէթ ին մըտէր, ֆէօս կու վազին՝ ֆէօն կուվազին, իրար կու կըսմըթթին, իրարիւ տկընճէ բանէր մի կ'ըսին, իրարիւ կու մըյըղաբկան: Մըտօք ս'ըսի թը—ա՛ս կ'իտիըը էտէթ ն'էտէթը Սօթօմգօմօրի կ'իտիը է:

Աս հըտըղին պանտամուզուքան գըլլսընիւս վրայի թարաֆէն անէյ մի չալէլ պաշլայէց իւր՝ կօյնազ աէդէս թիզ մի վէր ցազկէցի: Զան ն'արի թը մախլուսը հըմայ իրար տի գըզին, ա՛ն տէրէճէն իրար օնցան: Մէկէր խէմ էրքէկ տիշի կուզատին էդէր իւ չիֆթ չիֆթ պօյ կ'անին էդէր: Տէսազնէրիւս վրայ էնտէչէ արած սըրայիս է, նայիս իւր կարմիր կէօզպաղիէօլ թըլինազ աշխից մէկավ ահօնճ ս'ի վար բանէր մի կուխօրըթէ: Հէտիս սէվտիկիւմին հարցուցի թը,—մա՛չիւ աս քած ն'իտմէ ի՞չ կուզէ: «Հիրաց խազանք կ'ըսէ» ըսաց: էս ալ գտոցայ ըսի թը.—Խաթիւն աշխի էս ձէր օգանցայէօլը օտաց խազ չի գիտիմ:

— «Աս խազին ֆաճրի կ'ըսէն, փէ՛ք խօլայ է. էս քէզի կը սովրէցնեմ», ըսաց: Մըտօք ս'ըսի թը՝ Օղօ՛րմութանըդ մէնիմ Սօվազ իւր, տօնճին ալ կօթ էս գըբէր. Ավտօն պալօզ տիգայ էդէր իւ՞ Ըսաընպօլցօց կ'իտիչէօլը օտաս խազ տի խազա էդէր:— Բարէօլ կ'ըսէս ըմայ, հէ՛չ իւր չի գիտիմ նը ի՞նտէօր տի խազամ:

— « Հիմաճուկ նայէ ինչ պըտոր էնէս. ա՛ս կայնամ տեղէդ պիտի էրթաս տէյօր դէմէրնիս կայնողներուն առջըը, անտէղ քու վրադ տէվիր մը ընելով՝ պիտի դառնաս նորէն աստեղ գաս կէնաս»:

Նայէցայ իւր աշխիկը ճըլլըլիւկ բան մի ն'է. ծըռէցօյ ահօժ ն'ի վար ըսի թը,

— Լէզիւտ իւ մախստնայի պէս մայվընէր տ'իւ-

տիմ. անիւրիւր ասկի տ'երթամ դիմաց՝ իւ տ'օլըրիմ տ'իգամ կ'ինէ ֆէօս տի կօյնիմ նը, կօյնազ տեղըս տահա բարէօլ է իւր քէնէ չիմ գատվիր: — «Խուշ» ըսաց, «Հիմաճուկ աս խազը խազանք տէ, ան ըսածդ էտքի պան է»:

Նայէցայ իւր շան աշխիկը միքքըս անի տպուկին հասկըցէր է. պասարաթըս կապէց իւ գէլինըս բարէօլ մի պառկըցիւց:

Էփիւրիւր էմմէն'ալ էրքէբլիւ տիշիլիւ չիֆթ չիֆթ սըրափայ շարվէցան նը. օրթան հէրիֆ մի կօյնէրէր, ինկիլիզճէ էր թը ֆրանտուզճայ քընթին մըջէն բանէր մի լըղճէօրկէց. անէս տէսէր իւր իրար պըլըված պաշլայէցանք չըլտըրտալ:

Խօրըթաս չէրկընցընիմ, հից վէց տըպայ մի ասէնկ գընացանք վ'էկանք, ան էսնէյին՝ աշխընին մէկիւն կէօզ պաղին վար ինկավ. մէյ մ'ալ նայիմ իւր քըչիլմի ն'էռէջ պըժըշտիւրի պէս ցաթկօտէօյ քածը, մէկէր խէմ մեղ տատիս տարին գիտցէօզ քիւփէ պինէն ճատու մի ն'է էդէր: Յէօս սէյմի սէնկ միտտէս ազգալ թողգալ էղաւ խէտէ: Նայիմ թը ըսի ասէօր ճէօթը ուր տ'երթայ: Օտաց խազին ֆասըլ ն'իւր լըմընցավ նը. աշխից ն'ըտաց թը, — « էրթանք պան մը խամէնք»:

— Միմասիպ, ըսի: Աջիկ թէվըս օնթամճին պէս, ալահապտպամ՝ իս առաջ տարավ պաշխայ խառըշալիւ տէղ մի. մէկէր պալօզին կազինօն է էդէր: Մըտօք ս'ըսի թը՝

— Ավաս, էկէր դիւն իւր տահայ շատ իւրիւր ատտեղվանքը մըյըղաբկաս նը, աս քածը օտվիս բարէօլ մի ջուրը տի գընէ իւ առտօնց Ըստըմպօլ օննէլիւ համար քէօփրիւլիս փարան Խարայ գէղ տիկօյնիս տիլլէնմիշ տ'իլլիս. դիւն էկիւ էրէսիս ջը-

ընտանեկան կամընտանեկան քերական քառասուն իւր քառասուն օլըրէ. զօրէմ սատընայական ըզվանէրիւ տիւշ կուլիս իւ «է-տինըն չար քան զառաջինըն» կուլի, սախըտար տարվան ար իւ նամուս տ'ալ ըստըկի մի: էվ դառ-ցայ իս ծնթած քածին ըսի թը՝

— Օտայ ճամբան էրթամ իւ դամ:

— Սա զխմացիտ նէրտիվէնէն վէր էլիւր ամայ, տէյօր վրան 100 նօմէրօ չի կարթաս նը նէրս չի մըտնէս, ըսայ:

— Էս էննաֆ մարդիմ, 100էն պակաս ալ լընի նը բանիս կուգայ. ըսէլէօվ պէօջը չձայէցի իւ կամըցայ մի քօշան օլըրեցայ վինկայ դըրսի դէօռը. զխմըցի պատին սահաթը նայէցայ իւր գիշէրվան օխթ ն'ուկէս նէ գընացէր:

— Ավտօ աղայ, աղէկ արիւր իւր ճահէլները գիւրս հէնէլ տըվիւր. էվ իմ ալ տատիս տըվան գլօխ ս'է էղէր իւր՝ էրկէնիւթանըս ա'տ գըռնէն նէրս չիմ մը-տէր: Էս գիսէյի թը պալօղ իւր կ'ըսին իսէ նը՝ թէ-վէթուռային տահա սալթանաթլիւն է. չիւնքի էփիւ-րիւր պալօղի խօրըթայ կ'ուլէր նը լիւրային դէմ կու-տային: Մէկէր հէրքէշ լիւրայ մի տիտայ իւր՝ կընկան ն'իւ աշխընին չըլպախ թէվէրը հալիսին սէյր անէլ տայ:

— Ծառայականիս ալ շատ քէֆ տըվալ, միքըս գըրի իւր խէլէմըս ձէքըս առնիմ, տէսաղ ն'երս գըրիմ իւ տամ Պէսպէնէնց լիւսահօգի Նշան աղային բարեյի-տակ աղիւն՝ Պարիւն Չարէհին իւր, նէշր'արած մու-ֆաստալ իւրիւզնամէյին մէջ տէրճ անէ. էվէլէմ աշ-խարք կարգան իւ իպրէթ առնին:

Ավտօ աղան ուղղագրութիւն չըգիտնալուն համար փոխանորդաբար գրեց՝

Մ. ԳԱԼԷՆՏԻՐ

Թ Ղ Թ Ա Խ Ա Ղ Ի Բ Ա Ս Ի Ա Ն Ս Ն Ե Ր

1. — Տրճակ մը թուղթը (32 հատ) խառնեցէք, կտրեցէք և ձախ ձեռքով բռնեցէք. յետոյ աջ ձեռ-քով մէկիկ մէկիկ բացէք ու սեղանին վրայ դրէք՝ ամէն մէկ թուղթին անփոփոխ կարգաւ ըսելով, պէյ, քահիլը, աղջիկ, պանախ, սասնոց, իննոց, ութնոց, եօթնոց:

Երբ ըսածնիդ շիտակ գայ՝ այն թուղթը վերուցէք ու մէկ կողմ դրէք. ու շարունակեցէք մինչեւ որ ձեռքերնուդ թուղթը լմնայ: Յետոյ սեղանին վրա-յինները առնելով՝ այս սնգամ առանց խառնելու կամ կտրելու նայն կերպով շարունակեցէք: Գծուար չէ թէեւ, բայց շուտով ալ չլմնար:

2. — Թուղթերը խառնեցէք, կտրեցէք ու սե-ղանին վրայ կարգով բաց շարեցէք ձախէն դէպի աջ երթալով: Բացած ատեննիդ ձախ կողմէն կը հանէք բոլոր այն թուղթերը՝ որոնցմէ ետքը եկող երկրորդ թուղթը տեսալով կամ արժեքով հաւասար է իրեն. (տեսակ ըսելով կը հասկնանք ուրիշ գուքս մը, ուրիշ օրեա մը, ուրիշ սպարթի մը, ուրիշ մաշա մը, իսկ ար-ժեք ըսելով կը հասկնանք ուրիշ եօթնոց մը, ու-րիշ աղջիկ մը, ուրիշ թահլը մը, ևայլն: Խաղը յա-ջողուած կը նկատուի երբ ամէնէն ետքը երկու թուղթ մէջայն կ'մնայ:

Դիւրաւ հասկցնելու համար օրինակ մը տանք: (Այս օրինակներուն մէջ համապատասխան համար իւ-րաբանչիւր թուղթի անունին առաջին տառերը պի-տի գործածենք. սապէս. Գ=գուրա, Օ=օրեա, Ս= սպարթի, Մ=մաշա, Մ=պէյ, Թ=թահլը, Ա=աղջիկ, Պ=պանախ, 10=տանոց, 9=իննոց, 8=ութնոց, 7= եօթնոց:

Սեղանին վրայ բանանք ձախէն դէպ ի աջ, ՍԹ, Օմ, ԳԹ, կը հանենք ՍԹ, և կը շարունակենք ուրիշ բան մը չխառնելով, Գպ, ՍԴ, Սպ, կը հանենք Գպ, և կը շարունակենք բանալ Ս10, ՕԴ, կը հանենք ՍԴ, և կը շարունակենք ՄԴ, Օ10 կը հանենք Ս10, կը շարունակենք ՄՏ, ԳԴ, կը հանենք ՄԴ, յետոյ ՕԹ, յետոյ Օմ: Եւ կը շարունակենք այսպէս մինչեւ որ ձեռքի թուղթերն իս հատնին:

3. — Այս խաղը շատ զժուար է և ջղային մարգոց գործը չէ, որոնք երկար ժամանակ պիտի վատնեն թուղթերը շփշխտակ տեղաւորելու:

Ձեռք մը թուղթը խառնելով կը կտրէք ու սեղանին վրայ կը շարէք, գոց, առանց դրած ատեննիդ վրան նայելու, չորս հորիզոնական կարգով և իւրաքանչիւր կարգը ութը թուղթով: Դուք ձեզի կ'որոշէք թէ առաջին հորիզոնական կարգը, օրինակի համար գուրս պիտի ըլլայ, երկրորդը օրեա, երրորդը մաջա, իսկ չորրորդը սպաթի: Ասիկա անգամ մը որոշենէդ հաքը՝ լաւ միտքերնիդ պահելու էք: Իսկ իւրաքանչիւր կարգի վրայ թուղթերուն արժէքները պիտի ըլլան, ձախէն դէպ ի աջ երթալով՝ պէյ, թահլը, աղջիկ, պաճախ, տասնոց, իննոց, ութնոց, եօթնոց:

Ըստ դիպուածին թուղթ մը կը բանաք, կը դարձնէք ու կը նայիք, ենթադրենք որ երկրորդ կարգին վրայէն էր բացածնիդ և Սպաթիին ութնոցը և լաւ. կը տանիք գայն Սպաթիներու կարգին վրայ ութնոցին տեղը կը դնէք՝ բաց: (Չորրորդ հորիզոնական կարգին վերջինէն առաջին թուղթին տեղը), յետոյ հոնտեղը առաջուրնէ գտնուած թուղթը կը բանաք. ենթադրենք որ Օրեալին պէյը ելաւ, կը տանիք գայն Օրեաներու կարգին առաջին թուղթը կը

բանաք ու կը տանիք այն տեղը ուր գրուած ըլլալու էր բնական կարգով շարուելու համար: Այսպէս կը շարունակէք խաղը մինչեւ որ բոլոր թուղթերն ալ բացուին:

Կրնայ ըլլալ որ խաղի ընթացքի միջոցին թուղթ մը կը բանաք որ արդէն կը գտնուի այն տեղը ուր գրուելու էր, այն ատեն խաղը կը դադրի և նորէն սկսելու է:

4. — Թուղթերը խառնեցէք, կտրեցէք և սեղանին վրայ բաց դրէք երեքաւերէք՝ ինը թուղթ:

Ձեր նպատակը պիտի ըլլայ այս ինը թուղթերուն մէջէն կարգով առնել պէյերը, թահլները, աղջիկները և ալյն, և իւրաքանչիւր տեսակէն մէկ մէկ դէպ կազմել:

Երբ գետնէն 1, 2 կամ 3 թուղթ առնէք, ձեռքերնիդ գտնուած թղթերէն 1, 2 կամ 3 թուղթ կը դնէք տեղը, այնպէս որ միշտ 9 թուղթ գտնուի սեղանին վրայ: Երբ կը տեսնէք որ գետնէն ինը թուղթ կայ՝ որոնցմէ կարելի չէ հատ մը հանել և ա՛լ խաղը պիտի դադրի, կրնաք գետնի թուղթերը ժողվել (բացի այն թուղթերէն զորս զատելով դէպեր կազմած էիք) և ձեռքերնիդ գտնուածներուն հետ խառնելով կարելի ու նորէն սկսիլ):

Այսպէս վերսկսելու հինգ անգամ իրաւունք ունիք: Օրինակի համար, ենթադրենք որ սեղանին վրայ բացիք:

Մա, ՄԹ, Օ10 | Օպ, ՄԹ, Սա | Գ10, ՍԹ, Գմ.

Ասոնց մէջէն կ'առնէք Գմ, և մէկ կողմ կը դնէք, կ'առնէք նաեւ ԳԹ և ասոր վրայ կը դնէք: Յետոյ ձեռքերնիդ բռնած արձակին վրայէն երկու հատ կը

բանաք ու հանած երկու թուղթերնուդ տեղը կը դնէք. ենթադրենք որ նոր բացածնիդ ըլլան ՄՃ և Գպ:

Կը հանէք ՄՃ և վրան կը դնէք ՄԹ և Մա: ձեռքերնուդ կը բանաք երեք թուղթ եւս, Ս10, Ս7 և ՍՃ:

Կը հանէք ՄՃ և վրան կը դնէք ՍԹ և Սա: Երեք թուղթ եւս կը բանաք. Մ10, Մ9, Մ7: Կարելի է այլեւս շարունակել: Գետինը գտնուած թուղթերը կ'առնէք, (ի բաց առեալ գատելով հանածնիդ) ձեռքերնիդ գտնուածներուն հետ կը խառնէք, կը կըտրէք և առաջուան պէս նորէն կը շարունակէք: Եթէ նորէն չյաջողիք, չորս անգամ ևս նոյն բանը կրնաք կրկնել:

5. — Այս խաղը իրաւցնէ համբերութիւն կ'ուզէ. մինչեւ տասներեք անգամ եւս կարելի է վերսկսիլ զայն:

Թուղթերը խառնեցէք, կտրեցէք և սեղանին վրայ բաց շարեցէք, երկու առ երկու իրարու վրայ դնելով:

Ձեր նպատակը պիտի ըլլայ բացուած ատենը զատել ու մէկ կողմ իրարու վրայ շարել նոյն տեսակէ թուղթերը՝ պէյ, թահլը, աղջիկ, պաճախ և այլն բնական կարգովը:

Երբ ձեռքերնիդ թուղթ չմնայ, Գետնի շարուածները կարգով կ'առնէք ու ձախ ձեռքերնիդ բռնելով կ'սկսիք վրայէն բանալով խաղը շարունակել, առանց թուղթերը խառնելու՝ կամ կտրելու:

Օրինակի՝ համար Գառաջին բացած թուղթերնիդ են՝ Մա՝ տակը, և ԳՃ վրան, ԳՃ մէկ կողմ կը դնէք: Յաջորդ երկու թուղթերն՝ են, տակը՝ Գ10, վրան Ս8: Կը շարունակէք. տակը Ս9, վրան ՄՃ, մէկ կողմ կը դնէք ՄՃ և կը շարունակէք. տակը ԳՃ, վրան 07.

կը շարունակէք, տակը Գ10, վրան ՍԹ, կ'առնէք ՍԹ և դուրսը գտնուած ՄՃ ի վրայ կը դնէք:

Այս խաղին դժուարութիւնը սա կէտին մէջ է որ, մաչային աղջիկը, օրինակի համար Օրեայի տասնոցին տակը մնալով, մինչեւ որ այս վերջինը չառնուի, ինք ալ չկրնար իր տեղը դրուիլ:

6. — Թուղթերը խառնեցէք, կտրեցէք և սեղանին վրայ շարեցէք կազմելով ութը խումբ՝ իւրաքանչիւր խումբի մէջ երեք թուղթ դնելով գոցուած իրարու վրայ. յետոյ այս ութը խումբ գոց թուղթերուն վրայ շարեցէք մնացեալ ութը թուղթերը՝ բաց ըլլալու պայմանով:

Հիմա երկու առ երկու միեւնոյն արժէքով թուղթեր պիտի առնէք այս բացուածներէն. երկու պէյ, երկու աղջիկ, երկու տասնոց և այլն, և առանուդ տակի գոց թուղթը պիտի բանաք ու շարունակէք երկու առ երկու հանել՝ մինչեւ որ թուղթ չմնայ սեղանին վրայ: Եթէ բոլոր թուղթերն ալ տարբեր արժէքներ ունենան և կամ միեւնոյն արժէքը ունեցող երեք թուղթ ըլլայ՝ միմիայն երկու հատը առնելու է և երրորդ ձգելու է:



Գ Ե Ղ Ե Ց Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

§ Մէկէն ի մէկ ծնող սէրը՝ ամէնէն ուշ կ'անհե-
տանայ :

§ Ծեր պչրուհի մը ո՛չ տարիքը կ'ըսէ, ոչ ալ կոր-
սընցուցած ակումներուն համրանքը :

§ Սէրը տարւոյն կը նմանի, ամէնէն զեղեցիկ ե-
զանակը գարունն է :

§ Մարգս իր ցոյց տուած յատկութիւններովը
կրնայ գանձնք հաստատ պահել :

§ Կնոջ վրայ ամօթխածութիւնն ու պարկեշտու-
թիւնը չեն կրնար իրարմէ զատուիլ, երբօր մէկը
երթայ՝ միւսն ալ անոր կը հետեւի :

§ Իր առաքինութեանը վրայ շատ վստահող կ'ինը՝
միշտ զայն կորսնցնելու վտանգին մէջն է :

§ Աշխատիլը՝ սիրոյ արեղն ու նետերը կորզել է :

§ Երբօր կ'ին մը սկսի ուրիշ կնկան մը հետ բա-
րեկամանայ՝ ձերութեան նշան է :

§ Սիրոյ հետ կատակ ընող կ'ինները՝ զանակի հետ
խաղացող տղոց կը նմանին, միշտ իրենց կը մնասեն :


§ Ամուսնութենէ առաջ զիրար ամէնէն շատ սի-
րողները՝ ամուսնանալէ ետք ամէնէն քիչ զիրար կը
սիրեն :

§ Սիրուհիի վրայ խորհող ձեր մը՝ ակնոց դնող
կոյրէն շատ աւելի խենթ է :

§ Զարգարանքնուն վրայ շատ խնամք տանող կ'ի-
ները՝ առաքինութեան վրայ շատ քիչ կը մտածեն :

§ Բոլոր ազնիւները խենթ կ'ըլլան ամուսնանալու
և շատ էրիկ մարդիկ ալ կը խենթինան ամուսնացած
ըլլալուն համար :

§ Սէրը հիւանդութիւն մ'է որ երեք եզանակ ու-
նի, փափաք ստացում, յագեցում :



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
ՍՊՈՒՆԵՐԵՆԻ
ԲԱՅՐԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՊՈՒՆԵՐԵՆԻ
ՍՊՈՒՆԵՐԵՆԻ

Գ. ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԷՈՐԳ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Գէորգ Զարդարեան աննշան անուն մը չէ Պոլսահայ տարեգրութեանց մէջ: Ճարպիկ ու ձեռներէց անձ, ո՛չ միայն անհատական արժանիք մը ցոյց տուած է այլ նաեւ հանրային գործունէութեամբ և համայնքին ընդհանրութեան ծառայելով օգտակար եղած է:

Ծնած է 1834ին Կեսարիոյ մէջ, Հօրը անունն էր Հաճի Արքահամ Զարդարեան որ ամիրական սերունդի մը շառաւիղն էր:

Մինչեւ հիմա Կեսարիոյ մէջ ժողովրդական և յաճախ յեղյեղուած անուն մըն է, իրեն պատուը Զարդար-օղլու Կարապետի անունը որ Կեսարիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյն շինութեան թէ՛ նիւթպէս և թէ՛ բարոյապէս նպաստած է, և Կեսարիոյ հայ համայնքին մէջ անմոռաց անուն մը ձգած է:

Սակայն հետզհետէ իրենց նիւթական միջոցները սպառած էին և երբ Հաճի Արքահամ մեռաւ, ընտանիքը որուն միակ նեցուկն էր 17 տարեկան պատանին Գէորգ, Կ. Պոլիս խրկուեցաւ դրամ շահելու համար:

Գէորգ՝ Կ. Պոլսոյ մէջ առանց նեցուկի չի մնար: Իր մօրեղբայրը Յակոբ էֆ. Ֆրէնկեան կրթութեանը կը հօկէ զինքը Մայր Վարժարան դնելով, ուր պարզ նախակրթութիւն մը միայն կը ստանայ:

Գպրոցէն ելլելէն յետոյ սեզանաւորութեան կը հետեւի Վալիտէ խանի մէջ, որ միայն քանի մը տարիներ կը շարունակէ:

1863ին Յակոբ Արշակի հետ ընկերակցութեամբ կը հիմնէ Զարդարեան թղթավաճառատունը՝ Մահմուտ փաշա, ուրիշ 2—3 տարի յետոյ կը փոխադրուի Սուլթան Համամ:

Մէկ կողմէ ձեռներէց ոգին և յանդգնութիւնը, միւս կողմէ սեղանաւորութեան անձուկ շրջագիծը, անհաշտ գալով իրեն հուսկ յետոյ բոլորովին կը թողու սեղանաւորութիւնը և 1870ին կը հիմնէ իր սեփական տպարանը ուր կը կեդրոնացնէ իր բոլոր ուժերը:

Անխոնջ, միշտ աւելի կատարեալին և աւելի նորին հետամուտ, խորհուրդ կը յղանայ նաեւ տպարանին յարակից հիմնելու կազմատուն մը, ինչպէս նաեւ սիկառի թուղթի գործարան մը: Այսքան ծաւալուն և ծանր գործերուն վրայ 1872ին կ'աւելցնէ նաեւ խաւաքարտի գործարան մը Եէտի-գուպէի մէջ:

Առանց որեւէ փորձառութեան այսքան մեծ գործառնութեան մը հոգը ստանձնելու ձեռներէցութիւնը ցոյց կուտայ իր տրամադրութիւնը և կարողութիւնը:

Այս տեսակ ցրուած գործ մը վարելու համար որքան որ պէտք եղած ճարպիկութեամբ օժտուած էր, սակայն ճախողութիւնը եկաւ հասաւ և Գէորգ Զարդարեան ստիպուեցաւ իր վճարումները դադարեցնել և իրաւախոհութիւն մը ընել իր պահանջատէրներուն հետ:

Սակայն առանց վհատութեան նորէն փարեցաւ իր գործին և մեր մէջ գրեթէ խիստ հազուադիւր բացառութիւն մը հանդիսացաւ իր պաշիւր վերահաստատելով, իր սնանկութենէն հազիւ երկու տարի յետոյ իր պահանջատէրներուն հատուցանելով 100ին 100, հանդերձ առկոսներով:

Միայն այս պարագան բաւական է ցոյց տալու համար թէ իր մէջ դրական ոգւոյն հետ միացած էր բարոյականի անժխտելի բարձրութիւնը, կամքի ոյժը և կորովը:

Իր ձեռներէցութեան հաւաստիքներն են իր ազգայրանին մէջ մացուցած կատարելագործութիւնը և կարգ մը նորութիւնները զորս ինքն յղացած և գործադրած է:

Բացի բաղձաթիւ գիրքերէ և տետրակներէ ինքն է որ առաջին անգամ հեղինակրած և հրատարակել սկսած է Կ. Պորոյ մէջ ութ լեզուէ պաշի օրացոյցներն որոնք մինչեւ 1888 — իր մահուան թուականը — անընդհատ հրատարակուեցան իր տպարանէն:

1873ին նոյնպէս առաջին անգամ ինքը գաղափար կը յղանայ հրատարակելու ժողովրդական օրացոյց մը և գրպանի ընդարձակ և համառօտ օրացոյցները, որոնք հրատարակելէ կը դադրի երբ 1880ին իբր Հիւանդանոցին հասոյթ նոյն հաստատութեան անուամբ հրատարակուիլ կը սկսին:

Նոյնպէս մինչեւ իր օրերը Կ. Պոլսոյ մէջ այնքան զարգացում չէին գտած լիթօկրաֆը և թիւրկրաֆը որոնց այնքան մղում տուաւ Գէորգ էֆ. Զարդարեան: Նոյնիսկ յաջողեցաւ chromolithographieի գեղեցիկ և նրբին արուեստը գործադրել:

Յիշատակելի է իր տպարանին գործերուն մէջ իբր տպագրական արուեստին կատարելութեան արդիւնք 24 կտորներէ բաղկացած Օսմանեան պետութեան ընդարձակ մէկ աշխարհացոյցը զոր պատրաստած էր Վսեմ. Ալի փաշա:

Նոյնպէս երաժշտական հատուածներու հրատարակութիւնը իրենց նօթաներով՝ Զարդարեանի անխոնջ աշխատութեան արդիւնքն են:

ինքն էր որ Նօթածի Հածի էմին պէյի հետ ձեռնարկեց հրատարակել նօթաի տետրակներ դաշնակի և ջութակի համար որոնց մինչև 31 թիւը հրատարակ ելաւ իր տպարանէն :

Նոյնպէս հանրային մտաւորական զարգացման նպատելու համար ամէն զոհողութեան յանձնառու եղած է և որքան աւելաւորի և ձեռներէցութեան նոյնքան ալ մտաւորականին և գաղափարի մարդը եղած է :

Թէև աւելորական և դործնական կեանքի մէջ այնքան բազմազբազ, սակայն միշտ կրցած է իր աշխատութենէն բաժին հանել նաեւ համայնքին, երբ և ուր որ պաշտօնի կոչուած է :

Իր հեռատեսութիւնը, իր ըմբռնելու, գտնելու և աշխատելու եղանակը միշտ օգտակար եղած է և իր գործունէութիւնը գնահատուած է : Վաթսուներկան թրակայաններէն սկսեալ միշտ Խորհուրդներու և Ժողովներու անդամակցած է :

Այսպէս բազմիցս Մայր-եկեղեցւոյ թաղական Խորհուրդին անդամակցած է : Մասնաւորապէս յիշատակելի է իր ատենապետութիւնը (1880—1885 շրջանին) երբ, Թաղ. Խորհուրդը ձեռնարկեց Չորս թաղերու դպրոցները միացնելու և յաջողեցաւ իրագործելու այս ծրագիրը :

Պատրիարքարանի Ժողովներէն մասնաւորապէս նշանակելի է 1865ին Բաղաքական Ժողովի անդամակցութիւնը :

Բայց իր ամէնէն ուշագրաւ աշխատութիւնն եղած է Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամակցութիւնը որ Հիւանդանոցի աստիճանութեան ամէնէն շահեկան էջերէն մէկը կը կազմէ :

Գէորգ Զարդարեան՝ իրեն պէս կեսարացի և իր գործունէութեամբը նշանաւոր կարապետ Փանոսեանի ձախող մատակարարութենէն անմիջապէս յետոյ Հիւանդանոցի գործերուն խառնուեցաւ, անդամ կարգուելով Փանոսեան մատակարարութեան բացը գոցելու համար կարգուած հանգանակող մասնախումբին :

Փանոսեանի մատակարարութիւնը եթէ մեծ յոյսերու վրայ հիմնուած էր, և անոր համար վիճեց, սակայն սա օգուտը ունեցաւ որ նախկին արմատացած զեղծումներն ջնջեց և նոր ուղի մը բացաւ Հիւանդանոցի մատակարարութեան մէջ :

Ինչ որ ինքը չէր յաջողած ի գլուխ հանելու, իր երկու երկրացիները Մանուկեան Սենեքերիմ և Զարդարեան Գէորգ էֆ. ք գործադրեցին աննկուն կորովով մը այդ հաստատութեան կանոնաւոր վիճակ մը տալով :

Փանոսեանի ձախողուածը առաջին առթիւ դարմանողը եղաւ Մանուկեան էֆ. որուն յաջորդեց 1872ին Զարդարեան Գէորգ որ իր ատենապետութեամբ կազմուած հոգաբարձութեան ամէնէն գործօն անդամը եղաւ :

Իր ամէնէն նշանակելի գործը եղաւ մոմարանին վերաբացումը որ պարզապէս իր նախաձեռնութեան և հաստատամտութեան արդիւնքն է և որ մինչև հիմա կը պահուի, իբր հասոյթի կարեւոր աղբիւր մը (Տես Պատմ. Հիւանդանոցի, Բիւզանդ. Քէչեան, էջ 212) :

Զարդարեան անդամակցած է նաեւ Արեւելեան Տնտեսական միութեան որուն անդամներէն մին էր Յակոբ Արշակի հետ : Այս Հաստատութիւնը իբր Ժո-

ղովրդեան աղքատ խաւերուն մէջ խնայողութեան գաղափարը մշակող մարմին մը խիստ օգտակար եղած է :

Նոյնպէս Մաքրիգիւղի քաղաքապետական ժողովին երկար ատեն անդամակցած է :

Հստ եղիա Տէմիրճիպաշեանի՝ (Երկրագունտ հանգէս 1888 էջ 276—77), Ջարդարեան « Կեսարացի ջոջերուն հարստութիւնը չունէր, այլ անոնց չափ յարգ ունէր իբր ուշիմ և բարեկիրթ անձ, ... աւելի խորհրդոց քան գործոց մարդ էր, ուստի և չկրցաւ մեծ հարստութիւն դիզել » :

Իր անհատական և ընտանեկան կեանքն ալ պէտք է շեշտել թէ ամէն կերպով համաձայն եղած է իր գործունէութեանը :

Կատարեալ ամուսին և զաւակաց ընտիր հայր մը եղած է : 1870 Նոյեմբեր 1ին ամուսնանալով Աղաթոնի Գրիգոր էֆ.ի քեռաղջկան Օր. Ալտաշամ Աղաթոնի հետ, կազմած է լաւագոյն ընտանիք մը, որուն երջանկութիւնը հարուածած է մահը՝ խլելով անկէ դեռատի աղջիկ մը : Գէորգ Ջարդարեան այդ հարուածին տպաւորութիւնը փարատելու համար 1887ին իր տիկինին հետ Երուսաղէմ կ'ուղեւորի, սակայն ցաւը անդամանելի կը մնայ :

1888 Մայիս 30ին կը կնքէ իր կեանքը, թողլով միայն երկու որդիներ որոնք կը շարունակեն իրենց հօրը գործը :



Մ Օ Շ Ե Ի Պ Ա Պ Ա

Մօշ և Պապա (ծերուկը և պառաւը) կը կոչէին զիրենք պարզապէս, այնքան ծեր էին որ ոչ ոք դիտէր իրենց անունը : Մեծ բանաստեղծ Ալեքսանդրի Մէրզէսքիի կալուածներուն մէջ էն տարիքոտներն էին ասոնք, Մօշը և Պապան :

Ծերուկը ատենօք ձիավար, մինչև իսկ նշանաւոր ձիավար մը եղած էր, իր երկար կեանքին մէջ, հարբատութիւն մը ժողոված էր, 200 ֆրանք, և իր միակ զաւակը հեռաւոր գիւղի մը մէջ ամուսնացնելէ վերջ, երկրորդ անգամ ամուսնացած էր Պապան հետ, որ մէկհատիկ աղջիկ մը ունէր, ան ալ ուրիշ գիւղ մը հարս գացած :

Մնաց որ շատ երկար ատենէ ի վեր կ'ապրէին մէկտեղ և այնքան ծեր էին որ հետզհետէ կը պզտիկնային, կը պզտիկնային, կարծես թէ կը գալարուէին :

Յաճախ Մերզէսքիի դաշտէն անցնելով անտառը կը մտնէին, յետոյ քով քովի ծառի մը տակ կը նըստէին և երկար ժամեր քիչ մը խօսակցելով, քիչ մը քնանալով օրերնին կ'անցունէին : Իրենց համար էն պզտիկ ու ցած տունը շինած էին և դոյզ մը պզտիկ կողեր ունէին, աւանակէ մը ո՛չ աւելի մեծ, ինչպէս նաեւ ձի մը որ շունէ մը բարձր շէր, եւ երջանիկ էին ու դո՛հ որքան որ կ'ապրէին :

Անգամ մը, ծերուկին ձախորդութիւն մը պատահեցաւ : Իրեն քանի մը սագեր տուած էին արածելու համար, յայց սխալ քայլ մը առնելով մարգագետնին

առուակը ինկած էր, ոտքի ելլելու շատ տկար ըլլալով, խեղճ թռչունի մը պէս խեղդուած պիտի ըլլար եթէ մէկը տեսած և ազատած չըլլար զինքը:

Այն ատեն միայն երիտասարդ կը դառար, երբ իր ձիավարի երթեւեկութիւնները կը պատմէր: Այն ատեն իր աչքերը կը վառէին և իր շուրջը ամէն բան բուն բոժոժներու զօղանջներով լեցուն կը վերակենդանանար, ինքզինքը ձիուն վրայ կ'զգար նորէն գիշեր ցորեկ հովուն պէս վազելով:

Մնաց որ երկրի վրայ շատ, շատ յիշատակներ ունէր պատմելու:

— Գօգօնիւ Վասիլի, կ'ըսէր յաճախ Ալեքսանդրիի, դուրսը շատ մը իշխաններու և նախարարներու ձին վարած եմ:

Ինքը, այս կերպով կը հասկնար և կը բացատրէր ամէն բանի անհաստատութիւնը:

Իր կինը ուրիշներէն կը նախանձէր: Չէր ուզեր որ մարդու նայի, մէկու մը հետ խօսի և ի մեծ դժկամակութիւն, երիտասարդ մը շարունակաբար կը սլքտար իր հիւզակին շուրջը:

— Ի՞նչ ընելու կուգայ աս մարդը, չամշնա՞ր, կ'ըսէր ձերուկը բարկացած, մինչեւ որ հասկցաւ թէ զրացիի մը գեղեցիկ ալջկանը համար էր որ այդ կնասէրը կուգար:

* * *

Իրենց կեանքին այս խաղաղիկ ընթացքին մէջ օր մը ձերուկը կալուածատիրոջ քով եկաւ:

— Գօգօնիւ Վասիլի, կնիկս պիտի ձգեմ:

Վերջինը զարմացած գոչեց.

— Ի՞նչ գաղափար է այդ. պառաւիղ հետ կռի՞ւ

ըրիր, ուրիշ միտքդ ինկաւ ադ. վերջապէս, չը պահենք, ապրելու շատ օրեր չունիք այլ եւս:

— Ճիշտ ատոր համար, Գօգօնիւ Վասիլի, մտածեցինք որ շատ օրեր չունինք մեր առջին և թէ երկուքս ալ մէյմէկ զաւակ ունինք որոնք ժառանգութեան համար մեր մեռնելէն վերջը պիտի կուրին: Ասոր համար է որ առաջուց պիտի դատուինք, որպէս զի այդ բանը չըլլայ:

Իրենց որոշման մէջ ոչինչ կրցան խախտել երկու ձերուկները և առանց յապաղման, գործադրեցին զայն: Երկու հարիւր Ֆրանքը դիզեցին և ձերուկը հատ մը իրեն և հատ մը պառաւին տալով փոփոխակի, կ'ըսէր «հատ մը քեզի, հատ մը ինձի». հատ մը քեզի, հատ մը ինձի», մինչեւ որ բան մը չմնաց: Բարձ մը անոր, բարձ մը իրեն համար, գորգ մը իրեն, գորգ մը անոր համար: Յետոյ երկու պղտիկ կովերը անոր տուաւ և պղտիկ ձին սայլով մէկտեղ իրեն պահեց, եւ յետոյ պանդոկ գացին՝ մարդոցը մնաք բարով ըսելու. հոն շրջապատեցին զիրենք և իրենց կենացը համար խմեցին: Ամէն ոք ուրախ ըլլալ կ'ուզէր, սակայն կուլային ալ: Անոնք ներում խնդրեցին ամէնէն, որպէս զի ոչ ոք քէն պահէ իրենց. վերջապէս ճամբայ ելան և մինչեւ Սէրէթի կամուրջը յառաջացան, հոն վայրկեան մը նորէն կեցան, համբուրեցին զիրար, լացին և յետոյ մին ձախ գնաց, միւրը աջ:

Երբեմն աւելի դիւրին է մեծ որոշում մը գործադրել քան անոր հետեւանքներուն դիմանալ: Մերուկը այնքան ինկաւ որ իր շուքը մնաց, երբ կը հարցընէին թէ ինչպէս էր, կ'ըսէր.

— Բնաւ չեմ կրնար քնանալ, որովհետեւ անոր շունչը չեմ զգար ալ :

Անհանդարտ ոգիի մը պէս կը թափառէր և միշտ բան մը կը փնտռէր զոր չէր գտնէր :

Ութ օր վերջ, լուր բերին իրեն թէ Պապան շատ հիւանդ էր : Առանց սպասելու իր պզտիկ ձին սայլակին լծեց և կրցածին չափ արագ մեկնեցաւ . բայց երբ գիւղը հասաւ, անոր դագաղը կը տանէին նոյն վայրկենին :

Առանց բառ մը բտելու մեռելալին հետեւեցաւ և թաղման սպասեց : Յետոյ ուղղակի իր տունը վերադառնալով պառկեցաւ : Հետեւեալ օրը մեռած էր :

Հիմա տնակը այնքան հինցած է որ տանիքը ծածկող խողանը և եղէգները կը տեսնուին միայն :

ԳԱՐՄԷՆ ՍՈՒՎԱ



Զ Ե Ց Ա Ն Ե Բ Ե Ը

(ՄԵՆԱԹՍՈՒԹԻԵՆԻ)

Հաւատացէք որ բնաւ չեմ քաշուիր . . . էրիկմարդիկ զազրելի արարածներ են : . . . բոլոր պակասութիւնները վրանին է . . . ասկէ զատ ի՛նչ ալ պինդ գլուխ են . . . բայց ի՛նչ պինդ գլուխ . . . : Մտքերնին եթէ բան մը դնեն՝ սատանան գալու ըլլայ՝ չը կրնար ետ կեցնել զիրենք : . . . Ահա՛, հազիւ ամիս մը եղաւ ամուսնանալս, սորվելիք բան մը չմնաց որ

գիտնամ էրիկ մարդոց պինդ գլուխութեան վրայ : Ամուսինս կը սիրէ սակայն զիս, ես ալ գինքը չեմ . . . ատեր : Ասոր հետ մէկ տեղ տեսէք թէ ինչ խաղ ըրաւ գլխուս : Հեծանիւր հոգիիս չափ, հոգիէս աւելի կը սիրեմ : Բայց նոյնքան ալ կ'ատեմ սա չըջազգեստը որ անիւներու մէջ կը մտնէ : Միակ երազս՝ հեծանուորդի անդրավարտիք հագնիլ էր :

Եկու տես որ զիս մեծցնող հօրաքոյրս հին գլուխ կին մըն էր . հազարումէկ աղաչանքներով ու պատճառանքներով հազիւ թէ կրցայ հեծանիւ նստելու արտօնութիւնը ձեռք ձգել . եթէ անդրավարտիք հագնելս տեսնէր, խեղճ կինը յանկարծամահ կ'ըլլար :

Ամիս մը առաջ ամուսնացայ վալբօսպի Պառօնին հետ : Ամուսինս ալ հեծանիւի սիրահար էր . և շատ աս եղաւ պատճառը որ ընդունեցի հետը ամուսնանալ : Ինքնիրենս կը մտածէի թէ ինչ ազուոր կեանք պիտի վարէինք երկուքնիս . միասին հեծանիւ պիտի նստէինք և մեղրալուսինի ճամբորդութիւնը կատարէինք : Ես ալ անդրավարտիքը պիտի հագնէի :

Մեղրալուսինը, շատ մը պատճառներու համար, Զուիցերիս անցուցինք :

Երբ Բարիզ վերադարձանք, ուզեցի վերջապէս փոփաքս կատարել : Իրիկուն մը սուրճ խմած ատեննիս խնդալով հարցուցի ամուսինիս .

— Ռօժէ, կ'ուզէ՞ք որ հեծանիւով պտոյտ մը կատարենք :

— Ամենայն սիրով, սիրելիս, ուզածդ ըլլայ բայց տակաւին հագուստդ պատրաստ չէ :

— Հագուստս, բարեկամս, հիանալի է : Զուիցերիա եղած ատեննիս, բարեկամուհիի մը ձեռքով ապսպրեցի :

— Պզտիկ նենգամիտ քեզի, ինձի բան մը չըսիք:

— Անակնկալ մը ընել ուզեցի: Շատ ազէկ վայլած է ինձի այս հագուստը: Մարգարտագոյն այն թիկնոցակին տակէն ձերմակ սաթէն բաճկոնակ մը: Անդրավարտիքը խիստ լայն...

Ռոժէ ստտում մը ըրաւ. կարծես ելեքտրական հոսանք մը ընդունած էր:

— Ի՞նչը ըսիք, էսթէլ:

— Անդրավարտիքը, այսինքն տարատը:

— Կատակ կ'ընէք, էսթէլ. չեմ յուսար որ անդրավարտիքով հեծանիւ նստելու միտք ունենաք:

— Ինչո՞ւ համար չէ, խնդրեմ:

— Ինչո՞ւ համար... որովհետեւ անդրավարտիքը կնոջ մը համար անվայել բան է:

— Իրա՞ւ կ'ըսես, ինձի համար շատ ալ հիանալի է:

— Երբէք Վալքոմպի պառոնուհին ատանկ հագուստ մը չպիտի հագնի իմ հաւանութեամբս:

— Ուրեմն, աէր իմ Պատան, ըսի խոնարհութիւն մը ընելով, առանց ձեր հաւանութեանը պիտի հագնիմ:

Յետոյ դացի շուտ մը հագայ այդ հագուստները և իջայ ամուսինիս դէմը կեցայ: Անամօթը յանդըգնեցաւ ըսել թէ սոսկալի էի... տգեղ էի... և թէ երբէք այս այլանդակ հագուստով հետս դուրս չպիտի ելլար:

Բարկացած, կնոջական անձնասիրութեանս մէջ վիրաւորեալ, սրտասուագին դացի սենեակս առանձնացայ:

Իրիկունը, Ռոժէ ջանաց սիրտս առնել, անհամբոյր մնացի:

Յաջորդ օրն ալ երեսս կախած էի, Ռոժէ կը դէտէր իմ կացութիւնս: Շիտակը խօսելով, քիչ մը գոհ էի ատանկ ըլլալուն, որովհետեւ ըրածին փոխարէն վրէժ առնել կ'ուզէի:

Կէս օրէն ետքը, Ռոժէ խոնարհ դէմքով մը եկաւ:

— Էսթէլ, սիրելիս, կ'ուզե՞ս որ հեծանիւով պտոյտ մը կատարենք:

— Ո՛չ:

— Ուզած հագուստդ կը հագնիս, բացարձակապէս ազատ կը թողում:

— Քիչ մը ուշ մնացիր, յարեցի. հազիւ կակուղնալով կամացն այս հպատակութեան:

Կէս ժամ ետքը, նոր հագուստս հագած, սրահ իջայ, և Ռոժէն տեսայ — աչքիս չհաւատալս եկաւ — բաց վարդագոյն շապիկ հագած, մութ կապոյտ կտաւէ շրջագգեստով, գլուխը դրած նաւագի գըլխարկներէս մէկը և ձերմակ վեջօ մը անցուցած... ցից պեխերուն վրայէն:

— Ռոժէ', գոչեցի, ի՞նչ կը նշանակէ այս անձահ կատակերգութիւնը:

— Բայց կատակերգութիւն չէ աս, սիրելի տիկինս: Քանի որ ազատ ձգեցի ձեզ էրիկ մարդու հագուստ հագնելու, ես ալ ազատ կ'ըլլամ կնկան հագուստ անցնելու:

— Անճոռնի բան է ադ: Այդ հագուստովդ դուրս ելլելու միտք չունիս կարծես:

— Ինչո՞ւ չէ, Շատ ալ աղուօր վայելք է ինձի: Եւ գոհ երեւոյթով հայելիին մէջը կը նայեմ:

— Կրկէսի աճաբարբի պէս տգեղ ես, ըսի:

Եւ չկրցայ խնդալս բռնել:

— Վերջապէս, էսթէլ, կը խնդաս կար, բսել է փոթորիկը անցաւ: Եկո՛ւր մեկնինք:

— Խե՞նթ ես, ադ վիճակովդ հեադ դուրս չեմ կրնար ելլել: Գնա՛ հագուստներդ փոխէ՛:

— Անկարելի է, պատասխանեց ապիրտար անդըդդուներթորէն: Երբ դուն էրիկ մարդ կ'ըլլաս, ես ալ, հաւատարակչուութիւնը չկորսնցնելու համար կնոջ դերը կը կատարեմ:

Յաղթուած էի: Երկճատութեամբ հարցուցի.

— Եթէ անդրավարտիքէս հրաժարիմ, դուն ալ չըջազգեսող մէկդի կը թողո՞ւս

— Ամենամեծ հաճոյքով, սիրելիս: Չե՞ս գիտեր թէ ամուսնական կեանքը ասանկ զոհողութիւններով կը պահուի:

Եւ տեղի տուի: Ի՞նչպէս կրնայի ասանկ մաքիավելական ծրագիր մը ի դերու հանել:

Ա՛խ, սա էրիկ մարդիկ, ի՛նչ պինդ դուռն ես....

ԼՈՒԻ ՊԵՌԵ



ԱՇԽԱՐՀԻՍ ՇՐՋԱՆԸ 50 ՕՐՈՒԱՆ ՄԷՋ

Ժիւլ Վէրնի դիւցազնը՝ Ֆիլէաս Ֆոկ՝ եթէ այսօր կատարած ըլլար 80 օրուան մէջ աշխարհիս շրջանը շատ երկրորդական դիրք մը պիտի ունենար, որովհետեւ կարելի է նոյնը կատարել 50 օրուան մէջ, նորոհել Անդրսիպերական երկաթուղիին:

Հիւսիսային Ասիայի այդ խոշոր երկաթուղին Սիպերիայի մէկ ծայրէն միւսը կ'երկարի, բայց մէջ-

տեղէն կտրուած է Պայքալ լիճով, որ 96 քիլոմէդր երկայնութիւն ունի և 1733 մէդր խորութիւն: Երբ կարելի ըլլայ այս լիճին հիւսիսային կողմէն իրար կապել մեծ գիծին երկու ծայրերը, այն ատեն 50 օրուան մէջ աշխարհիս շրջանը կատարելը բան մը ըսել չպիտի ըլլայ: Նոյն իսկ քանի մը օր պակաս ալ պիտի տեսէ այդ. եթէ ժամը 80էն 90 քիլոմէդր գացող կառախուսներ բանին վրան:

Դժբաղդարար այս աշխարհիս շրջանը ըսածնիս բուն հասարակածին շրջանը չէ որ 40,000 քիլոմէդր է, հապա լայնութեան 50 և 60 աստիճաններուն միջեւ եղած շրջանն է, որ համեմատաբար շատ կարճ հեռաւորութիւն մը ունի. եթէ ուղիղ գիծով մը կարելի ըլլար կատարել զայն, հազիւ 22,000 քիլոմէդր հեռաւորութիւն մը պիտի ունենար, բայց անխուսափելի դարձուածքներն ու շրջանները կ'երկարեն զայն ու մինչեւ 35,000 քիլոմէդրի կը հասցնեն:

Ենթագրենք որ մէկը Բարիզէ կը մեկնի աշխարհիս շրջանը կատարելու համար կարելի եղածին չափ կարճ միջոցի մը մէջ, այսինքն ցամաքի վրայ միշտ կառախուսելով ճամբորդելով: Պէրլին պիտի հասնի 18 ժամէն 1080 քիլոմէդր ճամբայ կտրելով. և պիտի ծախսէ 118 Փր.: Բարիզէ մեկնելէն երկու օր ետքը Բեդերսպուրկ պիտի հասնի 2715 քիլոմէդր ճամբորդելով և ընդամէնը 275 Փր. ծախսելով: Յետոյ պիտի հասնի Մօսքուա (3365 քիլմ. 3 օր, 315 Փր. հաշուելով Բարիզէ սկսեալ), Օմսք, Իրքուցք (8950 քիլմ. 12 օր, 620 Փր.), Քայտալովօ, Նարպին, Վլատիվոսթօք (11950 քիլմ. 18 օր, 780 Փր.), Նակագաքի (13300 քիլմ. 21 օր, 900 Փր.), Եօքօհամա (14600 քիլմ. 23 օր, 1080 Փր.), հոս կը կտրէ խաղաղական

ովհիանոսը և կը հասնի Վանքուվէր (22600 քիւմ. 37 օր, 1965 Ֆր.), Վինիբէկ, Մօնրէալ (26800 քիւմ. 42 օր, 2310 Ֆր.), Նիւ Եօրք (27430 քիւմ. 43 օր, 2365 Ֆր.) և անդրատլանտեան շոգեհատով կը հասնի Շէրպուրկ (33130 քիւմ. 49 (օր և անտի է Բարիդ (33500 քիւմ. 50 օր, 2965 Ֆր.):



ՎԻՇՆՈՒԻ ՈՏՔԸ

Հնդիկներու հանրապաշտութեան գլխաւոր կեդրոններէն մին է Հուրվար քաղաքը, որ դարեր առաջ կառուցուած է Գանգէսի վրայ:

Ամէն տարի, այս 4—5000 բնակիչով գիւղը ահագին քաղաք մը կը դառնայ արեւը Զոդիակոսի խոյ նշանը մտած ատեն, Վիշնուի երկրպագուները ուխտի կուգան համբուրելու համար Վիշնուի ոտքին հետքը, զոր թողուց երկրի վրայ՝ իր բազում մարդեղութիւններէ մէկին ետքը երկինք համբարցած ատեն:

Ամէն տասներկու կամ տասներեք տարին անգամ մը այս ուխտագնացութիւնը նոր շուքով ու աւելի բազմութեամբ տեղի կ'ունենայ, որովհետեւ լուսընթազ մտրակը այդ ատեն Զրհոս նշանին մէջ կը մտնէ: Աստեղագիտական այս պարագան այնքան մեծ ազդեցութիւն ունի հնդիկ դիւրահաւան միտքերուն վրայ որ՝ ուխտաւորները միլիոններով կը հաշուընդին:

Վիշնուի ոտքին այս ենթադրական հետքին պատկերը՝ արոյրի վրայ արտատրուելով պահուած է Կիմէյի թանգարանին մէջ:

Պրահմինները այս հետքի մատերուն վրայ գծած են արեւու խորհրդանշաններ և յօթիս (lotus) ծաղիկին նկարները: Ոտքին նրբանը շրջապատուած է լարով մը որ տարիին շրջանը կը պատկերացնէ: Այս լարը կ'ընդգրկէ տասներկու նշանագրեր որոնց իւրաքանչիւրը ամիս մը կը ներկայացնէ: Սոյն վերջին պարագան քիչ մը տարօրինակ կը թուի, որովհետեւ հնդիկներուն Զոդիակոսը 27 տուներու բաժնուած է:



Շարլըմայն դժգոզու էր: Ահագին հարստութիւն, ընդարձակ կալուածներ ու մեծ համբաւ ունէր, բայց երկինք իրեն զաւակ մը չէր պարգեւած: Օր մը, մինակը, ձի հեծած՝ անտառին մէջ կը պտտէր, երբ մէկէն ի մէկ զիմացը գաճաճ մը ելաւ. սրունքները պզտիկ էին, իսկ ձեռքերը ընդհակառակը շատ խոշոր, սպիտակ մորուքը մինչեւ սաքերը կը հասնէր, աչքերը կրակի պէս կը փայլատակէին:

— Շարլ, Շարլ, պօռաց շուտով տուն դարձիր:

Շարլ խարազանի հարուած մը տուաւ ձիուն, գաճաճին վրայ խոյանալու համար: Բայց ձին դամուածի պէս անդէն չերերաց:

— Շարլ, Շարլ, պօռաց նորէն գաճաճը, տուն դարձիր, ինը ամիսէն աղջիկ զաւակ մը պիտի ունենաս:

Շարլ, այս անգամ խարազանովը գաճաճին զարկաւ:

— Խօսքս ետ չեմ առներ, կրկնեց գաճաճը, աղ-
ջիկ մը պիտի ունենաս, որ մինչեւ քսան տարեկանը
համը պիտի մնայ: Քսան տարեկանը թեւակոխած օրը
պիտի խօսի և նոյն իրիկուսը պիտի մեռնի: Բայց
ասով քու դժբաղդութիւնդ չպիտի լմննայ:

Շարլըմայն դժբախտ դարձաւ: Որոշեալ ատենին
աղջիկ մը ունեցաւ, որ ճայն չէր կրնար հանել:
Քանի՛ կը մեծնար, գեղեցկութիւնն այնքան կ'աւել-
նար, բայց բնաւ խօսք մը չէր կրնար արտասանել,
ինչպէս որ ծեր գաճաճը նախադուշակած էր:

Ճիշտ քսաներորդ տարին թեւակոխած առտուն
արթնցաւ պռուտով: — «Հայրի՛կ, հայրի՛կ, կրնամ
կոր խօսիլ»:

Շարլ վազեց հասաւ. քանի մը վայրկեանի մէջ,
մէկ քանի տարուան չափ ծերացած էր, Մատենըը
կը դողային երբ մօրուքին մէջէն կ'անցնէր:

— Պիտի՛ մեռնի, պիտի մեռնի՛, կը մտածէր:

Աղջիկն ալ բոլորովին փոխուած էր: Խօսելու կա-
րողութիւնը վրան իջած պահուն կարծես թէ սատա-
նան հոգին ու մարմինը գրաւած էր: Նէ կը հեծէր,
կ'անիծէր, կը հայհոյէր. չէ թէ մեռնելէ վախնա-
լուն, հապա դիւթուած ըլլալուն համար: Քանի
արեւը հորիզոնէն վար կ'իջնէր, կեանքը իրմէ կը
փախչէր, դէմքը կը գունատէր: Հօրը նշան ըրաւ որ
անկողինին մօտ գայ, և երգում մը ընել տուաւ:

— Թուրնէյի եկեղեցիին մէջ թաղուիլ կ'ուզեմ:
Երգում բրէք որ քանի կեանք ունենաք, պահապան
մը պիտի սպասեցնել տաք գիշերը գերեզմանիս քո-
վը: Կ'երգնու՞ք:

Շարլ երգում ըրաւ և արեւը մարը մտնելուն՝ նէ
մեռաւ:

Տրուած խօստումին համեմատ եկեղեցիին մէջ
թաղեցին զայն, և գիշերը պահապան մը դրին գե-
րեզմանին քով: Գռները գոցեցին ու գացին: Երբ
առտուն եկան պահապանը առնելու՝ մեռած էր ան:
Յաջորդ գիշերը՝ ուրիշ պահապան մը դրին, և առ-
տուն ան ալ մեռած գտան գերեզմանին քով, և այս-
պէս շարունակեց ատեն մը:

Օր մը, պահապաններէն մէկը, որ գերեզմանին
քով իբր պահակ դրուելու տրամադրելի էր, անտառը
կը պտըտկէր մտմտալով: Յանկարծ դիմացը գաճաճ
մը ելաւ, կարճ սրունքներով, երկար թեւերով և
ճերմակ մօրուքով:

— Ըրածիս զղջացի, ըսաւ ծերուկ գաճաճը...
այո՛, զղջացի: չէի գիտեր թէ աղջիկը յանձնած սա-
տանան այսքան չար ոգի մըն էր. բայց դիւթանքը
խզելու համար ինծի օգնական մը պէտք է, քեզի
պէս բարի մարդ մը: Գնա՛ ըսէ Շարլի որ այս գի-
շեր գերեզմանին պահպանութիւնը դուն պիտի կա-
տարես:

— Վհո՛ւկ, ըսաւ պահապանը, գործիդ գնա՛, ինչ
ինչ կ'ուզես. ձգէ որ ապրիմ, տակաւին երիտա-
սարդ եմ:

— Չէ՛, յարեց գաճաճը, գնա՛ պահապան կեցիր
հոն, բայց երբ ժամացոյցը կէս գիշեր պիտի գարնէ,
անմիջապէս խորանին վրայ ելիր, ու պիտի տեսնես:
Պահապանը գնաց և Շարլի առաջարկեց այս
խնդրանքը:

— Չեմ գիտեր թէ՛, ըսաւ Շարլ, մեռնի՞լ կ'ու-
զես թէ ո՛չ գաղտնիք մը ունիս, կեանքէդ յուսա-
հատա՞ծ ես թէ ոչ հրաշք մը պիտի կատարես, և
գիտնալ իսկ չեմ փափաքիր. բայց գնա՛, քանի որ
դուն կ'ուզես, պահակ կեցիր:

Երբ իրիկուն եղաւ, պահապանը եկեղեցին մտաւ
 և դուռները վրայէն գոցեցին: Հակառակ իր սրտո-
 տութեան կարծես սիրտը փլաւ կուրծքին մէջ. ամէն
 կողմ մութ ու լուռ էր. ժամացոյցին թիւքթաքը սար-
 սուռ կը պատճառէր իրեն, և ամէն ժամը զարնելուն
 պող պող քրտինք մը կը թրջէր ամբողջ մարմինը:
 Այս սոսկումին մէջ սակայն հետաքրքրութիւն մը
 կ'արթննար մտքին մէջ, հասկնալ թէ իր ընկերները
 ի՞նչպէս մեռած էին և որո՞ւ ձեռքով:

Ժամացոյցին ասեղները շատ դանդաղ կը յառա-
 ջանային, մանաւանդ պզտիկը: Մեծ ասեղը կը կա-
 տարէր իր շրջանը և կուգար պզտիկին կը հանդիպէր
 կարծես ըսելու համար. — «Շո՛ւտ ըրէ, աճապարէ
 քիչ մը»: Վերջապէս կէս գիշերը մօտեցաւ, հինգ
 վայրկեան կար, չորս վայրկեան կար, երեք վայր-
 կեան կար, երկու վայրկեան, մէկ վայրկեան կար
 կէս գիշերին. պահապանը խնայաւ որ ժամացոյցին
 շրջահարը կը բարձրանայ ժամը զարնելու, և մեծ
 ստառ մը ընելով սեղանին վրայ ցատկեց, հո՛ն ուր
 պզտիկ ճրագ մը կը վառի մասունքին առջեւ: Այդ
 կէտը որ եկեղեցիին միակ լուսաւորուած տեղն էր
 իբր փրկութեան փարոս կը ներկայանար պահա-
 պանին:

Ժամացոյցը կէս գիշերը կը զարնէր ջինջ ձայնով
 մը որ խոր լուսթեան մէջ տարօրինակ կերպով ոյժ-
 գին կը լսուէր: Եւ քանի ժամացոյցը կը զարնէր,
 գերեզմանին քարը կ'սկսէր վեր ելլել ու բացուիլ:

Այլկան դիակը դուրս ելաւ այդ բացուածքէն:
 Քաղուած օրուան ձերմակ հագուստը կը կրէր, դէմ-
 քը նոյն օրուան դաժան դէմքով: Ձեռքերը կը բաց-
 ուէին ու կը դոցուէին խեղդելու ձեւը ընելով: Այ-

քերովը՝ գերեզմանին ոտքին՝ քով կեցող պահապանը
 փնտռեց և չգտաւ: Իայց անոր ակունքերը կափկը-
 փելը իմացաւ, և սեպաւ զայն մեծ խաչելութեան
 ստորտը՝ որու պատուանդանին փաթտուած էր:
 Հող, գտնուած տեղը ամբողջ մը մէջ պաշտպանու-
 ծի պէս էր:

— Պահապա՛ն, պահապա՛ն, վար իջիր, հայրս
 քեզի հող չկեցուց:

Բայց զինուորը վար չիջաւ, երկու ձեռքերը խա-
 ջը չէին թողուր: Վարը աղջիկը երեւցաւ, բարձր
 ձերմակ շուք մը, որ մութին մէջ տարտամ ձեւ մը
 կ'առնէր, աջ ու ձախ կը քալէր, կաժաց կամաց
 բարկութիւնը բռնեց զինքը, շան մը հաչելուն պէս
 կը պօռար. քրքրակալները, աչտանակները, կան-
 թեղները ցրելիս ցրելիս հոն հոս կը նետէր: Այ կողմը
 կը վազէր, ձախ կողմը կը վազէր, սատումներ կ'ընէր,
 բայց սեղանին առջեւ հասնելուն կանգ կ'առնէր
 ակամայ. կարծես աներեւոյթ ձեռք մը զինքը ետ
 կը մղէր: Վերջապէս, եկեղեցիին մէկ կողմի պատու-
 հանները թեթեւ մը լուսաւորուեցան, այդ պահուն
 լուսեցաւ աքաղաղին երգը:

Մեռեալը ահագին աղաղակ մը արձակեց և գե-
 րեզման մտաւ որու կախարիչը վրայէն գոցուեցաւ:

Ժամ մը ետքը, դռները բացուեցան և չորս հո-
 գի դազաղ մը կը բերէին: Աղջկանը թաղուելէն ի
 վեր սովորութիւնը աս էր: Բայց այս անգամ լահա-
 պանը ողջ մնացեր էր: Բոլոր քաղաքացիները իմա-
 ցան եղած հրաշքը:

Շարլ կանչել տուաւ զայն և եղածը պատմել
 տուաւ: Պահապանը ամէն ինչ տեղն ի տեղօքը պատ-

մեց, միայն խոհեմութեամբ՝ գաճաճին հետ ունեցած խօսակցութիւնը և անոր առած խորհուրդը պահեց:

— Քանի որ, ըսաւ Շարլ, դիւահարները քու վրադ չեն կրնար ներգործել, այս իրիկուն ալ դուն պիտի կատարես պահապանի պաշտօնը:

Պահապանը մտածելով կը պտըտկէր դաշտին մէջ,

— Ա՛խ, կախա՛րդ, արդեօք հմայքը այս իրիկուն ալ պիտի արժէ՞. Այս խօսքերը բարձր ձայնով չարտասանեց, միայն մտքէն անցուց: Բայց նոյն պահուն ձերուկ գաճաճը տեսաւ դէմը որ ըսաւ.

— Ո՛չ, հմայքը չպիտի բաւէ այս իրիկուն, որովհետեւ քեզի ուրիշ գործ մը պիտի յանձնեմ: Այս իրիկուն ալ պահապան պիտի կենաս գերեզմանին ոտքը. երբ կէս դիշեր կը զարնէ ու շարը կը բացուի, այն ատեն... այն ատեն գերեզմանին մէջը կը ցատքես:

Յետոյ ծաղրածու կերպով մը աւելցուց.

— Կրնաս հողիդ Աստուծոյ յանձնարարել:

* * *

Իրիկունը, որոշեալ ատենը պահապանը եկեղեցիին մէջ փակուեցաւ: Կէս դիշերը զարնուած պահուն գերեզմանին քարը սկսաւ վեր ելլել: Չորս ձեռքեր, ճիրանաւոր, սեւ, կը քաշէին քարը դրնդերներնուն բոլոր ոյժովը: Բայց սոսկալին այն էր որ ո՛չ բաղուկ կը տեսնուէր ո՛չ մարմին, միմիայն ձեռքեր կ'երեւէին որոնք կարծես քարին մէջ քանդակուած էին: Երբ բացուածքը բաւական լայնցաւ, պահապանը սրտտուութեամբ, երեսը խաչակնքեց և մէջը ցատքեց:

Արթով եկեղեցիին կարծես թէ կործանեցաւ, ահա-

գին ունում մը դըրդեց գայն: Յանդուգն մարդը որ դժոխքին իսկ կ'ընդդիմակալէր, ոտքին տակը ու անդամներուն միսին վրայ զգաց կէս կայուն շուքերու անցնիլը, որոնք իր ամբողջ մարմինին երկայնքէն վեր բարձրացան: Սատանաներու շուքերն էին ասոնք որ մեռած աղջկան իբր ընկեր կը կենային, և հիմակ կը փախչէին: Գաւիթին մէջ կը լսուէր «հօր, հօր, հօր» ձայնը, որովհետեւ ասոնցմէ շատին ոտքը կոկու կամ ձիու պէս պճեղնաւոր էր: Բայց այդ սատանաները թեւեր ալ ունէին և իրենց սեւ երամբ բարձրացաւ մինչեւ զմբէթին դպելու չափ, սխնակալներուն զարնուելով, կախուած կանթեղները փչրելով և սեղանին մօտեցած ատեննին ունալով: Վերջապէս պատուհանի մը բացուածքէն խառն ի խուռն դուրս թռան:

Այդ պահուն գերեզմանը լեցուեցաւ գերագոյն լոյսով մը, և մեռած աղջիկը պահապանին քով երեցաւ, բոլորովին սպիտակ, գեղադէմ ու քաղցր նայուածքով:

— Պահապան, կ'ըլէր, պահապան, ես մեռած չէի, զիս հմայքով կապած էին: Դժոխքը ինձի պատանդ առած էր. բայց դուն պայմանագիրը խլեցիր: Պահապան, մտիկ ըրէ՛:

Մեծ երգէտները սկսան մինակնին երգել, և բնաւ այսքան գեղեցիկ նուագած չէին. որովհետեւ երկինքի հրեշտակներն էին զանոնք զարնողները:

Արշալոյսին եկան եկեղեցիին դուռը բանալու: Սեղանին աստիճաններուն վրայ կը տեսնուէին վերակենդանացած աղջիկը որ ուրախութենէն արբշիւ գլխուորին ձեռքը շրթունքներուն կը տանէր:

— Գացէ՛ք, ըսաւ նէ, հայրս կանչեցէք, հարսանիքը կատարելու:

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Անոնք որ փութացին օգտուի մեր անցեալ 1907 տարւոյ «Ժողովրդական Տարեցոյց»ին կցուած յուսանկարչական գրքոյկէն, ու նախնական գիտելիքներէ վերջ, կր փափաքին տեղեկանալ արուեստին դեռ կարգ մը հետաքրքրաւոր մասերուն ու զանազան օգտակար միջոցներուն, կրնան հետեւիլ յետագայ տեղեկութեանց:

ԹԱՇԿԻՆԱԿԻ ՎՐԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼՈՒ ԿԵՐՊ

Ա.— Կ'առնէք կապոյտ կամ կարմրագոյն փոքր շիշ մը (թիւ 1) ու կը պատրաստէք հետեւեալ լուծաջուրը.—

Թորեալ ջուր (Eau distillée) 30 կրամ

Բորական արծաթի (Nitrate d'argent) 3 կրամ

Բ.— Կ'առնէք նաև ուրիշ ձերմակ շիշ մը (թիւ 2), որուն մէջ 30 կրամի չափ պարզ ջուր լեցնելէ յետոյ աւելցուցէք 4 կրամ սովորական խոհանոցի աղ (Chlorure de sodium) ու շիշը ցնցեցէք մինչև որ լուծ մը հալի:

Թաշկինակին այն մասը՝ որուն վրայ կ'ուզէք պատկեր ունենալ՝ կը թրջէք վերջին (թիւ 2) աղի լուծաջուրով ու կը չորցնէք փոշի չգտնուած տեղ մը, ուրկէ յետոյ կ'սկսի մութ սենեակի գործողութիւնը: —Մտէ՛ք ուրեմն ձեր մութ սենեակէն ներս ու վրձինով մը քսեցէք, թաշկինակին միայն մէկ երեսին վրայ, թիւ 1 արծաթի բաղադրութիւնը: Առանց անապարելու պէտք է որ ձգէք զայն միշտ մութ սենեակին մէջ, անփոշի տեղ մը, մինչև որ լուծ մը չորնայ, ուրկէ յետոյ կը դնէք ճնշիչ շրջանակին

մէջ ու արեւին մէջ կը տպէք սովորական եղանակով. այսինքն՝ ճիշդ ինչպէս որ պլատի ընէիք թուղթի վրայ տպելու համար:

Երբոր պատկերը լուծ կերպով տպաւորուի՝ թուղթին համար գործածուած սոկեպնդաջուրով (viragefixateur) կը հաստատէք պատկերը, ու յետոյ կը լուծաք:

ՄՍՐՄՍՐԻ ՎՐԱՅ ՊԱՏԿԵՐ ՀԱՆԵԼՈՒ ԿԵՐՊ

Առնել խիտ մաքուր մարմար մը և մակերեսը ծածկել հետեւեալ բաղադրութիւնով:—

Benzine	50	կրամ
Ess. Térébenthine	50	»
Bitume de Judée	5	»
Cire d'Abeille	1/2	»

Թողուլ որ չորնայ մութին մէջ: Լուծ մը չորնայէ վերջը՝ վրան կը դնէք բիշիկն ու 20 վայրկեանի չափ կը ձգէք արեւու մէջ, մինչև որ պատկերը տպաւորուի: Յետոյ պէտք է Essance de pétroleի լուծ լրգանքէ մը անցընէք: Յետոյ լեցուցէք վրան Bleu de Prusseի բաղադրութիւն մը ու պէտք եղած կերպով մաքրելով կը յղկէք մարմարը:

«ԲԼԻՇԷ»ՆԵՐԸ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՆԵԼՈՒ ԿԵՐՊ

Լուսանկարչական ֆիշիկներուն վրայ շատ անգամ ջուր թափելով կամ ուրիշ ո՛ր է դիպուածական դէպքով կ'աւրուին: Զանոնք պահպանելու համար հետեւեալ ջնարակը (vernis) կը գործածեն.

Benzine	100	կրամ
Gomme Damas	10	»

Լուծ մը հալեցնելէ վերջ բաւականաչափ պէտք է թափել ֆիշիկին մէկ ծայրը ու շարժելով տարածել, յետոյ թողուլ անփոշի տեղ մը որ չորնայ:

«ՔԼԻՇԷ»ՆԵՐԸ ՇՈՒՏ ՉՈՐՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պէտք է մէկ վայրկեանի չափ թողուլ Alcool absoluեի մէջ, ուրկէ երբ դուրս հանէք՝ անմիջապէս կ'սկսի չորնալ :

Nitrate d'argentի ձեռքերու վրայ թողած բիծերը մաքրելու կերպ.—

Չօրաւոր hyposulfiteի (ենթածծմբիտ նատրի) լուծաջուրով լուալ մէկ քանի անգամ մինչև որ անհետանան :

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՍԿԱՆ ԶՈՒՍՐՃԱԼԻՔ

Կ'առնէք սովորական եղանակով տպուած պատկեր մը : Պայմանաւ որ ճնշիչ շրջանակէն հանելէ վերջ պարզ ջուրով անգամ մը լուացուած ու յետոյ առանց ոսկեպնդաջուրի մէջ թողելու պարզ հիբոսիւլֆիթի բաղադրութեամբ մը հաստատուած ըլլայ . ու կը դնէք հետեւեալ լուծաջուրին մէջ .

Չուր 50 կրամ

Սիւպլիմէ (*) 2 1/2 »

որուն մէջ պատկերը կ'աներեւութանայ : Երբոր պատկերը կատարելապէս կորսուի՝ կը լուաք ջուրով ու կը չորցնէք :

Արդ, եթէ կ'ուզէք surprise մը ընել ձեր բարեկամներուն ու ձեր վրայ հիացնելով զուարճանալ՝ կրնաք ցուցնել այդ թուղթը, որոնք մանրազննին քննութենէ մը վերջ թուղթին վրայ պատկերի ու է :

(*) Չօրաւոր թոյն մը ըլլալով խիտ ուշադրութիւն անհրաժեշտ է :

հետք չգտնուիլը պիտի հաստատեն : Երեզները չեն գիտեր թէ պատկերը ծածկուած է . . . անվարագոյր, ու կը խնդայ իրենց քիթին . . . Այն ատեն կ'առնէք հիփոսիւլֆիթի բաղադրութեան մէջ նախապէս թըրջուելով չորցուած ծծուն թուղթ մը պատկերին վրայ տարածելով կը սեղմէք ուժով (*) ու պատկերը պիտի երեւի : Կրնաք դարձեալ անհետացնել ու կրկին լոյս աշխարհ բերել :

ԿՈՊԷՌ ԼԷՔԻՄԵԱՆ



ՍԷՐ, ՍԷՐ, ՍԷՐ

ԿԻՆ, ԿԻՆ, ԿԻՆ

§ Սիրած ժամանակ չտրվիլը՝ սոսկալի դժբաղդութիւն մըն է . բայց չտրած ժամանակ տրվիլը՝ խիտ մեծ երջանկութիւն :

§ Տէրերն ալ սիրուհիներու պէս են . ի՛նչ ծառայութիւն որ ալ ըրած ըլլաս իրենց՝ հաճոյ երեւնալէ դադրելուդ պէս քեզ չեն յարգեր :

§ Ո՛վ որ կ'ամուսնանայ՝ զղջալու ճամբուն մէջ մտած է :

§ Խոհեմութիւնն ու սէրը իրարու հետ չեն կըրնար միանալ :

§ Սէրը մարդուս սրտին ամէնէն ազնիւ զգացումն է, վասն զի երջանկութիւն գտնելու համար պէտք է որ իր զգացածին չափ ալ ուրիշին հաղորդէ :

(*) Թէոր չյաջողիք — պատճառով մը — կրնաք թաց սպունգով մը թիթեւօրէն թրջել պատկերին մակերեսը ու յետոյ ծծուն-թուղթը տարածել վրան :

§ Ահա՛ կանանց բնաւորութիւնը, կ'ըսէ խմատառէր մը. ինչ որ կ'ուզես՝ չեն ուզեր, ինչ որ չես ուզեր կ'ուզեն:

§ Տաննեւվեց տարեկան աղջիկ մը կը թողու որ զինքը սիրեն, իսկ երեսուն տարեկան կին մը զինքը կը սիրցնէ:

§ Սիրոյ մէջ սպասելը՝ նոյն իսկ երջանկութենէն նախապատիւ է:

§ Սէր մը մարելու ամէնէն վստահ միջոցը՝ զանի գոհացնելն է:

§ Կիներն աւելի քիչ պիտի խարուէին՝ եթէ գիւրենք սիրոյն իրենց սիրածէն նախապատիւ համարէին:

§ Կիները մեծ մարդոց պէս են. իրենց նուէրին մեծ արժէք տալու համար նախ զանի կը սերժեն:

§ Կինն՝ իր մտերմագոյն բարեկամն իր սիրականին խորհրդակիցէն նուազ կը սիրէ:

§ Մարդուն ուղեղը ո՛րչոսի կատարեալ ըլլայ, չի կրնար սրտին գէմ գնել:

§ Գեղեցիկ կիներուն համար դժուրը՝ ձերութիւնն է:

§ Մարդ՝ երբ ա՛լ մտղ չունենայ՝ խոսքովքը կը պարտաւէ, ինչպէս նաև խնձորը՝ երբ ա՛լ ահուայ չունենայ:

§ Սիրոյ մէջ ձերերուն վրայ եղած ամէնէն ծաղրելի բանը ուրիշին սէր ազդելու փափաքն է:

§ Կին մը կեանքին մէջ սպասելու է որ զինքը ի սէր հրաւիրեն, ինչպէս որ սրահի մը մէջ կ'սպասէ որ ի պար հրաւիրուի:

§ Երիտասարդ պարի կին մը կ'ըսէր թէ՛ երբեք վերատին պիտի չամուսնանայ, — Ատի գինովի

երգում մըն է, տիկին, պատասխանեց հոն ներկայ եզոզ բանաստեղծ մը:

§ Կիները միշտ առաքինի պիտի ըլլային, եթէ իրենց առջի խօսքին վրայ հաստատ կենային:

§ Կնիկ ձեռեւը ալիւրի պարկ մը ձեռելու կը նմանի. աղէկը կ'երթայ, գէշը կը մնայ:

§ Ամուսնութիւնը նախ երկու հոգիի խնդութիւն մըն է, քիչ մը վերջը իրենց և շատերու թխարան մը:

§ Սէրը աւելի դիւրութեամբ կը մտնէ սրտի մէջ, քան թէ հովը բաց տունի մէջ:

§ Կին մը՝ ստուերիդ պէս է. եթէ ետեւէն երթաս՝ կը փախչի, եթէ փախչիս՝ ետեւէդ կուգայ:

§ Սէրը ամուսնութենէն աւելի հաճելի է, սա պատճառաւ որ վէպերը պատմութենէն աւելի զբօսեցուցիչ են:

§ Ամուսնութիւնը պաշարուած բերդի մը կը նմանի. մէջի եղողները դուրս ելնել, իսկ դուրսիններն ալ՝ ներս մտնել կ'ուզեն:

§ Սրտի լեզուն բառերու պէտք չունի հասկըցուելու համար, աչքերու մէջ գրոտած է:

§ Գեղեցիկ կիներու սիրտերը՝ Կադանդի շաքարեղէններու պէս հանելուկներու մէջ փաթթուած են:

§ Պէրոզ կնոջ սիրտը՝ կը նմանի վարդի մը՝ ուսկէց ամէն սիրահար մէյմէկ թերթ կը փրցնէ, և քիչ մը վերջը փուշը միայն կը մնայ ամուսինին:

§ Երբ սէրը կը խօսի՝ երկիւղը, դատողութիւնը, պարտքն ու պատիւը կը լռեն:

§ Կին մը եթէ հարիւր յանցանք ալ գործած ըլլայ՝ ծաղիկով մը անգամ մի՛ գարներ անոր:

§ Չար կնոջ մը ամէնէն մշտակար անգամը՝ լեզուն է:

§ Սէրը շատ անգամ ամէնէն ճարպիկ մարդը խենդ կ'ընէ և խենդն ալ ճարպիկ կ'ընէ:

§ Պարկեշտ կինը գաղտնի գանձ մըն է, զոր գտնողը խիստ լաւ կ'ընէ եթէ անոր վրայ պարծենայ:

§ Խելացի մարդը կնկան բարկութենէն չի վախնար. իսկ աւելի խելացի է այն՝ որ անոր բարկութիւնը չի գրգռեր:

§ Կիներուն համար իրաւունք վաստակելու լաւագոյն միջոցն է անուշութիւնը:

§ Երջանկութիւնը ըզհհատուելու է որ զգալի ըլլայ:

§ Աղքատութենէ հարստացողը՝ հպարտներուն մեծն է:

§ Աստուած սէր է, սիրոյ մէջ բնակողը Աստուծով կ'ապրի և Աստուած անոր հետ կ'ըլլայ:

§ Կնոջ մը պատիւը շուտով կը վտանգուի, երբ սէրը կամ կրօնքը չեն պաշտպաներ զայն:

§ Դրամ ունեցողին ամէն բան կը խնդայ:

§ Երբ կիները բան մը չեն ունենար ընելու, ուրիշին պակտութիւնները կը բամբասեն:

§ Ամէնուն բարեկամը ո՛չ մէկուն բարեկամն է:

§ Ծերերուն տեսած ծուռ դատաստանը՝ տղաքները կը մղէ ի պատասխան:

§ Սիրոյ մէջ առաքինի կինը ո՛չ կ'ըսէ, կը քստը՝ այո՛, անխոհեմը՝ այո՛ և ո՛չ. իսկ պէրուհին՝ ո՛չ այո և ո՛չ ալ ոչ կ'ըսէ:

§ Կատարեալ մարդը գիտէ միայն սիրել իր նմանն և ծիրուիլ անկէ:

§ Ո՛վ որ չուզեր ուրիշին սովորեցնել իր գիտութիւնը, կը նմանի խոզի, որ միայն իր գերնալը կ'ուզէ:

§ Մուկ մը ցորենի հատիկով մըն ալ կ'ապրի, իսկ մարդն անկէ ալ քիչ բանով՝ այսինքն յոյսով մը:

§ Արգարութեան գիծը՝ կը սրբէ ամբարիշտին դրած բիծը:

§ Չարութիւնը՝ խորշոմներէ աւելի կը տգեղցնէ կինը:

§ Ո՛վ որ կեանքը կը սիրէ և աղէկ օր անցնել կ'ուզէ, թո՛ղ քաջ լեզուն չար խօսելէ և շրթունքները՝ ստութիւններ արտասանելէ:

§ Մարդը մեծցնողը՝ ո՛չ աղքատութենէ, ո՛չ ալ մահէ վախնալն է:

§ Մարդս աշակերտ մըն է, իր վարպետը վիշտն է և տառապելէ առաջ ո՛չ ոք ինքզինքը ճանչցած է:

§ Եթէ աման մը մաքուր չըլլայ, մէջը ի՛նչ որ դնէք կ'աւրուի:

§ Մահը առաջին անգամ ա՛յն ատեն կը ճանչցուի, երբ որ մեր սիրած մէկ սնձը կը տանի:

§ Սիրուհի մը ամէնէն շատ կը սիրուի, կ'ինն ա՛մէնէն աղէկ, իսկ մայրը՝ միշտ:

§ Հաճոյքները ա՛յն ծաղիկներու կը նմանին, որոնց հոտը թէ որ շատ առնուի՝ գլխու ցաւ կը պատճառէ:

§ Չար մարդոց զովասանքն կամ պարսաւը՝ կարեւորութիւն չունի:



ՏԱՐԵՑՈՅՅԻ ՆՈՒԷՐՆԵՐԸ

Մեր անցեալ տարուան Տարեցոյցի մրցումներուն քննութիւնը յանձնած ըլլալով մասնաւոր քննիչներու, հետեւեալ արգիւնքին հասած է.

Ա. Հարցում. — Զուարճալի պատմութեան մը մրցումն էր ասիկա, որուն մասնակցած են 10 անձեր, որոնք են՝ (ստացման կարգով) Յակոբ Ղազարոսեան (Իգմիտ), Գր. Հ. Գալուստեան (Թարսուս), Կ. Այանեան (Սկիւտար), Արաքսի Յ. Բէրէստէճեան (Գատըզիւղ), Վահան Մ. Ճոխալեան (Խարբերդ), Ասքանազ Յ. (Խարբերդ), Ստեփան Փանոսեան (Կէօնան), Ղ. Հաճի Գասպարեան (Եօզրատ), Յակոբ Մ. Տէր Յակոբեան (Իգմիր), Պաղտասար Կիւլխասեան (Խարբերդ), Թագուր Յակոբեան (Գըլլըճ-գիւղ):

Ասոնցմէ առաջնութեան իրաւունքը համեմատութեամբ միւս ինը մրցակիցներուն՝ կը պատկանի Խարբերդէն (Հիւսէյնիկ) Ասքանազ Յ. (*) ստորագրող անձին՝ որուն ներկայացուցած պատմութիւնը ունի նաև բնատուրիկ հանգամանք և ժողովրդական հէքեաթի գոյն՝ բաւական իսկատիպ:

Իսկ Բ. կը հանդիսանայ Իգմիրէն Յակոբ Մ. Տէր Յակոբեանի (**) «Ստանաները Արքայութեան մէջ» վերնագրով կէս-թաղմուտեան շունչով գրուած մէկ գրութիւնը: Այս շարքին մէջ յիշատակութեան պատիւին արժանի կը տեսնենք նաև Գատըզիւղէն Օր. Արաքսի Բէրէստէճեանի «Աքաղաղը և Աղ-

(*) Մէկ Օսմ. ոսկի արժողութեամբ գիրքեր:

(**) 500 պահարան և 500 թուղթ, իր անունովը տպագրուած:

ուէտը» վերնագրով թարգմանութիւնը, Կէօնանէն Ստեփան Փանոսեանի «Հինգ Զուարճալիքները» և Խարբերդէն Պաղտասար Կիւլխասեանի մանրավէպը:

Բ. Հարցում. — «Մանգումէ»ի 1907 Յունվ. 1էն մինչև 1907 Մարտ 31 եռամեայ միջոցին հրատարակուած ժողովրդեան ամէնէն օգտակար նկատուած երեք յօդուածներուն ընտրութիւնը, որոնցմէ երեքը տարբեր աստիճանով պիտի վարձատրուէին:

Այս մրցումին մասնակցած են միայն Տ անձ՝ Օր. Արաքսի Յ. Բէրէստէճեան (Գատըզիւղ), Պաղտասար Կիւլխասեան (Խարբերդ), Վահան Ճոխալեան (Խարբերդ), Ս. Այվաղեան (Ամասիա), Լ. Մ. Պ. (Գատըմֆաշա), Յովհաննէս Կէվհէրեան (Գալէճիկ), Յակոբ Տէր-Յակոբեան (Իգմիր), որոնցմէ մէկը միայն մէկ յօդուած նշանակած ըլլալով իր պատասխանին վրայ, մրցման իրաւունքէն զրկուած համարուեցաւ:

Հետեւաբար ուշադրութեան առինք միայն 7 պատասխաններ, որոնցմէ մեծագոյն մասը զժբազդաբար չէին կրցած ըմբռնել հարցումին ոգին՝ որուն մէջ միակ շեշտուած պայմանը օգտակարութիւնն էր և կրնանք ըսել թէ և ո՛չ մէկ պատասխան տուող նկատի առած էր գոյն:

Սակայն իթէ երբեք անպատճառ վարձատրութիւն մը տալ ուզուի, կրնայ իբր Ա. մրցանակի (*) արժանի նկատուիլ Գալէճիկէն Յովհաննէս Կէվհէրեան, որուն որոշածներն են՝ «Մանգումէ» 1727, 1732, 1756, Բասիմի «Օրուան Մտածումներ»էն «Բիչ մը տեսակցինք», «Մեռաքս թաշկինակը» և «Ինչպէ՞ս շինեց կալուածները» յօդուածները:

(*) Մէկ տարեկան «Մանգումէ»:

Բ. մրցանակի (*) արժանի է Խարբերդէն Առքանազ Յ... , որուն սրոշածներն են «Մանզումէ» թիւ 1716, 1725, 1761, Բասիմի «Տան Մեղուները», «Քիւզ մը տեսակցինք», «Ծերունիին արմաւենիները» յօդուածները:

Գ. մրցանակի (**) արժանի է Գատրգիւղէն Օր. Արաքսի Յ. Բէրէստէճեան, որուն սրոշածներն են «Մանզումէ» թիւ 1712 «Կանանց կոչումը» (Եւգինէ Գափամաճեան), թիւ 1751 «Մաքրութիւն և Կեանք» (Աւետիս Գույումճեան) և թիւ 1712 «Պէտք է շատ բան սորվեցնել տղոց» (Չէվիկեան):

Գ. Հարցում.— Մեր աղջիկները դպրոցէն ելնելէ վերջ ի՞նչ գրադուաներ պէտք է ունենան, հարցուցած էիք, և պահանջած որ ասոնք բանաձեւուին 5 պատասխաններու շարքով:

Այս հարցումին պատասխանելու փութացած էին Տանձեր՝ Առքանազ Յ. (Խարբերդ), Պաղտատար Կիւլխասեան (Խարբերդ) Յովհաննէս Կէվէրեան (Գալէճիկ), Արաքսի Բէրէստէճեան (Գատրգիւղ), Գր. Ն. Գալուստեան (Թարսուս) Արաքսի Խարտեաշեան, Յակոբ Տէր-Յակոբեան (Իզմիր), Խնդունի, որոնցմէ հարկ էր երեք հազը ընտրել:

Մրցման մասնակցողները չէին կրցած պէտք եղածին պէս խնամքով պատասխանել հարցումներուն, բայց ի երկու հօգիէ՝ որոնց մէջ կը տատանի առաջնութեան իրաւունքը, որոնք են՝ Խնդունի ստորագրութեան տէրը և Օր. Արաքսի Խարտեաշեան, ո-

(*) Վեցամետայ «Մանզումէ»:

(**) Աշխարհաբաւ Նարեկ, Թարգմ. Բասիմ:

րոնց գրութիւնները թէ՛ ոճի և թէ՛ լիմատի տեսակէտով և ոչ մէկ կերպով կրնային բաղդատուիլ իրենց մրցակիցներուն հետ:

Ասանցմէ պարտաւորեալ կը զգանք ինքզինքնիս բացարձակ կերպով առաջնութիւնը տալու Խնդունիի (*) (Օր. Մեղինէ Կոտանեան), որ հարցումին իրեն առջև գրուած սահմանին մէջ շարժելով առանց չեղումի կանոնաւորապէս պատասխանած էր հարցումին հինգ բանաձեւերով, բան մը՝ որ շատ սահմանափակ և նեղ գտնելով՝ մերժած էր պահպանել Օր. Արաքսի Խարտեաշեան, և բոլորովին հարցումէն դուրս տառու մը ընելով՝ կնոջ պարտականութեան հինգ բանաձեւեր գծելու ելած էր:

Այս շեղումը կըստիպէ մեզ իրեն յատկացնել երկրորդ մրցանակը (**) մտածելով թէ թերեւս միեւնոյն շեղումը եթէ ներելի ըլլար և գործադրած ըլլար Խնդունի թերեւս աւելի յաջող բան մը գրէր: Իսկ իբր երրորդ (***) մնացեալներէն համեմատարար լաւագոյնը հանդիսացած է Գր. Հ. Գալուստեան (Թարսուս):

Գ. Հարցում.— Սափորի մէջ պահուած երեք գեղձանիկները գտնելու մրցումին մասնակցած են Չճանձեր, Խաչիկ Նշանեան, Գէորգ Գույումճեան, Մարտիրոս Գուլուստաճեան Գ. Խ. Գրալեան, Մկրտիչ Քէլիշեան, Տէր և Տիկին Արիկ Զօրեան, Վահան Խալլղլեան, Տիկին Նարգուհի Գալալեան, Ստեփան Շէհ-

(*) Գեղեցիկ ոսկի մատանի մը ՚իւր անունը վրան փորագրուած:

(**) Ս. Խանճեան փառակազմ աղօթագիրք մը:

(***) 100 սյցետոմս տալազրուած իր անունովը:

րէր, Յակոբ Գրալեան, Տ. Տաճատ քհ. Դերձակեան, Գր. Հ. Գալուստեան, Ս. Ալվազեան, Կոպէս Հէքիմեան, Արշակ Շահպէտեան, Արաքսի Քէրէտէճեան, Հայկ Ճիւրճեան, Լ. Մ. Պ., Վահան Ճոխալեան, Ռաֆայէլ Թնկըրեան, Երուանդ Ալիքսանեան, Յակոբ Տէր Յակոբեան, Կարապետ Յ. Չրաքեան, Պաղտատար Կիւլխասեան:

Ասոնցմէ ամէնքն ալ լուծած են դժուարութիւնը, որով վիճակով Իպրայիլ (Ռուժանիա) Տ. Տաճատ քհ. Դերձակեան շահած է մրցանակը (*):

Ե. հարցում.— Լաբիւրիւնդատին լուծումը ուղարկած են ԿՈ անձեր, որոնցմէ միայն մէկը՝ բոլորովին սխալ, իսկ մնացեալները ճիշտ. ասոնցմէ մէկը վիճակով Օր. Արաքսի Յ. Քէրէտէճեան կ'ընդունինուէրը (**):

ՈՍԿԻ ՄԱՏԱՆԻՆ. ՇԱՀՈՂ. ՅՕԳՈՒՍԾԸ

Կը հարցնէք թէ «Մեր աղջիկները դպրոցէն ելլելէ ետքը ի՞նչ զբաղումներ պէտք է ունենան»:

Դպրոցէն ելլող մեր աղջիկները անկազմ խմորներ են սովորաբար, քիչ մը գրել կարդալ գիտեն, աւելի քիչ՝ հաշուել կարող են, ու մէյմէկ քիչ ալ գիտութեանց վրայ ծանօթութիւն ունին:

Ինչ որ իրենց քով առատութեամբ կը դառնուի, վերացական ու եթերային գաղափարներու առատ

(*) Գեղեցիկ վանդակ մը գեղածայն դեղձանիկով մը որ... դեռ կ'ապրի

(**) Հազար նամակագրոջմով լեցուն ալպօմ մը:

պաշար մըն է, որ դպրոցէն դուրս իրական կեանքի դառնութիւններուն հանդէպ հետզհետէ կը ցնդին ու կ'անհետանան, յուսախար ու տխուր էակներ ընելով մեր աղջիկները:

Հետեւաբար իմ խոնարհ կարծիքովս անհրաժեշտ կը համարիմ որ աղջիկ մը դպրոցէն ելլալէն յետոյ զբաղի այնպիսի գործերով որոնք կամ բազմին հարուածներուն տոկալու պատրաստէ գիրենք կամ կեանքը քաղցրացնելու:

Ուրեմն պիտի փափաքէի որ դպրոցէն ելլող մեր աղջիկները.—

Ա. Ամէն բանէ առաջ իրենց ուժերը կեդրոնացնէին արհեստ մը սորվելու, ինչ որ կ'ուզէ ըլլայ անիկա. բաւ է որ ի պահանջել հարկին աղջիկը կարենայ անով իր գոյութիւնը պահպանել:

Բ. Զբաղէին բոլոր այն գործերով որոնք տանտիկնոջ մը պարտականութեան մասը կը կազմեն, պարտականութեան գիտակցութիւնը կեանքի յաջողութեան կէտն է ինծի համար:

Գ. Ընթերցումը անհրաժեշտ պէտք մըն է, չէ թէ անոր համար որ մարդը յարաբերութեան կը դնէ արտաքին աշխարհին հետ, այլ անոր համար որ մարդուն մէջէն կը ջնջէ գիտնալու յաւակնութիւնը և անոր տեղը կը զետեղէ սորվելու եռանդը: Կեանքը ամբողջ արդէն ուսուցում մըն է: Վա՛յ անոր որ գիտեմ կը պօռայ. տակաւին շատ բաներ սորվելու պիտի ստիպուի: Հետեւաբար մեր աղջիկներուն աւելի լաւագոյն թիւղդրութիւն մը չէ կարելի ընել բայց եթէ կարգալու ժամանակ յատկացնել միշտ և ամէն պարագայի մէջ:

Դ. Բոյն մը առանց էգ թռչունին չկրնար ըլլալ, առնն ալ առանց կնոջ: Օրուան խոնջէնքէն պար-

տասեալ այրը և դպրոցին մէջ մտքով յողնած պատանին հանգիստի և սփոփանքի համար միայն տունը ունին: Խոժոռ ճակատ մը, և պրկուած միանունքներ հոն պիտի վերադանեն իրենց հանգիստը: Ի՞նչ բան աւելի պիտի կրնայ հաճելի ընծայել տունը, եթէ ոչ գեղեցիկին, աննիւթակամին ու հողեկանին վայելքը: Երաժշտութեան հնայքը պիտի բաւէր խիստ նայուածքներ մեղմացնելու և խռովեալ հոգիները խաղաղելու: Ուրիմն երաժշտութեամբ զբաղելու պէտքը կարեւոր կը համարին մեր աղջիկներու համար, մանաւանդ անոր համար որ մենք ուրիշ գուարձութիւններու տակաւին անվարժ ժողովուրդ մըն ենք:

Ե. Ամէնէն կարեւորը և անհրաժեշտը այն զբաղումներն են որոնք մտատանջ պիտի ուզէի տեսնել մեր աղջիկները, անիկա չափաւորութեան մանաւանդ լիզուի չափաւորութեան մարզանքն է:

Կինը բամբասող է, շարակրատ է, չափազանցող է, շտատխօս է, անհամբեր է, ըսուած է, վասն զի խօսիչ չգիտեր:

Ունանք կը պնդեն թէ խօսիչ չգիտնայր ստացական կարողութիւն մը չէ, սակայն փորձը ցոյց պիտի տայ թէ մարդ եթէ իր ուժերը կեդրանացնէ մարդելու համար ինքզինքը, աներկբայ պիտի յաջողի, բաւէ որ զբաղի, անիկա իր մտքին գլխաւոր մտատանջութիւնը ընէ և բնաւ չթերանայ:

Սպորտութիւնը բնութիւն պիտի դառնայ արդէն ինքնին: Քանի որ տունը պիտի խաղաղին, ի՞նչ խանգարուած երջանկութիւններ պիտի վերազատուին, եթէ կիներ գիտնային չափ ու սահման դնել իրենց լիզուին:

Ահա թէ ինչ բաներ անհրաժեշտ կը համարուին մեր աղջիկներուն համար, դպրոցէն դուրս:

ԽՆԴՈՒՆԻ

Բ. Յ Օ Դ Ո Ւ Ս Ծ Ը

Ի՞նչ զբաղում պէտք է ունենան մեր աղջիկները դպրոցէն ետք:

Դպրոցէն ետք... բայց մենք գիտե՞նք թէ ի՞նչ պիտի ընենք մեր աղջիկները վարժարանէն ներս:

Իմ կարծիքով աղջիկներու դիրքը ընկերութեան մէջ և ընտանիքին մէջ իր պատրաստութեան շրջանները և բաժանումները չունի: Դպրոցէ առաջը, դպրոցը և դպրոցէն ետքը մէկ նպատակ պէտք է ունենան, Տիպար կիներ պատրաստել, աշխարհի ալեկոծութիւններուն և տխրութիւններուն վիհին մէջ երջանկութեան խլեակներ արձակելու համար,

Ինչ պէտք է ըլլան մեր աղջիկները. ահա իմ հինգ բանաձեւներս. —

- Պէտք է ըլլան .
- Ա. — Կին
- Բ. — Սիրուհի
- Գ. — Մայր
- Դ. — Դատարար
- Ե. — Ընկեր:

Կին՝ իր տունին տանտիկինը, գերձակուհին, սպասուհին և խոհարարը ըլլալու համար, բառին ազնիւ առումովը անչուշտ:

Սիրուհի՝ ըլլալու այն գգուանույչ, սրտագրաւ, երազային էակը, որ յաւէտ նոյն խանդոտ տեղը բռնէ իր ամուսինին սիրտին և զգացումներուն մէջ, գիտնայ զանոնք վարել, զանոնք շահագործել՝ առանց լարչութեան և առանց բղջախոհութեան:

Մայր՝ իր զուակին ստնտուն և սնուցիչը ըլլալու համար, իրմէն մարմին և հոգի տուած էակին ոգելին

հոգածութեան և խնամածութեան համար. մայրութիւնը գիտնալ՝ իր ամբողջ արուեստին և գիտականութեան մէջ:

Դաստիարակ՝ զաւակներուն, անոնց առաջին քայլերուն առաջնորդելու, անոնց անկազմ նկարագիրը և խմորը արձանագործելու: Մեր տղաքները սրբան կը սուժեն ընտանեկան կրթութեան երեսէն, ասիկա ապացուցանելու համար՝ առաջին ընտանիքին վրայ ակնա՛րկ մը կը բաւէ:

Եւ ընկեր: Ահա այն գերը՝ որու կ'ուզուի գուցէ բուն հարցումին ողին: Ընկերը իր ամուսինին, անոր օժանդակը, ձեռնտուն, խորհրդատուն, մտերիմը՝ անոր մտածումներուն և յոյսերուն, սունին մէջ մեքենական ճղճիմ գերէ մը դուրս՝ մտածում մը ամբողջ և անձնութեան ու զոհողութեան ուժ մը:

Ի՞նչ կրնան ըլլալ մեր աղջիկները, ի՞նչ զբաղում կրնան ընտրել. — այն ամէն զբաղումները՝ որոնք այտերը չեն կարմրցներ, ճակատները չեն հակեցներ: Դերձակուհի, վարժուհի, ծաղկաշինուհի, գործաւորուհի, և նոյն ի՛սկ խանութպանուհի: Բայց այս ամենուն համար դարձեալ դաստիարակութեան առեղծուածին պիտի երթան մեր քայլերը, քանի որ առանց զօրաւոր և նկարագիր չինող դաստիարակութեան մը, մեր աղջիկները նոյն ատրտամ, անորոշ, անգիտակ ողինները պիտի ըլլային, մութի մէջ քալող, պայքարէն ամօթահարուող, աշխատութենէն կարմրող և կեանքի մէջ դեղնող էակները, որոնք՝ էրիկ մարդու մը մասններուն շջափման կ'սպասեն կարծես՝ աշխարհի վրայ իրենց գոյութիւնը զգալ կարենալու համար:

Նախ դաստիարակենք ուրեմն մեր աղջիկները

այն հինգ ձեւերով զոր ցոյց տուի, և ալ հարկ չպիտի մնայ՝ ծրագիրներ շինել անոնց զբաղումին համար: Աշխարհի ճանաչողութիւնը, նկարագիրի ուժը և զարգացումի սերմը չունեցող աղջիկները շատ սահուն պիտի զգան իրենց ոտքերը և շատ գիւրախաբ՝ իրենց սիրտերը:

ԱՐԱՐԱՒ ԽԱՐՏԵԱՇԱՆ



ՏԱՐԵՑՈՅՑԻ ՆՈՐ ՆՈՒԵՐՆԵՐԸ

Ամէն անոնք որ անցեալ տարուան մեր մրցումներուն մասնակցեցան և կամ վարձատրուեցան, ինչպէս նաև մեր այս տարուան ընթերցողները, պիտի ուզեն անչուշտ մասնակցիլ մեր նոր մրցումներուն, որոնց նպատակն է հաճելի, զբօսալի և օգտակար կերպով զբաղեցնել զիրենք:

Ա. ԵՒ Բ. ՆՈՒԷՐ

Պարզ եւ արժանուշ պատմութիւն մը վիպիլ որ բաղկանայ նամակի 16 էջերէ եւ որ յարմարի ընթացեցան միջավայրի մէջ ընթերցման:

Սոյն մրցման մէջ Առաջին հանդիսացող երկու գրութիւններ Զարգարեան գրատան կողմէ և Զարեհ

ուար 31 ճիշդ լուծողներէն մէկուն վիճակաւ պիտի նուիրէ փառակազմ, մեծագիր, երեքլեզուեան (Անգլ. Գաղ. Գերմ.) նամակագրոջմի չքեզ ալպօմ մը և 500 հատ զանազան գեղեցիկ նամակագրոջմներ:

Է. ՆՈՒՒՅՐ

Ժողովրդական տարեցոյցի բոլոր ընթերցողներուն յատկացուած նուէրնիս է այս տարի գրասենեակներու և տան սենեակներու պատերը զարդարող և 1908 տարին ներկայացնող պատի Օրացոյց մի:



Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

Բոլոր անոնք որ կը փափաքին մասնակցիլ սոյն մրցումներէն ո և է մէկին և կամ մէկ քանի հատին, պէտք են յարգել հետեւեալ պայմանները.

1. Իրենց պատասխանները մեզ ղրկին առ առաւելն մինչև 1908 Յունուար 31 Կ. Պոլսոյ և Փետր. 29 գաւառաց համար:

2. Բոլոր սոյն նիւթական զսփողութիւնները մի միայն մեր ընթերցողներուն յատկացուած ըլլալուն, պէտք է ղրկուած բոլոր պատասխաններուն ճակատը կտրուած փակցուած ըլլայ Տարեցոյցին կողքին վրայ գտնուած կտրօնը. առանց անոր ղրկուածներն նկատողութեան չպիտի առնուին:

3. Բոլոր մրցումները պիտի յանձնուին մասնագէտներու քննութեան և արդիւնքը պիտի ծանուցուի մեր յաջորդ տարուոյ Տարեցոյցին մէջ: Նուէրները պիտի տրուին Մարտ ամսոյ մէջ:

4. Ղրկուած պատասխանները պէտք է ուղղել հրատարակչին հասցէին.

Չարդարեան Եղբարք

Կ. Պոլիս, Չաքմաքճըլար, Թ. 24 26



Շ Ն Ա Կ Ե Ր Ն Ե Ր

Ընդհանուր կարծիք մը եղած է թէ Չինացոց գլխաւոր սնունդը շուներու և կատուներու միտն ըլլայ: Ասի բոլորովին ճիշդ չէ, որովհետև այս երկու ընտանի անասուններուն միտը միտն աղքատները կ'ուտեն և այն ալ ո՛չ ամէն տեղ: Մեծ ու ծովեղերեայ քաղաքաց բնակիչներն և ո՛չ իսկ շուներուն և կատուներուն ուտելի ըլլալը գիտեն: Քանզոն քաղաքին մէջ կայ հիմայ չորս սպանդանոց, որոնց գործն է վերոյիշեալ անասունները մորթիլ: Հոն շուներու և կատուներու միտը չքաւորներն ու կարօտեալեայներն մեծ քանակութիւնով կ'ուտեն: Հուժկու լեռնորնակ ծակփիւմները՝ որ Ամայի արեւմտեան կողմը կը բնակին, շնուկեր, կատուակեր և մկնուկեր ամենաձանօթ ժողովուրդն են, և իրենց մարթելու և

պատրաստելու եղանակը ստուգիւ շատ զարշելի է: Կլոր և սրածայր պողպատով անասուններուն վիզը կը խոցեն, որպէս զի անոնց արիւնը կամաց կամաց հոսի: Դեռ անասուննելը չսատկած՝ կ'սկսին մարթազերծ ընել և փորտութիւն հանել: Շան ստուըններն ա՛մէնէն համեղ և համազամ մտաը կը համարուին: Կատուններուն մէջէն սեւերն աւելի նախամ'նծար կը դասուին, մինչդեռ սպիտակ և գոյնզգոյնները բաւական խոտելի են, և շատ մը թողերու մէջ ամենեւին չեն ուտուիր: Իսկ մուկերու նկատմամբ ամենեւին խտիր չկայ: Տնային, դաշտային և ջրային մուկերն առ հասարակ միեւնոյն յարգն ունին. եթէ ճանապարհորդ մը այցելութեան ելլէ Չինացաց փոքր քաղաքի մը կամ գիւղի մը մօտ, կը տեսնէ հարիւրաւոր տնային մուկեր, որոնք սունէն դուրս փոզոցը երկայն չուաններու վրայ պոչերէն կախուած են, որպէս զի չորնան: Չիու միսն ալ Չինաստանի ամէն գաւառներու մէջ կ'ուտուի, բայց ո՛չ այնչափ ախորժակով ու հաճութեամբ: Քանի մը գաւառներու անթիւ ու անհամար բնակիչներուն քով չկայ անասուն մը որ ուտելի չըլլայ, երկրամայրէ սկսեալ մինչև ձին իրենց համար ուտելի է:



ՀԱՐՐՈՒԽԸ

(ՄԵՆԱԽՍՍՈՒԹԻՒՆ՝ ԲՕՔԼԷՆ ԲԱՏԷԻ ԿՈՂՄԷ)

Ես... (հէփշո՛ւ) ներեցէք... ի՛նչ հարբուխ, թշուառական, Ամբակում, առտուն կանուխ մինչև Վէզինէ տարաւ ինձի: ...Յուղիչ բան է, մենամարտը... բնաւ տեսած չէի... ա... աղ... (հէփշու) աղէկ անցաւ: Կարգաւ պատմեմ: Ղշբաղու թենէս, Ամբակում բարեկամս է... Աս բան մը չէ... բայց հեղինակ է... և... (հէփշո՛ւ) սղբերգակ: Ամէն բան շիտակի կը տանի, մինչդեռ հանգիստականները նոյնը չեն ըներ իր թատերգութիւններուն: Ես ալ մտքէս չէի անցնէր երթալ... բայց ինք եկաւ բռնի տարաւ թիկնաթոռ մը հրամցուց... Եւ ի՛նչ թիկնաթոռ... օգի հոտանքի ճիշդ մէջտեղը: Գէշը ան է որ... (հէփշո՛ւ) ի վեր հարբուխ եղած եմ, Սոսկալի բան է: Ասկէ զատ ներկայացումը հետաքրքրեց զիս: Տեսած էք դուք: Ոչ... Լրագիրները գրեցին թէ շատ տաք էր... մի՛ հաւատաք: Տեսէք թէ ի՛նչպէս էր: ...Անունը... (հէփշո՛ւ) էր, շատ ինքնատիպ բան մը... անանկ չէ. անմիջապէս կը հասկնաք թէ ինչդիրը ինչի՞ վրայ կը դառնայ: ...Օրիորդ... (հէփշո՛ւ) շատ ազուոր խաղաց իր գերը... հիանալի էր... շատ տաղանդաւոր է... երրորդ արարուածին հագած էր... (հէփշո՛ւ): Հրաշալիք մը... բոլոր սրահը կուրար... Ես ալ, որ զինք շատ տեսած եմ, չի ճանչցայ... ի՛նչ հագուտ... հապտ կացութիւնը... (հէփշո՛ւ)...: Ամուսինին դերը կատարողն ալ շատ աղէկ

էր... մուտքը ինքնատիպ էր... դուռը կը բանայ,
բեմին վրայ կը յառաջանայ ու կը գոչէ... (հէփշո՛ւ)
Աստուած օրհնէ: Բոլոր հանդիսականները կուլա-
յին... ես ալ կուլայի, բայց հարբուխէս էր: ... Ա-
րարուածները կարճ էին, միջնարարները շատ քիչ:
... Մինակ օգի հոսանքը առատ էր...: Ամբակումի
թատրերգութեան մէջ ամէնէն աւելի զաւելչտի մասն
էր որ աչքի կը զարնէր. այնչափ կը խնդային որ
արցունքնին կը հասէր:

Երկրորդ միջնարարին գացի բարեկամս տեսնելու.
—Սիրելիս, ըսի, ներեցէք որ ըսեմ թէ... (հէփ-
շո՛ւ), իրաւ որ շատ դուռ կայ:

Գիտողութենէս շատ զգածուեցաւ... բարեկամա-
բար կը խօսակցէինք՝ երբ մարդուն մէկը անցած
ժամանակը բարձր ձայնով ըսաւ.

—Ո՛ր տխմորն է ասանկ ակեղցփեղ բաներ գրողը:
Ամբակում հոտին դարձաւ ու աղնուօրէն ըսաւ.

—«...» (հէփշո՛ւ): Շատ ծանր կեցուածք մը
ունէր:

Մենամարտ մը որոշուեցաւ: ...կառքերով մեկ-
նեցանք... երբ հասանք, կառքէն իջնելով հակառա-
կորդ վկաներուն ուղղելով ըսի. (հէփշո՛ւ)... անմի-
ջապէս հակառակորդը գոչեց.

—Եթէ այդպէս է, ամէն ինչ կարգադրուած է...:
Ապուշ կրթած, կեցած տեղս մնացի:... Ամբակում
յառաջացաւ և թեւ թեւի մեկնեցան. մենք ալ ե-
տեւնէն: Ճաշարանին մէջ Ամբակում բացատրեց թէ
հակառակորդը թատրոնի մը անօրէն է և նոյն թատ-
րերգութիւնը ներկայացնել պիտի տայ իբր փոխա-
րինութիւն:

ԳՐԱՎԱՃԱՌ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐԲ

4. Պոլիս Զամախերլար թիւ 24—26
Բերայ Գուլե-գաբու թիւ 695
Պանսըմա, Իզմիտ, Պարսիզակ

Զարդարեան Գրատունը իր 45 տարուան գոյու-
թեամբը կարող է այսօր ամէն տեսակ դպրոցական,
բարոյական, գրական, գիտական գրքերու յանձնա-
րարութիւններ փութով և գոհացուցիչ գեղչերով կա-
տարել:

Զարդարեան Գրատունը նամակատան վարչու-
թեան անօրինութեամբ՝ ապրանքը ղրկուելէ ետքն
ալ կը գանձէ փոխարժէքը ի դիւրութիւն յաճա-
խորդաց:

Զարդարեան Գրատունը արդէն մասնաձեւեր
ունենալով Բերայի, Պանարմայի, Իզմիտի և Պար-
տիզակի մէջ, կը փափաքի գաւառական ուրիշ կեդ-
րոններու մէջ եւս ունենալ մասնաձեւեր, այս պատ-
ճառու վստահելի գործակալներ կը փնտռէ:

Զարդարեան Գրատունը կը ձեռնարկէ հրատա-
րակչական գործերու և կը վարձատրէ անոնց հեղի-
նակներն ըստ կարելոյն:

Զարդարեան Գրատան միջոցաւ կարելի է կատա-
րել տպագրական գործեր որոնց գինները կը գերա-
զանցեն իրենց չափաւորութիւնովն մինչեւ ցարդ
եղածները:

Զարդարեան Գրատունը վէպերու ճօխ մատենա-

դարան մը ունի, զոր ամսական 10 զրշ. վարձքով մը վարձու ալ կուտայ բաժանորդներու:

Չարդարեան Գրատունը դիմելը ճշմարիտ հաճոյք մը դարձած է գրասէրներու համար:

ՁԱՐԴԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻՒՆԻՔ

1907—8 Տարւոյ

Ժողովրդական շարեցոյց 1907 տարւոյ. —

Տարեցոյցի այս տարեկանը կը պարունակէ գրական հատուածներ, զուարճալի պատմութիւններ, օգտակար գիտելիքներ, զբօսական և սալօնի խաղեր ևն. ևն.:

Տարեցոյցին մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն Ակնցի Գաբիկ աղային ընդարձակ պատմութիւնը ակնայ զուարճալի բառերով՝ գրուած հանրածանօթ Մելքոն էֆ. Գալէնտէրի կողմէ, և օրուան մը մեջ յուսանկարիչ Ըլլալ, իբր ժողովրդական և պարզ լեզուով բացատրուած պատկերազարդ անջատ հատուած մը որ կը սորվեցնէ լուսանկարչութեան արուեստը: Իր բովանդակութեան պէսպիսութեանը, հաճելիութեանը, հետաքրքրութեանը և օգտակարութեանը, մանաւանդ իր խիստ դիւրամատչելի գինին համար չէ հինցած ժողովրդական Տարեցոյցի 1907 տարուանը և անոնք որ տակաւին չեն դնած անկէ հատ մը, պէտք են օգտուիլ սոյն առիթէն:

Գին թղթակազմ, 3 լաթակազմ 5 զրշ.:



Տասնեւիններորդ դար

Ե Ի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՐՈՒԽՍԹԻ ՏԷՐՈՅԵՆՑ

Շատոնց է որ Պոլսահայ գրականութիւնը չէր ունեցած ուսումնասիրութեան այսքան լուրջ և ստուար հատոր մը: Յ. Գ. Մրժրեանի սոյն երկը որ գրեթէ Պոլսահայ կեանքին մէկ դարու պատմութիւնն է, պակասած է Յովսէփ Իզմիրլեանց գրական մրցանակով: Կր պարունակէ նաեւ Տէրոյենցի լուսատիպ պատկերը և ձեռագիրը, և անոր երկերէն մասեր: 260 էջերէ բազկացեալ սոյն գրքին գինն է 12¹/₂ զրուշ:

Մատենադարաններու համար կիսակաշի 20 զրուշ:



ԿԵԱՆՔԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Նշանաւոր Անգլիացի զրոզի մը Լորտ Աւպրի (Սըր Ջօն Լըպօք)ի սոյն երկը որ թարգմանած է Գ. Ոսկեան էֆ., անուրանալի արժանիքը ունի դարուս Աւետարանը կոչուելու: Կը պարունակէ կեանքի գործածութեան մասին օգտակար գրուածներ՝ աշխարհի ամէնէն երեւելի մարդոց խօսքերէն և գրութիւններէն մէջ բերուած վկայութիւններով:

Այս գրքին հրատարակուելէն յետոյ ալ աւելորդ է խորհիլ թէ՛ լ՞նչ նուէր պէտք է տալ մեր բարեկամներուն, ազգականներուն և մեր ընտանեկան պարագաներուն: Գինը 6 զրշ. լաթակազմը 10 զրշ.:

Մ Ի Ա Մ Ա Ն

Երևաասարգ տաղանդաւոր բանաստեղծ Միսաք Մեծարենցի բանաստեղծութեանց անդրանիկ հաւաքածոն, Միածանր սիրուն հատորիկ մըն է գեղարուեստական սպագրութիւնով: Միսաք Մեծարենցի գրական հրապարակի վրայ երեւումը թէև հազիւ երկու երեք տարի կ'ընէ, սակայն առաջին օրէն խի յայտնութիւն մը եղաւ իր տաղանդը, երբ կը ստորագրէր «Շաւառայ Միածան»: Գերազանցապէս բանաստեղծ հոգիի մը տառապանքները և յուզումները կը խտանան այս հատորին մէջ, որտաղեղ ընթերցման արժանի զիրք մը, որուն մէջ գեղեցիկ յառաջարանով մը Սրամ Անտոնեան կը ներկայացնէ պատանի բանաստեղծը և անոր կեանքին վերլուծութիւնը կ'ընէ: Գին 4 զրուշ

Ժ Ե Ղ Ո Վ Ը Գ Յ Կ Ա Ն Տ Ա Ր Ե Յ Յ Ո Յ Յ
1891 - 1908

Ժողովրդական Տարեցոյցի մինչեւ ցարդ հրատարակուած տասերեք հատորները որոնք ընտանեկան և դպրոցական մատենադարաններու յարմար սքանչելի նիւթերով պէսպիսուած զարդեր են, թէև և շատոնց սպաւած, սակայն մէկ քանի ձեռք ամբողջ հաւաքածոյներ կարելի է դանել Զարդարեան գրատան մէջ 100 դրշ.ի փոխարէն բողի ծախսն ալ մէջը: Սոյն տասներեք հատորները կը պարունակեն 4286 էջեր, բազմաթիւ պատկերներ, անթիւ դուարձաչիքներ, անհաշուելի օգտակար և հետաքրքրական անգլեկութիւններ, տոմարական դիտելիքներ, ընտանեկան բողոցոյց, Այփալանի ժողովրդական ոտանաւորները ևն. ևն. ևն.:

Մ Ա Ա Ի Ա


Գ Ր Ա Կ Ա Ն Ե Ի Գ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Ա Կ Ա Ն Հ Ա Ն Դ Է Ս

Տ Ն Օ Ւ Է Ն Ի Մ Բ Ե Ա Գ Ի Ի Ե Ն Ո Վ Գ Ա Ր Մ Է Ն

Մ Ա Ս Ի Ա, որ դեկ. 1ին լրացուց Նոր Շրջանի Ա. Տարին, Բ. Տարին սկսած է խմբագրական և վարչական աւելի կատարելագործեալ ուժով: Մասիսի հրատարակումը կը լրացնէ գրական կարեւոր պէտք մը՝ թրքահայ լրագրութեան մէջ: Մասիս թրքահայ ամէնէն ստուար, ամէնէն ճոխ ու ամէնէն խնամուած գրական և գեղարուեստական հանդէսն է, որ կը հրատարակուի որոշ ուղղութեամբ մը, ձգտելով իրականացնել գրական ծրագիր մը: Մասիս իր ամէն թիւերուն կուռ բովանդակութեամբ՝ անհրաժեշտ պէտք մըն է ամէն անձի: Ըշխարիտ գրկանք մըն է անմասն մնալը Մասիսի ընթերցումէն, որ կը շահագրգռէ հաւասարապէս գրագէտը, գրասէրը, պարզ ընթերցողը, ուսուցիչը, դպրոցականը: Մասիսի կ'աշխատակցին՝ թրքահայ ամէնէն համբաւուած և հեղինակաւոր գրագէտները. — Եղիշ Եպիսկ. Գուրեան, Մուշեղ Եպիսկ. Սերոբեան, Ներսէս վարդ. Դանիէլեան, Կորիւն վարդ. Եսայեան, Մեսրոպ Նարդ. Նարոեան, Զապէլ Ասատուր (Սիպիլ), Զապէլ Եսայեան, Պերճուհի Եսզընեան, Ալպոյաճեան Արշակ Անտոնեան Արամ, Ասատուր Հրանտ, Գազանճեան Յովհաննէս, Դաւթեան Սմբատ, Եազըճեան Նուպար, Թէոդիկ, Ինճէ-

եան Արմենակ, Ծայրեան Մինաս, Ճէճիզեան Բրօֆ, Յակոբոս, Մրմբրեան Յարութիւն, Յարութիւնեան Արտաշէս, Յարութիւնեան Յովհաննէս, (Թլխատինցին), Յարութիւնեան Վահան, Նազարեան Հրանտ, Ուղուրեան Միհրան, Չիֆթէ-Սարաֆ Օննիկ, Չիթճեան Տիգրան, Չիլինկիրեան Ռուբէն, Պարսաւեան Մերութան, Սամիկեան Ռօտօլի, Տէմիրճիպաշեան Եղիա, Տ. Ստեփանեան Տօքթ. Յովսէփ, Տ. Յակոբեան Արրահամ, Փանոսեան Աղեքսանդր, (Ալիբաղան), բացի պատահական աշխատակիցներէ: Մասիսի բաժանորդագրութիւնը պարզեւաւոր է, և նոր բաժանորդներ ձրիարար կը ստանան Մասիսի հրատարակչ նուէրները. (Տեսնել այս տարուան մեծարժէք պարզեւր և բաժանորդագրուիլ փութալով նպաստաւորուիլ անկէ): 60 զրո: բաժանորդագինի մը փոխարէն այս տեսակ գրական հրատարակութեան մը ընթերցումէն անմասն մնալը ճշմարիտ զրկանք մըն է:

Բաժանորդագրուելու համար դիմել Յնովք Արմէնի Հասցէ. Պապը Ալի ճատոտէսի, թիւ 38:



Կ Ի Ն Ը

Հեղինակ ԵՆՈՒՎ: ԱՐՄԷՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Ն Կ Ա Ր Ծ Ի Ք Ն Ե Ր Ը

Այս անգամ պատմութիւններու ամփոփոյթով մը կը ներկայանայ Յնովք Արմէն: Այս գիրքով չէ՛ որ պիտի հաստատէր սա ճշմարտութիւնը թէ՛ իր գրողատի, քննախոյզի կարողութիւններուն կը միացնէ վիպողի տաղանդը:

Սրբեկեան Մամուլ

Կինը բացի իր գրական արժէքէն, տպագրական տեսակետով ալ ուշագրաւ նորութիւններ կը պարունակէ: Ճաշակաւոր ու սիրուն հատոր մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարդալալու:

Արեւելք

Ենովք Արմէն (Կինը մէջ) կ'զգուշանայ այն միւս գրականութենէն, կ'զգուշանայ անարեւ մեծ սենեակներու վարագոյրներուն ետին դալկացող կեանքէն: Իր ուզածը գուրսի կեանքն է, կեանքը, գլխագրով, արեւին տակինը, իր յորդ այլազանութեան մէջ. ու նաեւ, իր մօտ փառարանող մը կայ մարդկային սկզբնական վաղնջական բնազդներուն, զոր երկինք կը հանէ, գլխագրով մը: Ենովք Արմէն յստակօրէն sensualiste է, առանց որ և է անպարկեշտութեան:

Բիւզակի Ռոմ

Անշուշտ ամէն գրասէր պիտի փափաքի ունենալ Յնովք Արմէնի այս հրատարակութիւնը, Կինը, գրական գեղեցիկ վայելք մը ըմբռնանելու համար:

Բիւրակն

Կինը, հեղինակին գրչի այդ առաջնեկ զաւակը, նորութիւն մըն է իբր յղացում:

Լոյս

Կինը իր գրական արժանիքին կը միացնէ տպագրութիւն մը հիմնապէս առթիւթիք ու բարձրովին նոր ճաշակով, որ կը յատկացնէ Կինըին համակրելի հեղինակը:

Փաղիկ

Երկտասարդ հեղինակը, որուն գրուածքները այնքան հաճոյքով կը կարդացուին օրաթերթերու և պարբերական հանդէսներու մէջ, այս անգամ իր մտածումները խտացուցած է սիրուն ու կոկիկ հատորի մը մէջ, որուն տպագրութիւնը, թուղթին ազնուութիւնը և գեղեցիկ ճաշակը հաճոյքը կը պար-

գեւէ ընթերցողին ունենալու անկէ հատ մը : Ձեր-
մապէս յանձնարարելի է այս գողտրիկ հատորը :

Հանրագիտակ

Իր ընդհանուր հանգամանքով ԿԻՆԸ կարգացուե-
լու արժանի գիրք մըն է , լաւագոյն աշխատութիւն-
ներէն հեղինակին :

Մանգումե

Գին 5 ղրուշ : Կը գտնուի ամէն գրավաճառի քով :



S

Պատիւ ունի՞մ Ձեր ազնուութեան ուշադրութիւնն
հրաւիրել հետեւեալ հրատարակութեանցս վրայ , դ-
րոց իւրաքանչիւրը գնահատուած է իրրեւ կարեւոր
և օգտակար՝ հեռնհաս անձնաւորութեանց կողմէն :

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅՅԵՐԷՆԷ-ԱՆԳԼԻԻԲԷՆ

Սոյն բնագրանը պատրաստուած է մեծ խնամքով
և գլխաւոր հետեւողութեամբ Websterի հոյակապ
Բառգիրքին . կը պարունակէ աւելի քան 40,000 բառ,
ոճ , աստիճիւնք , եւայլն :

Անհրաժեշտ Անգլիերէն սովորողներու և գիտցող-
ներու միանգամայն : Գին 35 դահեկան

ՉՈՐԵՔԼԵԶՈՒԵԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅՅԵՐԷՆ-ԳԱՂՂԻԵՐԷՆ-ԱՆԳԼԻԵՐԷՆ-ԳԵՐՄԱՆԵՐԷՆ

Սոյն կարեւոր գիրքին շնորհիւ կարելի է քիչ
ժամանակի մէջ սահուն կերպով խօսիլ և թղթակցիլ
վերոյիշեալ լեզուները :

Չորեքլեզուեան խօսակցութիւնը անհրաժեշտ է
ոչ միայն ամէն դպրոցականներու , ըլլան արական ,
ըլլան իգական սեռէ , այլ և բոլոր չափահասներու

և գործի մարդոց համար , որովհետեւ իր մէջ կը պա-
րունակէ բոլոր կարեւոր խօսակցութիւնները առեւ-
տուրի մէջ , այցելութեանց , ճամբորդութեանց ժա-
մանակ , այլ և այլ արհեստաւորաց հետ , ևն . , ևն . :

Ի մի բան չորեքլեզուեանը այնքան պէտքի գիրք
մ'է որ անհրաժեշտ է որ ամէն ուսանող և չափահաս
անձ , վաճառական , դասատու , գրագիր ևայլն , հատ
մը ունենայ գրպանը : Գին 12 դահեկան

ՅԱՆԳԱՐԱՆ ՆՈՅՆԱԶԱՅՆ ԵՒ ՆՈՅՆԱՅԱՆԳ ԲԱՌԵՐՈՒ

Սոյն գիրքը մեծ կարեւորութիւն ունի յանգաւոր
ոտանաւորներ շինելու համար որովհետեւ անով՝
գործը բոլորովին կը դիւրանայ . ուստի յանձնարա-
րելի է իրրեւ լաւագոյն առաջնորդը : Գին 4 դահեկան


ԺԱՄԱՆՑ ԿՍՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԵՐ

Սոյն գիրքը ընտանեկան անմեղ զբօսանքներու
հաւաքածոյ մը ըլլալով՝ անհրաժեշտ է ամէն տան
համար . անով՝ թէ մեծերը թէ փոքրերը կրնան
զբօսնուլ երեկոյները . ժամանցի շնորհիւ երեկոյթի
ժամերը կը սահին առանց զգալի ըլլալու ըլլալու :
Գին 5 դահեկան

Վերոյիշեալ գիրքերը կը ծախուին բոլոր գրավա-
ճառաց և աշխատասիրողին քով :

Յուսալով թէ պիտի բարեհաճիք պատուել զմեզ
Ձեր յանձնարարութեամբը՝ հաճեցէք ընդունիլ մեր
խորին յարգանացը հաւաստին :

Զ. Ց. Ս. ՓԱՓԱԶԱՆ



ՏՊԱՐԱՆ ԶԱՐԵՅ Ն, ՊԵՐՊԵՐԵԱՆ

1880, Հիմնադիր ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ, 1880

[Կ. Պոլիս, Պապը այի հասսեսի, թիւ 38]

ՏՊԱՐԱՆՍ, որ իր հանդուցեալ հիմնադրին վարչութեան տակ հրատարակչական ու տպագրական խիստ բեղմնաւոր շրջան մը բոլորած է, կը շարունակէ իր գործառնութիւնները, ա՛լ աւելի ընդարձակելով զանոնք և իր յարաճուն յաճախորդներուն տպագրական ու գրեթեական պէտքերը կարենալ գոհացնելու համար նոր կարգադրութիւններ ըրած է:

Տպարանիս գրադուժը եղած զանազան ճիւղերուն վրայ, որոնք պարզուած են ի ստորեւ, ո՛ր և է հարցումի կը պատասխանուի անմիջապէս և ամէն տեսակ անզեկութիւններ կը տրուին, ինդրուդներուն նմոյշներ, գիւնք, ընդհ. հաշիւներ կը զրկուին առանց ու և է ծախքի, նոյն իսկ նամակի ծախք ալ չպահանջուելով:

Տպարանիս եղած ո՛ր և յանձնարարութիւն անմիջապէս կը պատրաստուի և եթէ կարելի է, յաջորդող թղթատարով կը զրկուի: Փոխարժէքը տարանքը ընդունուելէն ետքը կը վճարուի: Թղթատարի ծախքը, մանր ծրարներու համար, կը վերաբերի յաճախորդներուն, իսկ երբ գօյի-բօսթալ մը լեցնելու չափ ըլլայ (քիւօնոց ծրար մը), ճամբու ծախքը Տպարանս կը վճարէ:

Տպարանիս գործառնութեան շրջանակը ընդարձակելու և յաճախորդներուն թիւը ա՛լ աւելի բազմացնելու համար նոր յաճախորդ ներկայացնողին պիտի տրուի լեցունիկի շահաբաժին: Գաւառի գլխա-

ւոր քաղաքներու մէջ պատուաւոր գործակալներ կը խնդրուին, որոնք խիստ նպաստաւոր պայմաններով պիտի գործեն Տպարանիս հետ:

Տպարան. — Կը կատարէ գրքի ու մանր մունր ամէն տեսակ տպագրական գործեր, մաքուր, ճաշակաւոր և աժան, Խելացութիւն չէ սուղ տպարաններ դիմել կարծելով թէ մաքուր գործ կը շինուի. փորձով ալ հաստատուած է որ միւսնոյն գործը հաւասար մաքրութեամբ մեր Տպարանին մէջ ալ կը պատրաստուի կէստակէս աժան դիմով: Յաճախորդը ազատ է յանձնարարութիւնը չընդունիլ եթէ արդարացի թերութիւն կը տեսնէ: — Անոնք որ գիրք մը ունին տպագրել տալիք, թո՛ղ մինակ ձեռագիրները զրկեն մեղի. անկէ ետքը առանց ո՛ր և է աշխատութեան միջամտիս ըլլալու կ'ընդունին կողմուած և ծախուելու պատրաստ գիրքեր: Մենք կ'ստանձնենք Մէարիֆի եւ Ուս՛, Խորհրդոյ կողմէ վաւերացնել տալու աշխատութիւնը, թուղթի հայթայթումը, փորձերուն սըրբադրութիւնը, տպագրութիւնը, կազմը և դիրքը ծախելու բոլոր գործողութիւնները: — Եթէ գաւառացի հեղինակներ կ'ուզեն հասկնալ թէ իրենց երկը ո՞րքան ծախքով կը տպագրուի, կը բաւէ որ նամակ մը գրեն մեզ, միասին զրկելով ձեռագրէն երկու էջ, և յայտնեն թէ այդպէս քանի՞ էջ կը պարունակէ ձեռագիրը, քանի՞ օրինակ պիտի տպագրուի, ի՞նչ տեսակ թուղթ պիտի գործածուի, դիրքը ո՞ր գրքին ձեւով պիտի ըլլայ և կազմը ի՞նչ տեսակ: Անմիջապէս մանրամասն հաշիւ մը կը զրկենք իրենց, բոլոր կարելի եղած անզեկութիւնները տալով:

1907ի ընթացքին մէջ տպարանիս մէջ տպա-

գրուած են Քասիմի Տուկէն ներքը. Տիկ. Փ. Հազարապետեանի Պարտէզ բարոյական ու գործնական դաստիարակութեանը, Մ. Պարսամեանի ատրանճի ծաղիկները, Մ. Գալէնաէրեանի Եւայի Բ. հատորը, Մ. Թապազեանի Հանդէս Հայ գրականութեանը, Ա. Նիկողոսեանի Բնական գիտութեան Միջին դարերի թայքը, Գ. Մարգարեանի Ընդհ. ազգաց պատմութեան Միջին դարերի թայքը, Յ. Կ. Մրմրեանի Սուսերէ հին դեմքերուն, Վ. Մարգարեանի Ոսկեմասուցիկը, Նշան Կ. Պէրպէրեանի Ժողովրդական Տարեցոյցը, Պէրնարաէն առ Ս. Բիէպի Օսմ. թարգմանուած Պիր Բլաչիւս սեփեմեմէն, Մ. Աբրիհեանի Լէրաիճի ատարը, Պ. Կարապետեանի Հայ. Օսմ. բառարանը և Բէհնիմաշի գրապրը, լայնածառը Բիւրակն եւ Փուճը շարաթաթերթերը, դպրոցական Ծրագիրներ ու Վիճակացոյցներ, բոլոր Օսմ. թատերական խոսքերուն ներկայացումներու բրոյիւրամներն ու ազդերը, Յ. Էսկիեանի Պատկերագրող Քերականը:

Հրատարակչատուն. — Իբր Տպարանի սեպհական գիրքեր՝ հրատարակ ելած են՝

- 1. Բաղաբական Տնտեսագիտ. (Մ. Քէչիչեան) 10
- 2. Պարտէզ Բարոյական և Գործնական Դաստիարակութ. (Տիկ. Փ. Հազարապետեան) 4
- 3. Տունէն Ներս (Քասիմ) 3 20
- 4. Պատրանքի Ծաղիկներ (Մ. Պարսամեան) 5
- Իսկ մամուլի տակ են և հետզհետէ պիտի հրատարակուին՝
- 5. Նորհրդաւոր Աղջիկը (Քասիմ) 7 20
- 6. Սուսերք հին դէմքերու (Յ. Գ. Մրմրեան) 5
- 7. Մանկական Պարտէզ (Կ. Պալապան) 3 20

- 8. Ուսուցանելու Մէթոտը (Յ. Թ. Հինդլեան) 2
- 9. Հօք ու Մօր Առաջնորդը (Հ. Պէրպէրեան) 3
- 10. Ժողովուրդին գիրքը (Քասիմ) 3
- 11. Նոր Դասընթացը Գիտութեան, Տարրական
- 12. > > > Միջին

Տպարանս կ'ստանձնէ նաեւ օգտակար գրքեր և դասագիրքերու հրատարակութիւնը խիստ շահուէտ պայմաններով:

Գրախմբատուն. — Կը կատարէ գիրքերու յանձնարարութիւններ՝ ամէն տեսակէ և ամէն լեզուէ՝ գրական գիտական, վիպական, բանասիրական, կրօնական, Հեղինակներու և հրատարակիչներու հետ սովորաբար բերութեան մէջ ըլլալով մեծագոյն զեղչը կարող է տալ իր յաճախորդներուն: Ուղուած գիրքն ոչնչութեամբ կը գրկէ. յաճախորդը իրաւունք ու փոփոխուած գրքին փոխարժէքը չվճարել: — Պոստ մէջ հրատարակուող բոլոր օրաթերթերուն, շաբաթաթերթերուն և պարբերականներուն բաժանորդարձանագրէ: Այն հեղինակները որոնք իրենց գիրքերուն համար կեդրոնատեղիի մը պէտք ունին, սմենայն վստահութեամբ կրնան մեր Տպարանը ընտրել ինչպէս յանձնարարողչէք մը տալով և ամէն վայրէջան իրաւունք ունենալով հաշիւ պահանջելու:

Փորագրատուն. — Կը կատարէ տոտարագրագրութիւններ, քառյուէ կնիքներ, կազմանոց պատրաստութիւններ, կ'ստանձնէ մանաւանդ լուսատիպ քիչէներու, քարտէսներու պատրաստութիւնը:

Կազմատուն. — Կ'ստանձնէ ամէն տեսակ տոմարի՝ թղթակազմ, խաւաքարտակազմ, սուրբ կազմ, կաշեկազմ, ոսկեզօծ և լիւքս կազմեր՝ ամենանորը ճաշակով և խիստ աժան գիններով:

13836
13837